Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported** (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

9621
9622
9623
9624

891·99
12-15

30

# Ա. ԼԱՄԱՐԴԻՆԵԱՅ

## ԱՌԱՋԻՆ

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆՔ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ՍԱՄՈՒԷԼ Ն. ԳԱՆԹԱՐԵԱՆ

*Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ*

ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

1876

# Ա. ԼԱՄԱՐԴԻՆԵԱՅ

## ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆՔ

# ԱԼՓՈՆՍՈՍԻ ԼԱՄԱՐԴԻՆԵԱՅ

84

ԱՌԱՋԻՆ

# ՄՏԱԾՈՒԹԻՒՆՔ ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆՔ

---

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Հ. ՍԱՄՈՒԷԼ Կ. ԳԱՆԹԱՐԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆՑ

ՎԵՆԵՏԻԿ
ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ
1876

2348

76 24-57

# ՈՂՋՈՅՆՔ ՀՐԱԺԵՇՏԻ

## ԱՌ ՎԱՐԺԱՐԱՆՆ ՊԵԼԵՑԱՑ

Վա՜յր ուղղութեանց, յոր ես ուսայ դեռ մանկիկ՝
Ջերկիւղ վերնոյ և զառ մարդիկ գութ սիրոյն,
Ուր զերծուցի զանմեղութեանս իմ ծաղիկ,
Ընկա՛լ զարտօսր իմ և զողջոյն։

Վաղ յոյժ թողում ըզքեզ. և կուրս հողմընթաց՝
Ցաւօք լըքեալ զինքն 'ի բախտին հաճութիւն,
Երթեալ տայ զանձն յալիս օտար կոհակաց,
Անղեակ, հեռի յափանց ծովուն։

Ո՛վ դուք, ոյց խնամք և խրատք և գութ գորովոյ՝
Ընդ ռահ բարեաց զիմս յածէին քայլ դողդոջ.
Սիրուն համբակք իմաստութեան սիրելւոյ,
Ըզձեզ ընդ հուպ այլ տեսից ոչ։

Ոչ ժըմնեսջիք ներող սըրտիւ զուարթադին
Ընդ սուրբ վայելս անմեղութեանս հաճոյից.
Եւ 'ի հեծել հոգւոյս բեռամբ ցաւագին,
Ըսփոփեսջիք ոչ զիւր թախիծ։

Ի ծուփ կըրից և 'ի մըրրիկ փոթորկի,
Թէ յօրինաց ձեր զիս շեղէ թափ նոցին,
Ի սըրտիս խորս իցէ ձեր դէմք կենդանի՝
Փոխան ձայնիդ ինձ լինէին։

Բըղխեցուցեալ՝ յաչացս արտօսր զըղջման,
Արկցեն 'ի սիրտ իմ փըրկաւէտ ապաշաւ,
Եւ խօլ ցընորք ավերաատն մոլութեան՝
Լուեսցեն ձերովդ յիշատակաւ:

Մըտերմութիւն քաղցր, եկ ընկալ զյարգանս իմ.
Ես 'ի քո գիրկս յըստոյգ փայելս ըզբօսայ:
Գըթած և խիստ աստուածն՝ որ մնայ ինձ յուղին,
Միայն հառաչս արձակել տայ:

Մանուկդ յողդողդ, ո՛հ, մի՛ զհոգիս հարկաներ
Ի վտանգաւոր քոց կապարճիցդ 'ի փըքին:
Ցանկամ զի պարոք հաստատեսցեն զիմ ըղձեր.
Սիրել անգամ մի սոսկ կամիմ:

Այսպէս մարդեալ առոյգ հասակս 'ի բարիս,
Գըտանիցէ միշտ անդ 'նեցուկ 'նորածին,
Ըղձանապարհ անքոյթ ընդ ծով աշխարհիս,
Եւ զերն ըզյոյս 'ի տապանին:

Նուաղեալ հոգիս 'ի տարրեաւ հուսկ շնչոյս,
Տացէ օրհնիս բարերարաց ինձ մարդկան.
Եւ կըրկնեսցես 'ի կիսաս      իմ շըրթունս
Ըզսիրելի անուանցըն ձայն:

---

# ՄԻԱՅՆՈՒԹԻՒՆ

Յաճախ 'ի լեառն ընդ ծեր կաղնւոյն հովանեաւ
Ի մուտս արփւոյն 'նըստիմ տըխուր թախծագին.
Եւ այսր և անդր յածիմ իմ աչքս ըզդաշտաւ,
Ուր յեղյեղուկ պարզի պատկերն առ ոտս իմ:



Աստ կարկաջէ վըտակն ալեօք փըրփրածին,
Եւ զեռալով ծածկի 'ի մութ խորշս հեռիս.
Անդ խաղաղ ջուրք լուռ լըճակին ծաւալին,
Մինչ երեկոյն աստղ ամբառնայ ընդ երկինս:

Ցանտառախիտ և 'ի մըթին սար լերանց
Դեռ վերջալուսն ըզհուսկ 'նըշոյլ իւր սփռէ.
Եւ միգապատ կառք գըշխոյին ըստուերաց
Ցելսն անդ ըզծագս երկնից 'ճերմակ 'ներկանէ:

Անդուստ ըլացեալ 'ի գոթացի սուր ծայրից
Մըրմունջ վըսեմ ընդ օդս 'ի վեր ծաւալի.
Կայ ուղեւորն. և գեղջականըն պըղինձ
Խառնէ սուրբ վանգս ընդ տըրընջեանն հուսկ ձայնի:

Բայց քաղցրագեղ պատկերդ յոգիս իմ անփոյթ
Զազդէ եռանդն և ոչ ախորժ զարմանաց.
Դիտեմ զերկիր իբրև զոգի թափառոտ.
Ոչ ջեռանին մեռեալք յարև կենդանեաց:

Բըլրոյ 'ի բլուր զաչս իմ յածեալ ընդունայն,
Ցելից 'ի մուտս, 'ի հարաւոյ ընդ հիւսիս՝
Ցանբաւութեան բերիմ ընդ խորշս ամենայն,
Եւ Չէք, ասեմ, ուրեք յուսալ ինձ բարիս:

Զի՞նչ ինձ այս ձորք, պալատքդ և հիւղք աւանիցեն.
Համայն մնաեք, որք ոչ ածեն ինձ փափաք:
Վըտակք և ժայռք, անտառք, լուռ վայրք, զոր սիրեմ,
Ի պակասել միոյն, ինձ մերկ են բընաւք:

Ի ծագմանէն ցաւարտ արփւոյն շըրջանի՝
Անայլայլակ աչօք զընթացըն դիտեմ.
Մութք իւր և ելք 'ի պարզ կամ մութ եթերի՝
Ուսմքէս են ինձ. յուսուրց ես ո՛չ ինչ խընդրեմ:

Ընդ լայն շաւիղն յառել կարող երբ լիցիմ,
Աչք իմ թափուր և մերկ տեսցեն զամենայն.
Ոչ փափաքեմ որոց 'ի շող իւր փայլին,
Եւ ոչ յանհուն տիեզերաց ինչ ցանկամ:

Սակայն թերեւս անդր ընդ գընտոյն իւր ընդ ծիր,
Ուր այլ երկինս լուսաւորէ բուն արփին,
Թէ գայր հընար թողուլ զմարմինս իմ յերկիր,
Ցանդ երազեալն յինէն դիպեր անդ յաչս իմ։

Անդ զիս զուարթ առնէր աղբիւրն անձկալի.
Եւ զլոյս, ըզսէր գըտանէի ես անդրէն,
Եւ ըզմտաւոր բարին, ոգւոց ցանկալի,
Որ չէք անուն աստէն 'ի յարկս հողեղէն։

Հիմ չըկարեմ յարշալուսոյն ելեալ կառս՝
Սլանալ առ քեզ, ըղձիցս աղօտ նըպատակ.
Առ ինչ դեռ կամ յաքսորանաց աստ 'ի վայրս.
Չունի երկիր ընդ իս ինչ մասն հասարակ։

Յորժամ տերեւք ծառոց ընդ մարգ թօթափին,
Երեկոյն հողմ վարէ զնոսա ի հովտաց.
Եմ եմ և ես իբր ըզտերեւ մի ոստին.
Հանգոյն և զիս տարայք, ամպրոպք մըրըրկաց։

---

# ՄԱՐԴՆ

## ԱՌ ԼՈՐՏ ՊԱՅՐՆ

Դու, զոյր չգիտէ աշխարհ ճըշգրիտ դեռ զանուն,
Խորհըրդաւոր միտք, մարդ, սատան կամ զուարթուն.
Ո՞վ և ես, Պայրն, ոգի բարւոյ կամ չարի,
Սիրեմ զերգոցդ յարմարութիւն վայրենի,
Որպէս սիրեմ զբարբառ հողմոց, կայծականց,
Ի սաստ մըրըկին խառնեալ ընդ ձայնս հեղեղաց։
Յարկ քո՝ գիշեր, և տէրութիւնդ՝ արհաւիր։
Սապէս խոտեալ արծիւ՝ դաշտաց պետն՝ ըզդիւր,



Լոկ զառապար ժայռս ախորժէ քեզ հանգոյն,
Զոր չանթն եհար, և ձմեռն արար ձիւնագոյն.
Կամ ըզծածկեալ ափն ի նաւաց բեկորոց,
Եւ կամ ըզդաշտ՝ 'ի ճապաղիս արեան հոծ.
Եւ մինչ թըռչունն վըշտաչարչար, ողբանուէր՝
Յօրինէ զբոյն իւր 'ի ծաղկունս, ջուրցն յեզեր,
Նա զահընկէց ճախրեալ բարձանցքն Աթոսի,
Զկողիւք լերանց բունեալ՝ յանդունդըս կախի.
Եւ անդ միայն ընդ մէջ մարմնոց չընչասպառ,
Ու ի թուխ արեամբ միշտ թաթաւեալ քարաժայռ,
Ի ճիչ որսոյն գըտեալ զվայելս հեշտութեան՝
Հանգչի զըւարթ 'ի շունչ մըրըկին 'ի տատան։

Քան զհէնդ օգոց և քեզ իսկ, Պայրն, ոչ ընդհատ
Երգ քաղցրաձայն՝ թըւի գոչումն յուսահատ։
Դեռ կաս չարեաց, մոլեալ յըստանդըս մարդկան.
Աչք քո զանդունդըս չափեցին զերդ Սատան,
Յոր խորասոյզ հոգիդ՝ թողեալ զլին և զլոյս,
Զանդառնալի ողջոյնն յետին ետ առ յոյս։
Հանգոյն նորին արդ անդընդոց լեալ իշխան
Անյաղթ քոյ միտք՝ պարզեալ 'ի նուագ ողբական,
Յաղթանակեն. և ձայնդ 'ի կերպ դժոխային
Փառաբանէ ըզժանտ աստուածըն չարին։
Այլ ո՞ր օգուտ ճակատագրին կըռուել դէմ.
Առ բախտըն զի՞նչ խաթարեալ միտք զօրիցեն.
Կայ նա հանգոյն աչաց յանձուկ սահմանի.
Մի ըղձըր զակն և զմիտս արկցես ինչ հեռի.
Ըստ այդր համայնք խուսեալ նըւաղ պակասեն։
Ամփոփ սահմանդ եղաւ քեզ չափ յԱնեղէն.
Զիարդ. առ ինչ. և ո՞ գիտէ. այն հըզօր
Էարկ զաշխարհ և զեղականըս բոլոր,
Որպէս սըփռեաց ըզհող յերեսըս դաշտաց,
Կամ ըզգիշեր և զլոյս ընդ օդըս ցանեաց։
Գիտէ, շատ է. նորա տիեզերք են հանուր.
Իսկ մեք ունիմք լոկ մեզ ըզլոյս այսր աւուր։
Այն են յանցանք մեր, զի եմք մարդ, և քննեմք.
Զգիտել, պաշտել. այս էութեանս են օրէնք։
Խիստ, Պայրն, է բանս. յերկար կացի 'ի վարան.
Այլ հիմ նըհանջել ճըշմարտութեանն յանդիման։

Փառք առ Էին՝ է գործ ձեռաց գոլ նորին,
Ըզգալ, սիրել ըզգերութիւնդ երկնային.
Եւ տկար փոքր տիեզերացն 'ի կարգի,
Զաղատ քոյ կամս վարել նորայն ըստ մըտի,
Լինել ծընունդ խորում մըտաց գիտութեան,
Եւ զինքն 'ի քումդ եւեթ պատուել էութեան:
Այս քոյ պայման: Ո՜հ, մի՛ ըզնա զըրպարտեր.
Համբուրեա՛ զլուծ, զոր խորտակել քեզ իղձ էր.
Ի՛ջ յաստուածոց կայից՝ զոր խրոխտ կապտէիր.
Լաւ, մեծ, բարի է ամենայն 'ի կարգ իւր:
Ցաւս հաստողին զանբաւութիւն՝ որդն ինքնին
Արժէ զաշխարհ. այնքան է մեծ գին նոցին:

Զօրէնդ առնս արդարութեանդ հակառակ.
Թըլի աչացդ իբրեւ ցընորք այլանդակ,
Եւ կամ զարան, ուր միտք զայթին առ մին քայլ:
Դաւանեցուք, Պայրն, ոչ 'ի քնին զայն արկեալ:
Ըզմիտս հանդոյն քեզ պաշարէ մութ խաւար.
Եւ ոչ ինձ անկ պարզաբանել քեզ զաշխարհ.
Թո՛ղ զայդ պարզել տիեզերացս հաստողին:
Որչափ քըննեմ զանդունդս, աւա՜ղ, մոլորիմ.
Ընդ ցաւ եւ ցաւ յերկրի զօդեալ կայ շաղկապ.
Որ յաջորդէ զօր եւ տագնապ ըզտագնապ:
Յիւրում ընութեան ամփոփեալ մարդ, յիղձսն՝ անհուն,
Անկեալ աստուած ոմն է, յիշող երկնայնոյն,
Թէպէտ 'ի հին իւրոց փառացն անժառանգ,
Ըզկորուսեալ բախտին կայցի զյիշատակ.
Կամ անսահման խորք բաղձանաց իւր սըրտի՝
Հեռուստ գուշակ լիցին շըքոյն ապառնի:
Մեծն 'ի զաղտնիս է մարդ թերի եւ տըկար:
Կապեալ 'ի բանտ ըզգայութեանցն աստ յաշխարհ,
Ի գերութեանն՝ յազատութիւնն է կըրկաթ.
Ի հեքութեանն ըղձայ կենաց բարեբաստ.
Խընդրէ քըննել զաշխարհ, այլ աչքն են անզօր.
Ցանկայ սիրել միշտ. սիրեցեալն՝ աղցաւոր:
Մարդն յԵդեմայ տարագրելում նըման դոյ,
Որ յերկնաւոր դրախտէն մերժեալ յԱստուծոյ,
Աչօքն ըզծիր չափեալ դըժնեայ սահմանաց,
Նըստաւ առ դրօքն արգելելովք յողբ ու 'ի լաց:



Լըսէր հեռուստ յաստուածեղէն օթեւանս
Զանմահական սիրոյն ըզքաղցըր բարբառս,
Ըզգըւարթ ձայնս եւ զսուրբ նըւագ զըւարթնոց,
Որք օրհնէին զԱստուած անդէն յիւրն 'ի ծոց.
Եւ զակն հաղիւ հազ բաժանեալ 'ի յերկնից,
Ընդ իւր վիճակ դարձուցանէր սարսափից:

Թըշուառական որ 'ի յաքսոր իւր կենաց
Լըսաւ ըզնուագս այնր աշխարհի բազմաբաղձ:
Բերի բնութիւն իրականին հակառակ՝
Զխմանալոյն զոյգ ընդ անուըն ըզճաշակ.
Ի հնարաւորըն վերբերի յերազին.
Ի իրականին անձուկ, անհուն՝ մարթելին:
Հոգին անընչմամբք ըզբնակութիւն կազմէ անդ,
Ուստի յորդեն մինչ խաղաղ սէր եւ իմաստ.
Ուր յովկիան գեղեցկութեան եւ լուսոյ՝
Միշտ մարդն յագեալ, ըզգայ զպատուք ծարաւոյ.
Ուր ըզմայլեալ յանդուլ անուրջ այսպիսի,
Ինքն իսկ անձինն անճանաչող է յարթմնի:

Եղո՛ւկ, այս բախտ քոյ էր, սոյն իմս է վիճակ.
Ըզթուռնալից արբի հանդոյն քեզ բաժակ.
Անտես իմ աչք հանդոյն քոյոցըդ բացան.
Ըզտիեզերաց բան խընդրեցի յընդունայն.
Հարցի զպատճառ իւրեանց առ էքս համօրէն.
Առ արարածն հարցի զիւրմէ վախճանէն:
Զաչս ընկըղմեալ յանյատակ վիհ խորասոյզ,
Յարփւոյն ցըստարըն խընդրեցի հետախոյզ.
Զժամանակօք անցեալ՝ ելի դար ընդ դար.
Մերթ ծովս հատի, լըսել զգիտնոցըն բարբառ.
Սակայն երկիր առ հպարտն է փակ ինչ մատեան:
Մերթ գուշակել խընդրեալ զաշխարհն անկենդան,
Խուսեալ հոգւովս 'ի ծոց բնութեան, կարծեցի
Յաղօտ բարբառ լեզուին գտանել իմաստ մի.
Քըննեցի զկարգ՝ որով երկինք շուրջ բերին.
Ի շողշող կայս Նեւտոն հորդեաց ինձ զուղին.
Զմոխիր կործան աըքայութեանց յուզեցի.
Հաւիմ զիս եռեա սուրբ գամբանացն 'ի միջի.
Խառնեալ ըզցուրտ հանգիստ ոգւոց արքայազգեաց,

Յիմ կըշռեցի ձեռս ըմբըշխար դիւցազանց ·
Երթեալ կըրկին հարցանէի սին փոշւոյն
Զանմահ կենաց , որում յուսայ մահացուն :
Եւ զի՞նչ ասեմ· հուպ մեռելոյն յանկողին ,
Յառկայծ իւր աչս ըղձոյն իմ աչք խընդրէին :
Ի սարս հարեալս 'ի յաւէժ ձեանց յերփն 'ի սեւ ,
Յալիս հերձեալս 'ի մըրըրկաց յորասեւ ,
Զայնարկելով գնայի տարերցն 'ի բախումն :
Համարեցայ թէ յայդ տեսիլ նորագոյն ,
Զերդ Սիբիլյան մոլեալ յաւիտն՝ նայադէս
Յիւր պատգամաց ընութիւն տացէ ինչ առ մեզ :
Քաղցր էր ընդ մռայլ այն արհաւիրս առնել մուտ .
Այլ վայրապար յանդորրութեան ու 'ի զայրոյթ ,
Յուզեալ զգաղտնիսն , և ոչ եղեալ վերահաս ,
Ամենուրեք տեսի զԱստուած որ անհաս :
Տեսի զբարին , ըղձար յախուռն՝ անընտիր
Բերեալ ըստ դէպ և 'ի ծոցոյն թափեալ ցիր ·
Տեսի չարիս անդ՝ ուր էր մարթ բարւոյ ինչ ·
Որում չեղեալ հասու , գըտայ հայհոյիչ ·
Եւ բեկեալ ձայնս ընդդէմ երկնից պըղըղձի ,
Գըրգռել ըղձախառն անգամ չեղև արժանի :

Իսկ մինչ երբեմն յիմս ընկըղմեալ հիքութեան ,
Զերկինս յերկար թախանձեցի ընդունայն ,
Էջ 'ի բարձանց 'նըշոյլ լուսոյ 'ի հոգիս ,
Եւ զանիծեալն յինէն յօրհնել գըրգեաց զիս ·
Եւ անսացեալ մտադիր ազդմանն յիս շընչոյն ,
Ի բամբռանէս թըռեաւ բանին օրհնութիւն :

« Փառք քեզ յաւուրս ժամանակաց և յաւէտ ,
Յաւիտենից բան , հաճութիւն վեհաւէտ .
Քեզ , որ երեսք՝ անբաւութեան են ծանօթ ,
Զոր էութիւն պատմէ ամէն առաւօտ :
Առ ես իջեալ խոնարհեցար շունչդ հաստիչ ,
Եւ քեզ հանդէպ երևեցաւ որ չէրն ինչ :
Ծանեայ զբարբառդ , ոչ ծանուցեալ դեռ զանձն իմ.
Վերասլացայ մինչև 'ի դրունս անդ Էլին :
Աւասիկ ես . ոչէն ծընեալ՝ տայ ողջոյն .
Աւասիկ կամ. զի՞նչ եմ. հիւլէ մի խոհուն :



Ո՞վ ըզխըռովս մեր չափեացէ զերկոցուն :
Ինձ , որ շընչեմս 'ի քեզ ըղձունչս անկայուն ,
Յանդէտս անձին կերպագործեալ ըստ քոյ կամս ,
Զի՞նչ պարտիս , տէր , մինչ չև առեալ իցեմ կեանս .
Ո՛չ ինչ յառաջ , ոչ յետոյ . փառք , հուսկ վախճան .
Որ ինքն ըղձանաւս արար , է իւր ամենայն :
Ճարտարապետ մեծ , ընդ վաստակ քոյ բերկրեաց .
Կամ ես 'ի լոյսն իշխանականդ հրամանաց :
Այո , գործեա . 'ի ժամանակս , ընդ միջոց՝
Ըղկայս և զօր իմ 'ի քոյ փառս առ իս ցոյց .
Էութիւնս ոչ արկեալ հարցուած կամ տըրտունջ ,
Ինքնին 'ի կէտ իւր փութացի լուռ և մունչ :
Որպէս ոսկի այդ գունովք 'ի դաշտս անդ ունայն՝
Ըզհետ վարէչ քոյ ըստուերից սիրով գնան ,
Երթայց հանդոյն նոցին ուր մատնըդ տանի ,
Սուզեալ 'ի լոյս կամ 'ի խաւար գիշերի :
Թէ ընտրեսցես զիս՝ աշխարհաց տալ ըզլոյս .
Սրփեալ զնոքօք ըղշող զոր յիս հեղուցուս ,
Սլացայց պատեալ յարբանեկաց լուսալից ,
Եւ 'ի մի քայլ զերկնից անդունդըս հատից .
Կամ թէ 'ի քոյ հեռի վարեալ ձիդ յաչաց ,
Կացուցանես զիս , զանծանօթս արարած ,
Մոռացեալ տարր առ եղերօք ոչընչի ,
Կամ հողմավար իբրև ըզհատ մի փոշի ,
Յիմ բախտ պարծեալ , քանզի դու ինքն ես գործօն ,
Ընդ ինաւ երթեալ զնոյն մատուցից քեզ պաշտօն .
Եւ զքոյ զօրէնս լըցեալ սիրով միապէս ,
Մինչ յոչընչին ծայրս մընչեցից ես . փառք քեզ :

« Ոչ շատ խոնարհ , ոչ բարձր . հողոյ եմ ծընունդ .
Բախտս՝ առեղծուած , և կատարածս է խորհուրդ :
Իցե՞մ ես , Տէր , նըման զընտոյն գիշերի ,
Որ ընդ մըթին ռահ՝ ուր քոյ մատըն տանի ,
Աստի ցայտէ զպայծառութիւն յարատև ,
Անտի սուզեալ կայ ընդ ըստուերս անարև .
Մարդն է կէտ խիստ , յոր անսահմանքն երկոքեան
Ամենազօր կարողութեամբ միացան :
Յայլ պայմանի , թերևս ոչ մինչափ թըշուառ ,
Լինէի ես . . . Այլ եմ՝ զոր դու ինձ մընայր :

Թէպէտ չտեսի, բայց ըզվեհ բան քոյ պաշտեմ.
Փառք արարչիդ · բարի եղեալքն են 'ի քէն :
Այլ ըզնեղեալս յիմ կապանաց լուծ բեռին՝
Ձըգեն արկածք չարք յոչընչէ 'ի շիրիմ:
Ընդ դըժուար ռահս յածիմ ըզցայգն 'ի մըթան ·
Ո՛ւստ գամ՝ չգիտեմ, և յո երթամ՝ չիմանամ:
Ցանցեալ առոյգ իմ ամս խընդրեմ 'ի նմին ,
Որպէս զուղխից ջուր պըղտորեալ յակնաղբիւր :
Փառք քեզ · 'ի լոյս եկեալ, գըտին զիս չարիք ·
Աջ քոյ կալաւ զիս զերդ չընչող խաղալիկ ·
Արտասուելով կերայ ըզհաց դառնութեան,
Եւ արբուցեր ինձ ըզբաժակ բարկութեան :
Փառք քեզ · ձայնիս գոչման դարձուած ինձ չետուր ·
Ցերեկս երկրի դարձուցի զաչըս տըխուր ·
Զարդարութեանդ լոյս խընդրեցի ընդ եթեր ·
Ի պատուհաս իմ ծագեցաւ ինձ այն , Տէր :
Փառք քեզ · առ քեւ անմեղութիւն չէ անբիծ :
Լոկ արարած մի ընդ երկնաւ մընայր ինձ ·
Դու խառնեցեր ինքնին ըզթել կենաց մեր ·
Կեանք իւր՝ իմ կեանքս էին , հոգին՝ հոգիս էր :
Իբրեւ յատոյն կորզեալ պըտուղ դեռ տըհաս ,
Տեսի յիմոց գըրկաց քեցեալ վաղահաս :
Հարուածն հասեալ 'ի քէն ինձ յոյժ ահագին՝
Էջ յամբաշարժ , ածել կըսկիծ ինձ կըրկին ·
Ի մահահոտ դէմն , յոր իմ բախտ նըկարէր ,
Տեսի ըզսէր և զմահ եկեալ 'ի վըսեր ·
Ըզկենաց բոցն 'ի հայեցուածոյն տեսի ,
Որ նըւաղեալ տակաւ 'ի ձեռս օրհասի ,
Դեռ տակաւին առ շունչ սիրոյն արծարծէր ·
Ասէի օր աւուր · Արեւ , ո՛ր մի դեռ :
Զերդ յանցաւոր , որ 'ի մըթան խորասոյզ ,
Եւ կենդանեաւ իջեալ 'ի կայս լըրթնալոյս ,
Հուպ առ վերջին ճաճանչն՝ որ տայ դեռ ըզփոյլ,
Մէտ խոնարհեալ դիտէ զկանթեղըն շիջեալ.
Նոյն կամէի ունել զոգի իւր 'ի սլաց ,
Դեռ խընդրելով ըզնա 'ի հուսկն հայեցուած ·
Շունչն 'ի քոյ գիրկ վերաթըռեաւ , Աստուած իմ.
Անդր ըստ աշխարհ սրացաւ և յոյս ընդ նըմին :
Թո՛ղ զհայհոյանս յանյուսութեանս անդ 'ի պահ ·



Ժըպրհեալ . . . Զըղջամ. փառք հըզօրին զերագահ :
Ըզջուր 'ի գնացս , յընթացս արար ըզմըրրիկ.
Զարև յայրումն , և յանձկութիւն ըզմարդիկ :

« Զայս եւթեանս օրէնս լըցի բովանդակ :
Անսայ բնութիւն ըզգայազիրկ , անտեղեակ.
Ես լոկ 'ի յայտ ըզքեզ ածեալ 'ի հարկին ,
Սիրափափաք պատարագեմ ըզկամս իմ.
Ես եմ միայն՝ որ զխոսութեամբ քեզ անսամ,
Եւ ես միայն՝ բերկրիմ 'ի յայդմ հըլութեան :
Քաղցր ինձ լընուլ ամենուրեք յաւիտեան
Զօրէնս բնութեան և զԱստուծոյն իմ հրաման ·
Պաշտեմ յաւէտ զիմաստութիւն քոյ վըսեմ,
Եւ զհաճութիւն քոյ 'ի տանջանս իսկ սիրեմ:
Փառք քեզ , փառք քեզ · հա՛ր և 'ի չէք զիս փոխեա ·
Զայս լըւիցես միայն · Քեզ փառք յարակայ : »

Այսպէս իմ ձայն ել 'ի կամարըն վերին ·
Նաւ ըզփառս յերկինս՝ որ լից ըզթերին :
Այլ արդ լըռեա՛ , քընար · և դու , յոյր ձեռս կան
Համայն գողգոջ սիրոյ ըզգայնոցըն մարդկան ,
Ե՛կ , Պայրն , հանել անտի յորձանս նըւագաց :
Ճըշմարտութեան վան ըզհանճար ետ Աստուած :
Տարատարօսին երգիչ , տո՛ւր ձայն ընդ երկին ·
Ցանդընդաշարժ երգող և վերինք սըխրասցին :
Թերեւս 'ի ձայն քոյին՝ նըշոյլ վառ բոցոյն
Իջանիցէ 'ի մութ ըստուեր քոյ հոգւոյն ·
Եւ կամ քո սիրտ , 'ի սուրբ եռանդըն բորբոք ,
Համդարտասցի ինքնին երգովքըդ քոյովք ·
Եւ 'ի բարձանց փայլակն ըզմութ քոյ հերձեալ,
Հեղցես ըզմեօք ըլոյսն՝ ըզքեւ փայլ 'ի փայլ:

Ա՛խ թէ սըրինդ քոյ քաղցրացեալ յարտասուս ,
Մընչէր զցաւոց քոց երգս 'ի քոյ անդ մատունս ·
Կամ թէ յանլոյս մութ ըստուերացն 'ի ծոցոյ ,
Որպէս զանկեալ հրեշտակ շարժեալ ըզթեւս քոյ,
Եւ սաւառնեալ առ լոյսն 'ի թիռ բոցալից ,
Ի սըրբանուէր պարս ըզնըւագս երգէիր ,

Ոչ այնպէս ընաւ գանգ երկնաւոր կամարաց ,
Ոչ ոսկի քնարք , ոյց կայ 'ի լուր և Աստուած ,
Ոչ սրովբէից նուագաց պար քաղցրագին՝
Քան ըղձըքնաղ քոյ երգ զերկինս բերկրէին :
Քաջ լեր , վերին տոհմի անկեալ դու ծընունդ .
Ի ճակատուդ տանիս ըզվեհ քոյ սերունդ :
Տեսեալ զքեզ մարդ , ճանաչէ յաչըս քոյին
Ըզմայլ նըշոյլ պայծառութեանն երկնային :
Արքայդ անմահ երգոց , ծանիր զանձըն քոյ .
Թո՛ղ զհայհոյանս և զխէթ՝ որդւոց գիշերոյ ,
Խոտեալ ըզխունկ պատիր , զոր տան քեզ յերկրի :
Ուր բարին չէք , անտի և փառքն են հեռի :
Ա՛ռ ըզքոյ կայս 'ի նախկին շուք գերապանծ
Ի մաքրափայլ որդիս լուսոյ և փառաց ,
Զորս ընտրական խմբին շընչով վառեաց Տէր ,
Կարգեալ յօրհնըս և 'ի հաւատս և 'ի սէր :

---

## ՑԷԼՎԻՐ

Այս , Անեայ դեռ մեղմ կարդայ
Ըզգողոր անուն Կլինթեայ ընդ ժայռ Տիբուրի .
Պահեաց Վօքլիւզ ըզքաղցր անուն Լաւուրայ .
Եւ Ֆերրարա 'ի դարս ըզկնի
Զէլէոնոր մըրմընջեացէ յարակայ :
Օ՛չ այն գեղոյ , զոր ըզսիրով քերթող գայ ,
Օ՛չ և անուանն՝ ում երգեաց տաղս :
Դու , ում նա զաղտ պատուագիր կայ ,
Մեռանիցիս դու ես ըզմահ . այլ յապայս
Զանմահութիւն թողու նա ձօն սիրելոյն .
Եւ սիրեցողք , սիրեալք՝ 'ի թեւս հանճարոյն
Զոյգ սաւառնեալք ճախրեն 'ի կեանս անդ անմահս :



Ա՛խ թէ մանկոյկս իմ հողմակոծ և տըկար՝
Ի նաւակայս մատչէր հողմով քաղցրագին .
Արև պայծառ թէ ըզգըլխովս ամբառնայր .
Թէ սիրուհւոյն արտօսր՝ ածեալ զուլթ բախտին ,
Ի ճակատուէս մերժէր ըզմռայլս օրհասին ,
Թերևս . . . ո՛վ պետ բամբասանց , ներես ինձ , այո
Էր ինձ թերևս — յի՞նչ ոչ սիրողն յանդըգնի , —
Հաւասարել զաշխարհս ընդ խանդըս սիրոյ ,
Եւ յերգ մըրցմանց ոգեալ զեռանդն իմ հոգւոյ ,
Մերոյ սիրոյն կանգնել կոթող արժանի :
Նո՛յն ուղևորն 'ի համառօտ իւր անցին՝
Ի ծմակ հովտին հանգիստ առեալ պահ մի խուն ,
Ի բուն ծառոյն , յոր վայելեաց հովանին ,
Մինչ չև մեկնեալ՝ սիրէ դրոշմել զիւրն անուն :

Տես 'ի բնութեան համայնք փոխեալ մեռանին .
Պըտուղք երկրի և զարդք մայրեաց կորընչին .
Ալիք գետոց ցընդին 'ի լայն ծով տարած .
Մարգագետինն 'ի շունչ հողմոյն կայ թառամ .
Եւ 'ի տարւոյն անդ խոնարհել՝ կառք աշնան
Սրանան վարեալք ձըմերայնոյն 'ի ձեռաց :
Որպէս հըսկայ զինեալ յանդերձն 'ի նըրան ,
Զայլազան էքս հարկանելով յաջ յահեակ՝
Մահ , ժամանակ թեապարեալ յարաժամ
Զյողդողդ տիեզերըս նորոգեն փախըստեայք .
Որ հընձեցաւն , յանյուշ մոռացս անկանի :
Շըտ ամառանն այսպէս պըտակն արկանի
Ի կողով անդր հասկաքաղաց .
Այսպէս գեղնեալ ողթոյ 'ի ճոխ աշնանի
Բերքն ոսկեփայլք դընին 'ի սայլ կըթողաց .
Հանգոյն անկջիք և դուք , կենաց սին ծաղկունք .
Սէր , մանկութիւն , հաճոյք և գեղ անկայուն .
Գեղ , առօրեայ ձօն , զոր խանդայ մեզ երկին ,
Եւ դուք անկջիք , թէ հանճարոյ ձեռն ինքնին
Ոչ տացէ ձեզ զանմահութիւն :
Ակն արկ զըթով յառոյդ հասակս ամբոխին ,
Ոյց փայլէ գեղ , և յըղբօսանս են շաղեալք .
Ի ցամաքել գիւթապատիր բաժակին ,
Զի՞նչ այլ մընայ . հազիւ թէ սուտ յիշատակ .

Ողջոյն կրկնու զնոսա շիրիմըն պատրաստ.
Ցաւէժ լռութիւն փոխանակէ զսէր նոցա.
Բայց դարը ըղձից փոշւոյդ անցցեն անընդհատ,
Եւ դու, Էլվիր, կեցցես անմահ:

---

# ԵՐԵԿՈՅ

Գայ լռութիւն ընդ երեկոյն:
Նըստեալ 'ի ժայռս ատ ամայիս,
Դիտեմ յանձայր օդոց շուխըս
Ըղձեմ կառաց գիշերայնոյն:

Ծագեալ Աստղիկ յերկնիցն 'ի ծայր,
Առ ոտս իմ աստղըն սիրատարփ
Խորհրդաւոր լուսոյն փայլմամբ
Ներկէ ապխտակ զօթոց գալար:

Զթանձրատերեւ կաղամախին
Ըզսօսափիւն լսեմ բազկաց.
Գուցես թէ շուրջ գերեզմանաց
Թռիչք ըստուերի ուրուք լսին:

Յանկարծակի հատեալ յերկնէ
Ցայգոյ ստեղըն ճառագայթ,
Եւ սահեալ յիմ լռիկ ճակատ,
Գողտրիկ լուսով զաչս իմ գըգուէ:

Քաղցրիկ ճաճանչ հրալից գընայն,
Զի՞, շող սիրուն, յինէն խըրտչիս.
Ի բեկեալ սի՞րտս արդեօք գայցես
Ծնել ըղձյս իմոյ հոգւոյն:



Ա՞յր իջանես, զի քեւ ծանեայց
Զաշխարհաց վեհ խորհուրդ մըթին,
Եւ ըզգաղանեաց խորս 'ի գընտին,
Ցոր ընդ տուընջեանն արասցես դարձ:

Ո՞վ մտաւոր անտես յէից
Առ տառապեալս յըղէ ըղձեղ.
Գա՞ս տալ նոցա լոյս ընդ գիշերս՝
Որպէս նըշոյլ մի յուսալից:

Գա՞ս մերկանալ դու զապագայն
Առ խոնջեալ սիրտ ըղձափափաք:
Տո՞ղ հրաշագեղ, զո՞ւ իցես այգ
Ասուրն այնմիկ որ չէք վախճան:

Սիրտ իմ 'ի փայլ քոյ արծարծի.
Ըզգամ աշխոյժ նոր եռանդեան,
Եւ յորս ոչ ես իցեն՝ խոկամ:
Զե՞ս, լո՛յս զըւարթ, նոցուն ոգի:

Թերեւս ըստուերքն յերանութեան
Այսպէս յածին յանտառակին.
Պատի զինեւ պատկեր նոցին,
Եւ իբր հուպ ես առ նոսա կամ:

Թէ, քաղցր ըստուերք, դուք էք ինքնին
Մենակք 'ի վայրս անմարդաձայն,
Եկա՛յք այսրէն ըզցայգս համայն
Խառնիլ 'ի ցնորս իմ մտացածին:

Ածէք ըզսէր, զանդորրութիւն
Ի խորս ոգւոյս նըւաղելոյ.
Նըման ցօղոյն գիշերայնոյ,
Որ կաթէ զհետ տուընջեան տօթոյն:

Եկայք…: Աւա՜ղ մեգ ոլորատեսակ
Ընդ ծագս երկնից վերամբարձեալ,
Ի քաղցրիկ շողն ածէ մըգայլ.
Եւ 'ի խաւար զաղնան ըննաք:

## ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ

Արեւ կենացս յելըն անդ պատեալ կայ յըստուեր ,
Հազիւ 'ի մեր նուաղկոտ ճակատս արկեալ դեռ
Դողդոջ նըշոյլս՝ որ ընդ ցայգոյ պայքարին .
Աճեն ըստուերք , օր խոնարհի , ընաւք ցընդին :
Թո՛ղ այլք առ այդ տեսիլ քըստմնեալ սըրտաթափք
Ցափանց վըհին ընկըրկեսցին դողացեալք .
Կամ չկարիցեն անխռով լըսել 'ի հեռուստ
Ըզմեռելոց ողբական երգ մօտալուտ ,
Զհեղձեալ հառաչըս սիրուհեաց եւ զեղբօր ,
Որ կան կախեալք զեզերբք մահճին սըգաւոր .
Կամ զգառնահեծ պըղինձն , զոր զանգք խուճապօղք
Ազդեն մարդոյ թէ պակասեաց թըշուառ ոք :
Ես քեզ ողջոյն տամ , մա՛հ՝ փըրկիչ երկնաւոր .
Դու չերեւիս ինձ յայդ պատկեր ահաւոր ,
Զոր քեզ եառուն յերկար ցընորք եւ սարսուռ .
Զաջդ ոչ զինէ աշխարհաւեր ծախիչ սուր .
Ոչ ժանտ ճակատ , ոչ յաչս ըզնենգ ցուցմունս .
Ի նպաստ վըշտաց գթած ոք առաքեալ յըղէ զքեզ :
Ոչ եղծանես դու , այլ փըրկես . յաջ քոյին ,
Հըրեշտակ վերին , տանիս լամբար երկնային .
Ցորժամ փակին վաստակաբեկ աչքս 'ի լոյս ,
Սըրբազոյն փայլս յարտեւանունս իմ զեղուս .
Եւ յոյսն առ քեւ ըզտապանաւ մըտախորհ ,
Ցեց 'ի հաւատս՝ ինձ բանայ պերճ աշխարհ նոր :
Ե՛կ ուրեմն եկ քակել զկապանըս մարմնոյս .
Եկ բաց ըզբանտս . եկ , տուր թեւոց ինձ փետուրս :
Հի՞մ յապաղես . յայտնեա՛ց , զի գամ մի սրանամ
Ցէն անծանօթ , առ իմ ըսկիզբն եւ վախճան .
Ո՞վ զիս բերեաց անտի . ո՞վ եմ . զի՞նչ լիցիմ .
Ոչ գիտելով թէ զինչ է ծնունդ , մեռանիմ .
Զո՛ւր հարցանեմ ըզքեզ , ոգիդ , անյայտ հիւր .
Զե յիս ազդեալ , ընդ ո՞ր երկինս օթեւիր .



Ո՞յր զօրութեամբ անկար 'ի գործոս այս տըկար .
Ի հողեղէն յարկդ յո՞յր ձեռաց փակեցար .
Ցո՞ր գաղտ շաղկապ եւ յո՞ր հանգոյց գերագոյն
Ընդ քեզ զօդի մարմինն եւ դու ընդ մարմնոյն .
Ե՞րբ 'ի նիւթոյն գնասցէ հոգիս այս 'ի բաց .
Զերկիր ընդ ո՞ր նորոց լըքցես արքունեաց .
Բընաւք անկա՞ն յուշոյդ . եւ անդր ըստ չիրիմ
Ի նո՞ր մոռացս երթաս ծնանել վերըստին :
Գնասցե՞ս ըսկիզբն առնել այսգոյն կենցաղոյ ,
Թէ հուպ յԱստուած , 'ի հայրենիս , յաղբիւր քոյ ,
Իսպառ ազատ 'ի մարդկօրէն կապանաց ,
Գնաս 'ի վայելս յաւիտենից իրաւանց :
Այս է իմ յոյս , այո՛ , կենացս իմ հատոր .
Նովաւ հոգիս ամրապընդեալ ատեւոր ,
Ցըքանչելի երեւոյթ տեսս անսասան՝
Թռուամ խառնեալ զպայծառ երանգըս գարնան .
Նովաւ երբեմն , երբ զիս հերձցէ ժանտ խոցուած ,
Ի ծաղիկ տիս հասեալ 'ի մահ՝ ժըմռեցայց .
Եւ արտասուք խընդից յողջոյն մեր վերջին
Փայլեսցեն յաչս 'ի հուսկ հայեացըս քոյին :
Եպիկուրեան դասք գոչեսցեն . «Նանիր յոյս .»
Եւ որ աջով մահըր զընեալ զհամագոյն ,
Ի խորշ ուղղոյն , զոյր նոր ազգ ձեւս հան 'ի գիր ,
Ըզնիւթ գտանէ խոհուն , ըզմիտս 'ի թըմբիր ,
Անմիտ , գոգցեն , որ հպարտանաս ըստ պայման ,
Հայեաց ըզքեւ . բնաւից է սկիզբն եւ վախճան .
Համայն 'ի վերջ դիմէ , 'ի մահ ծընանի .
Տես , 'ի դեղնեալ մարգս հոյլ ծաղկանց թառամի ,
Եւ եղեւին բարձր 'ի ճակատ պերճ յանտառ ,
Կըքեալ յամաց տապալ առոյ ընդ գալար .
Ծովք պակասեալ յալուցս իւրեանց ցամաքին .
Դալուկ տըժգոյն ունի եւ զինքն խուկ զերկին .
Աստղն այն , զոյր ծնունդ ծածկեալ թաքոյց ժամանակ ,
Արեւն ընդ մեզ զընայ յեղծումն հանգունակ .
Եւ մահացուք յամայս երկնից խուճապեալ ,
Զայն խընդրեսցեն երբեմն , եւ ո՛չ գըտցեն այլ :
Տես , շուրջ ըզքեւ 'ի համագոյս համօրէն՝
Դարք ըզփոշեաց կոյտս ըզփոշւով դիզանեն .
Եւ ժամանակ ջախեալ զզառոզդ 'ի քայլ մի ,

Զոր ինքն արար՝ նըմին դադաղ եղանի.
Եւ միայն մարդ, վըսեմ ցընորք, մարդ միայն
Յուսայ գտանել ըզկեանս ընդ խոր գերեզման.
Եւ յուշինչ անդր յափըշտակեալ 'ի մըրրկէ,
Ժամանակաւ նուազեալ, զանանցն երազէ:
Ա՛յլք պատասխան տացեն գիտնոցդ աշխարհի.
Թո՛ղ վրիպեցայց. սիրեմ, յուսալ ինձ պիտի:
Ապիկար միտքս աղմըկայոյզ փարանին.
Խօսի ազդումն, 'ի կալ բանին խակ լըռին:
Ես երբ տեսից զի յասպարէզն երկնաւոր
Աստեղք յըստոյգ շաւղացն անկեալ 'ի խոտոր,
Եւ բախելով յիրեար 'ի դաշտ եթերի,
Ընդ սասանեալ երկինս վազեն ըստ բախտի.
Երբ ըզշաչիւն լուայց գերկրի տապալման,
Եւ երբ տեսից զի թափառ գունտն ինքն յինքեան՝
Լայ զուրկ յարփից ծըփեալ յեղծումըն մարդոյ,
Եւ սուզանի 'ի կայս յաւէժ գիշերոյ.
Եւ յորժամ զիս, ըզտխուր տեսլեանցս հուսկ վըկայս,
Շուրջ պատեսցեն թոհ բոհ, խաւար և օրհաս,
Ե՛ս սոսկ յոտին, ես սոսկ, թէպէտև յահի,
Քեզ յուսացայց, Նդ անվըրէպ և բարի.
Եւ աներկբայ ընդ միշտ այգոյն վերադարձ,
Քեզ մընացից գետ յաւերակս աշխարհաց:
Յածախ, յիշես, յերանաւէտն այն 'ի վայր,
Ուր 'ի մի՛նկատ ծըննաւ մեր սէր մըշտավառ՝
Մերթ 'ի կատար առապարաց վաղեմեաց,
Մերթ զամայի եզերբք տըխուր լըճակաց,
Ի թեւս ըզձից վարեալք հեռի յաշխարհէս,
Ընդ մըթութիւնս անդ մըխէաք զոյգ ընդ քեզ:
Վէտ վէտ ծաւալ իջեալ ըստուերք 'ի լերանց.
Գողանային խուն մի ըզդաշտս 'ի յաչաց.
Այլ յառաջեալ ընդ հուպ անշուք և լըռին՝
Խորհըրդաւոր պար աստեղաց գիշերին,
Եւ ծագեալ լոյս համակելոյն 'ի մըռայլ,
Ըզվայրն ողջոյն պարածածկէր 'ի դէջ փայլ:
Սակէս 'ի սուրբ տաճարս, յոր տիւ ըզփուէ լոյս,
Մինչ եւ զեռէ նուաղին ճաճանչք յերեկոյս,
Կանթեղն 'ի շող խըրոցն հեզիկ նըշուլեց,
Յես 'ի մեղմ փայլ զգաւիթն առնէ լուսալից:



Անդ երբ զիմ աչս ըզմայլելով յածէիր
Յերկնից յերկիր, յերկրէ յերկինս, առէիր.
Աստուած ծածկեալ, բնութիւն տաճարդ է համայն.
Ընդ բնաւս յայտնիս մըտաց, երբ ակն հայի յայն.
Մեծաց ձըրիցդ՝ այց նա ճըգնի գոլ տեղեակ,
Դրոշմն է աշխարհս և հայելի և ցուցակ.
Տիւ՝ ակն է քոյ, գեղ ցանկալի՝ քոյդ ժըպիտ.
Ընդ բնաւ ըզքեզ շընչէ հոգին, պաշտէ սիրտ.
Անանց, անվէրջ, ամենակալ և բարի.
Պերճ յորջորջանքդ ոչ տան զանունդ անթերի.
Եւ առ վըսեմ քոյ էութեամբ նըկուն միտք
Փառաւորեն ըզմեծութիւն քոյ լռին:
Սակայն, ով Տէր, ըստ գերազոյն օրինաց՝
Դեռ տըկար միտքն առ քեզ բերի վերընթաց.
Եւ գիտելով ըզսէր վախճան իւր վերջին,
Ի ճանաչել ըզքեզ տայի կաթոգին:

Ասէիր զայս. և հառաչէր զոյգ սիրտ մեր
Յէն անծանօթ, զոր վըկայ իղձ մեր կոչէր.
Ի զուգա հանդէպ՝ 'ի գործոն ըզնա սիրէաք.
Եւ նմա զօրհնիս մեր տանէին տիւ և ցայգ.
Եւ ըզմայլեալ աչքս անդ կարգաւ դիտէին
Զերկիր, զաքսոր մեր, և ըզյարկն իւր՝ զերկին:

Ո՛հ թէ 'ի ժամս անդ յոր հոգին փախըստեայ
Ճախրել ցելուլ ըզըրբնաւոր լանջն անձկայ,
Աստուած յերկնից լըցեալ ըզտենչ մեր ըղձին,
Ի սլաք փըրկիչ զմեզ հարկանէր զերկոսին.
Յաղըխւր խըրեանց սլացեալ հոգիք մեր յանկարծ,
Յընթացսն անդ զոյգ զնայլին յարփիս աշխարհաց.
Ի սիրոյն թեւս հասեալ ըզվայրն անտահման,
Ամբառնային զերդ ճառագայթ տըրընջեան.
Եւ սըրտատրոփ հասեալք յԱստուած խակ ինքնին,
Ի ծոց նորին յաւէժարար խառնէին:
Ա՜ւա իղձքս էին. և վըճակեալք չըքութեան,
Յոչընչութիւն արդեօք էակքս հաստեցան.
Կամ կցորդակից բախտի մարմնոյս լեալ հոգին,
Ընկըղմիցի 'ի մութ մըռայլ տապանին.
Փոշի՞ լիցի, թէ գոլով կազմ 'ի թըռիչ,

Զերդ պակասեալ ձայն՝ եղիցի նա յոչինչ ։
Յետ սին հեծման և հուսկ յետինն ողջունի՝
Զի՞ք որք սիրող 'ի սիրելեացդ և ոչ մի . . .
Ըղձեծ գաղտնեացդ , Էլվիր , հարցջիր քեզ ինքեան .
Ըզսիրելւոյդ տես մահ , և տո՛ւր պատասխան ։

---

# ՀՈՎԻՏ

Սիրտս 'ի ընաւից լըքեալ , և ես 'ի յուսոյ ,
Ոչ ևս հայցմամբքն արկցէ թախանձ ինչ բախտին .
Տո՛ւր ինձ միայն , հովի՛տ մանուկ իմ տիոյ ,
Վայր առօրեայ՝ յոր մընացից օրհասին ։

Ահա մըռայլ ձորոյն անձուկ ճանապարհ .
Ծառք թանձրաթուփք ընդ կող բըլըոյն 'ի կախ կան ,
Ոյց յիմ ճակատս հակեալ ըստուերք խուռն 'ի վայր՝
Ծածկեն յանդորր և 'ի լռութիւն զիս համայն ։

Անդ ընդ դալար՝ կըրկին առուակք թաքթաքուր
Ոլորապտոյտ գըծեն ըղձիր շուրջ հովտին .
Պահ մի խառնեն յիրեար զմըրմունջ և ըզջուր ,
Եւ մօտ յաղբեւրն ապա անհետ կորընչին ։

Կենացս աղբիւր էանց նոցին նմանաւոր ,
Սահեալ անդարձ , անյիշատակ և անձայն .
Վըտակն է ջինջ . այլ 'ի հոգիս իմ պըղտոր
Ոչ ցոլասցին նըշոյլք պայծառ տըւընջեան ։

Զովարար ծոց խորեանց և շուրջ հովանիք
Յեզերս առաւաց զիս կաշկանդեն զօրն ողջոյն .
Զերդ նոյնաձայն երգ որորէ ըզմանկիկ ,
Նոյն և ձայնք ջուրց ածեն հոգւոյս թըմբրութիւն ։



Ո՛հ անդ պատի զինև դալար ամփարտակ ,
Եւ անձուկ ծիր երկնից , աչացըս պատկան .
Անդ սիրեմ կալ . և 'ի ընութեան միայնակ՝
Գիտել զերկին , և զկոհակաց լսել ձայն ։

Շատ սիրեցի 'ի կեանս , կրեցի , տեսի շատ .
Առ կենդանեաւ խընդրեմ զանդորր ես Լեթեայն .
Լիջի՛ր ինձ ափըն մոռացման , վայր զըւարթ .
Ինձ քաղցըր կեանք՝ մոռացութիւնն է միայն ։

Սիրտս է անդորր և կայ հոգիս 'ի լռութեան .
Շըշուկ երկրի հեռուստ հասեալ պակասի .
Զերդ միջոցաւ նուաղեալ հընչիւն բացական ,
Որ 'ի հողմոյն ընդ աղօտ յունկըն բերի ։

Առատուստ ըզկեանս ես տեսանեմ յամպն 'ի վեր ,
Որ յանցեալըն անհետանայ յըստուերի .
Սէր լոկ կայ նոյն . որգունակ մեծ ինչ պատկեր
Ընդ անըրջոց ցընդել մընայ դեռ յարթմնի ։

Հանգի՛ր , հոգի , յայս 'ի վերջին օթևան ,
Իբր ուղևոր , 'ի սիրտն յուսով պատարուն ,
Զև 'ի քաղաք մըտեալ նըստի առ դըրան ,
Պահ մի շընչել զանուշակ սիւդն յերեկուն ։

Թօթափեսցուք և մեք զոտից մեր փոշին .
Մարդոյ ընդ այդ շաւիղ այլ չէք վերադարձ .
Յապարիզին ծայր զուարճասցուք զայդ նըմին
Յանդորրն այն միշտ խաղաղութեան նախընթաց ։

Աւուրքդ հանդոյն աշնան տըժգոյնք , փաղանցիկք ,
Որպէս զըստուեր ընդ դարևանդ խոնարհին .
Մտերիմք մատնեն , գթութիւն գընայ դասալիք .
Եւ իջանես մենակ շիրմացն ընդ ուղին ։

Սակայն ընութիւն քեզ տայ հրաւէր կաթողի .
Ի մըշտաբաց գիրկն ընկըղմեալ մըխեսջիր .
Բնութիւն կայ նոյն , յորժամ համայն փոփոխի .
Եւ նոյն արև միշտ ամպառնայ յերկնից ծիր ։

Ըզքեզ 'ի լոյս և 'ի մըռայլ պատէ դեռ .
Հառեալ ըզաչերդ 'ի ցընդելի սուտ բարեաց ,
Պաշտեա ըզձայնն՝ ում Պիւթագոր լուր դընէր ·
Եւ կաց ընդ նմա 'ի լուր վերին դաշնակաց ։

Զըննեա յերկինս ըզլոյս , զըստուեր ընդ երկիր ·
Եւ ընդ հողմոյն սլացիր ընդ դաշտ օդային ·
Խորհըրդաւոր աստեղն 'ի փայլ քաղցր բոփիւ
Հառեալ զանտառս երթ ընդ ըստուեր ձորակին ։

Ի ճանաչել զինքն՝ ըզհանճար ետ Աստուած .
Ցեղականացս ապա զհատուիչն 'ի միտ առ ։
Զայն իմն յիւրում լաւութեան խօսի ընդ մըտաց ·
Ո՞վ 'ի սըրտին որ ոչ լըսաւ զայդ բարբառ ։

---

# ԱՆՅՈՒՍՈՒԹԻՒՆ

Յորժամ հատուիչն 'ի կենսաբեր իւր բարբառ
Յաղխտաւոր ժամու զաշխարհս այս արար
Յանդընդական բողբոջաց ,
Դարձոյց զերեսն յարարածոյն իւր թերի ,
Եւ զնա սաստիւ արկեալ ոտիւքն 'ի վայրի ,
Ցիւրն 'ի հանգիստ արար դարձ ։

Ըզքեզ , ասէ , 'ի չուառութեան քում թողում .
Չես արժանի իմոյ ցասմանս և սիրոյն ,
Այլ իբր ոչինչ յաչս իմ ես .
Գնասջիր թափառ 'ի վայր թափուր ամայի ·
Հեռի յինէն՝ բախտն առաջնորդ քեզ լիցի ,
Որպէս և Չարն իշխան քեզ ։



Ասաց · զերդ անգղ՝ որ յորմն իջեալ խոյացի ,
Չարն արձակէ յայս բան , 'ի ցոյց իւր խընդի ,
Զերկար թառանչս հեծութեան .
Եւ ամփոփեալ ըզընաւս անդութ ծիրանօք ,
Գըրկէ յաւէժ զիւրոյ քինուն անօղք
Ըզմիշտ ծարակն յաւիտեան ։

Չարիք զանհուն կալան սահմանս յայնմհետէ .
Այնուհետև և որ խորհին , որ շընչէ
Կըրել ըզմիշտս ըսկըսան .
Երկիր , երկին , հողի և նիւթն հեծեցին .
Եւ համօրէն բարբառք ընութեան զըլխովին
Ցերկայն հառաչըս դարձան ։

Արդ համբարձէք զաչս ընդ սահմանս երկնածիգ .
Ի գործն ըզՏէր խընդրեալ , 'ի վիշտդ հայցեսջիք
Ըզմեծըրդ զայդ մխիթարիչ ,
Որ 'ի գործոյն , ո՜վ հեգք , ըզգութ իւր եհատ ։
Զնեցուկ խընդրեք , ահա տիեզերք առնեն յայտ
Զինքնին ըզձերդ հալածիչ ։

Ո՞վ կար գըժնեայ . և զո՞ր տացուք քեզ անուն .
Թէ տեսչութիւն ձայնեմք , կամ բախտ կամ բնութիւն ,
Կամ թէ օրէնս ինչ անհաս .
Թէ աջդ ածէ զող , կամ հանել տայ անէծս .
Ի հըլուս , յըմբռոստ երկիւղ կամ սէր թէ ազդես ,
Այլ միշտ դու ինքն իսկ մընաս ։

Ըզքեզ , աւա՜ղ , ես կարդացի և ըզլոյս .
Մխաք իմ պատրեալ էարբ յորդոր 'ի խրախոյս
Ըզթունալից ըմպելին .
Նա ինքն յանդունդս ըզմեր վարեալ քայլս ոտից ,
Եւ պըսակեալ զըսպանդն 'ի փունջ ծաղկալից ,
Մատնէ 'ի ձեռըս չարին ։

Գոյր նմա անխտիր դէթ հարուածել զմարդկան ազգ ,
Կամ արկանել զաջն 'ի բընաւքս հասարակ
Նոյն օրինօք համաձայն .

Բայց դարք տեսին զի և ոգիք վեհազանց ,
Գեղեցկութիւն , հանճար և ձիրք գերազանց
Ինքեան բազմանդք ընտրեցան ։

Հանգոյն երբ ժանտ աստուածքն 'ի զոհ կամէին
Զանմեղ խաշանց զարիւնըռուշտ ձօն նախկին
Ցիւրեանց տաճարս անմըւէր ,
Սեղանս ընտիրք կազմէին ցուլք հարիւրեակ ·
Եւ գառն անբիծ կամ բազխտակն աղաւնեակ
Զնոցա բագինսըն թաթաւէր ։

Հատուիչդ հըզօր , ծագումն էիցս բովըզբան ·
Քեզ հնարաւոր են չև եղեալքն ամենայն ,
Որ եադ իշխան տիեզերաց ·
Կարող էիր ըստ հաճոյից կամաց քոց
Պարգևել կեանս և բատ քոյոցըդ որդւոց
Ի յաւերժիցդ յաւիտեանց ։

Մնալով միշտ նոյն , 'ի համագոյս համօրէն
Գոյր քեզ յորդել առատաղեղ ուղխօրէն
Զերանութիւն անվըթար ։
Վայրք , զօրութիւն և ժամք յոչինչ քեզ զըրին ։
Մինչս ոչ սարսեն , անշուշտ քեզ չէր անհնարին ,
Սակայն դու ոչ կամեցար ։

Ընդ ո՞ր մեղաց արժանացար ծընընդեան ,
Անազգական ոչինչն հայցեա՞ց 'ի քէն զայն ,
Եւ կամ թէ յո՞նձն ինչ էառ ·
Միթէ իցեմք արարք քըմաց քոց , ո՞վ բախտ ,
Կամ թէ , աստուած անգութ , վըշտացս էր ինչ պարտ
Քոյոց բատից զոլ պատճառ ։

Եւէք յերկինս ուրեմն արդ խունկք հեշտք ինքեան ,
Արտօսր , հառաչք , անէծք , հեծումն և կական ,
Վայեւք , վեհ երգք նըւագաց ·
Գոչումն արեան , ձայն մեռելոց , ողբք անվերջք ,
Ո՞ն զանըզգայ կամարսն ելեալ բախեցէք
Զճակատագրին աթըռնեաց ։



Գոչեա՛ երկիր , ձայն տուր՝ երկին · դուք անդունդք ,
Սեաւ օթեւան , ուր դիզանին մահուն կոյտք ,
Հառաչեցէք միաձայն ·
Նզովն ընդդէմ բնութեան բողոքք անդադարք ·
Եւ 'ի ցաւոց տագնապս համայն արարածք
Առցեն ըղնոյն ողբս հեծման ։

Ցորմէհետէ բնութիւն կորզեալ յանդոյից
Եւ ըստ քոյ ձեռն իբրև գործուած ուրուագիծ ,
Զի՞նչ տեսանեն աչք քոյին ·
Մատնեալ կայ նիւթն եղծմանց չարին նըշաւակ ,
Հեծէ մարմինն , աւա՛ղ , և բնաւ եղականք
Բերեն նախանձ ոչընչին ։

Ներքուստ յառնեն կըռիւք տարերց ներհակաց ,
Եւ ժամանակ ծախիչ նըստեալ յաւերած ,
Զոր ձեռք նորուն կուտեցին ,
Առ սեամն անդէն մընայ գործոցդ առօրեայ ,
Եւ 'ի ծոց մարցն օրհասն առնէ հեղձամահ
Ըզնոր բողբոջ մարդկային ։

Ցանդըգնութիւն անսանձ ընկճէ զուղղութիւն ·
Ճըշմարտութիւն մերժի , պատուի սըտութիւն ·
Ազատութիւնըն տատան՝
Նուիրեալ յերկրի զոհ աստուածոց կենդանեաց ,
Եւ զօրութիւն հիմնեալ ընդ բնաւ ըզգըռանց
Զիշխանութիւն անսահման ։

Առանց վերնոց վըճռէ կորովն ըզգուպար ·
Կատոն զաղխ իւր պատառէ կամակար ,
Ի Պըղատոնի յեց 'ի բան ·
Բրուտոս մեռեալ վասն ուղղութեան՝ զոր սիրէր ,
Ի վերջին ժամն յերկմիտս ընդ այն եղեալ դեռ ,
Ասէ · Անուն ես միայն . . . ։

Բախտն ըզմեծաց չարեաց ըզկողմն ունի ցանց ·
Օրինաւոր լինին ոճիրք թագաւորդք ·
Եւ փառքն արեան կըշռի գին ·

Ընչաւորութիւն առնու որդի 'ի հօրէ․
Եւ գարն 'ի ժամն յետին զաղէտալըն պատմէ
Առ գար՛նորոգ դեռածին ։

Այդքան տագնապք, ոճիրք և ցաւք տանջանաց
Ո՞չ բաւական զոհիք ներկին ծըխամած
Ըզտըխրական քոյ սեղանս ։
Հինն այն վըկայ երկրիս չարեաց գունոն արփւոյս
Ո՞չ ծագեցէ օր մի որ ոչ տացէ լոյս
Ի մահացուացըն վարանս ։

Քառանդք ցաւոց տառապանաց, կենաց զոհք,
Ոչ, մի յուսայք թէ յագեալ քէնն անողոք՝
Արկցէ ըզչարըն 'ի թըմբիր․
Մինչև մահուն բացեալ ըզթև իւր անհուն,
Ընկըղմեսցէ խաղառ յանվերջ լըռութիւն
Ըզվէշտ կարեաց մըշտակիր ։

---

## ՆԱԽԱԽՆԱՄՈՒԹԻՒՆ ԱՌ ՄԱՐԴՆ

Հիմ՛նըզովեաց ըզկեանս եղեալն յոչէից ։
Դու՞ մեղադրես զիս վասն իմոց պարգևաց․
Իշխե՞ս փակել դու զաչս առ գանձ մըթերից
Իմոցս առ քեզ պարգևաց ։

Մինչ չև եղեալ քոյ, անհանճար արարած․
Ջերմութեանդ յիմում սըրտիս երկնէի․
Եւ իբր ինքեան պըտուղ՝ խորհուրդն յաւիտեանց
Ըզքեզ տանէր 'ի ծոցի ։

Տածեալ յուշի մըտացս ըզկեանսդ ապառնիս,
Ըզժամանակս հանդերձէի ըստ կամս իմ։
Օրն այն ծագեաց․ ասեմ․ Յիմ փառըս ծընցիս,
Եւ յերջանիկ բաստ քոյին ։



Յորժամ ծընար, յայտնի և գաղտ սիրաբար
Ոչ դիպուածոյ բախտին լըքի զիմ գործուած,
Զըզգայութեանց քոց ջեռուցեալ հիւթ տըկար
Յաչացս իմոց կայծականց ։

Խորհըրդաւոր կաթամբ զստինըս լըցի․
Դու անաշխատ արբեր յաղբերցըն սիրոյ․
Հաստատ եդի ըզջիլս, ըզբիբ բոլորշի,
Ուր նկարեցաւ փայլ լուսոյ ։

Մթագնեալ հոգիդ յըզգայութեանց առ վայր մի,
Բացաւ առ բանն՝ իբր աչքդ առ փայլըս լուսոյն․
Խօսքըն լըացոյց զոր խորհեցարն 'ի մըտի,
Յոր դրոշմեցի զիմս անուն ։

Յորպիսի տառս ըսքանչելիս
Ըզմեծդ անուն աչք քոյ տեսին․
Տեսեր զպարգև բարեացս յերկրիս,
Եւ ընթերցար զիմ փառս յերկին ։
Ի կարգն յայտնէր միտք հանճարոյս,
Խնամք տեսչութեանս՝ 'ի համագոյս․
Անբաւութիւնս՝ 'ի միջոցին․
Եւ, էութեանս բատուերք անբաւք,
Քեզ ըզանուամն իմ ցուցին զարդ,
Եւ բախտն ըզկամս իմ հրամանին ։

Յիմ զօրութեան զիս պաշտեցեր,
Եւ օրհնեցեր յերանութեան․
Եւ առաջի իմ գընացեր
Անկեղծ սըրտիւ պարզմըտութեան ։
Բայց զի ահա բախտ հակառակ
Պատեաց յըստուեր խըրթնատեսակ
Ըզպայծառ փայլս որ յարթմնի անդ,
Զիս հարցանես մեղադրելով․
Պատի հոգի քոյ մեայլ ամպով,
Եւ չհաւատաս արեգականդ ։

« Դու առեղծուած ինձ ես անհաս,
Զոր բանին դնէ բախտն առաջի․

Թէ քոյ պատկեր աշխարհս էր այս,
Անշուշտ արդար գոյր և բարի։ »
Կա՛ց այդր, ո՛վ միտք ամբարտաւան.
Ընդ օրինացս որ քեզ եդան,
Կշռե՛լ զօրէնս իմ խորհելիս.
Ծանի՛ր ըզվի՜հ խելոյ Նոցա.
Արդարութիւնդ է առօրեայ,
Եւ զանանց կեանս ունիմ առ իս։

Երբ պատրուակք իմաստութեանս
Անկցին հանդէպ աչաց քոյին,
Հիւրք արկածք, յոր վշտանաս,
Ի լաւութիւնս փոխարկեսցին։
Ընդ դադարել աղօտ մըթան՝
Տեսցես ելեալ դու յաղթական
Զարդարութիւն, զազատութիւն.
Այգոյն բոցով սըրբի համակ
Աստուածեղէն հալոցն, յոր կեանք
Փոխի անդրէն յանմահութիւն։

Սակայն քոյ խիստ սիրտ քըրթմընջէ դեռ յերկրայս.
Լոյսն այն չբաւէ զայրացելոց քոց աչաց.
Դիտել'ի մռայլս ըզգայութեանց անդ ցանկաս
Ըզվերնական պայծառ փայլս
Արշալուսոյն յաւիտեանց։

Կա՛ց. լոյսն աղօտ, խառնեալ յըստուերըս նըսեմ,
Կարող է քեզ առաջնորդել ընդ երկիր.
Ե՛րթ անտըրտունջ, տեսեալ թէ ո՛վ որ իցեմ,
Զերդ համագոյք իսկ առնեն,
Վըստահք յԱստուած յուսադիր։

Զգիտէ երկիր յորո՛ց ծագէ օրինաց։
Երբ Ովկիան հըզօր բազկաւս ընկըրկի,
Գիտէ՞ զիարդ ազդմամբ ցայգոյն մահեկի
Ցանդընդախոր յատակաց
Զալիս ժայթքէ ծովն 'ի բաց,
Եւ յողողեալ եզերաց
Մըռընչելով նահանջի։



Արփին պայծառ, պատկեր լուսոյն ըստուերի,
Գիտիցէ՞ ուր հրաման աջոյս տանի զայն.
Ի՞նքն իսկ գըծեաց իւր ճանապարհ գեղազան.
Ի հուակն իւր կէտ շըրջանի,
Երբ լոյսն ինե շիջանի,
Խոստանայցէ՞ նա երկրի
Ըզդարձ արփւոյն վաղորդեան։

Տես, կեայ անդրոյթ և յառաջէ ամենայն։
Այգուն այգուն տիեզերք 'ի ձայն իմ զարթչին.
Յանապատաց խորոց կոչեմ ես զարփին,
Եւ զվայր հատեալ բացական,
Գայ նա աչացս յանդիման.
Եւ ինձ տըւեալ պատասխան,
Ճախրէ 'ի գահն օդային։

Եւ դու, ում կեանք՝ շունչս է 'ի քեզ.
Յորս վերայ կան աչք իմ բաց,
Խիթմա՞ս թէ զքեզ մոռացայց ես,
Ըզմարդ՝ իշխան տիեզերաց։
Կարծեմ անկեալ զկարօղս 'ի քուն.
Անբաւ հայեացքս հըսկեն արթուն
Ընդ ընաւ աշխարհս համանգամայն։
Ծովն 'ի բարբառ իմ փախըստեայ,
Եւ կամ փոշին որ ամբառնայ,
Գիտեն զօրէնս իմ և զհետ գնան։

Գնացջիր յառաջ 'ի յուսոյն լոյս
Մինչ ընդ ըստուերս իսկ օրհասի,
Գոլով վըստահ զի խնամ գըթոյս
Ոչ ընդ ոտիւք քովք դարանի։
Մէն արշալոյս այնմ է վըկայ.
Ողջ տիեզերս յայն հաւատայ.
Եւ մարդ միայն կայ յերկեան։
Բայց հայրական վըխճուցս 'ի սաստ
Ժանտ տարակոյսդ անկցի տապաստ
Յանդունդ խորոցըս բարութեան։

## ՅԻՇԱՏԱԿ

Ի նանիր օր յաջորդէ զօր.
Ոչ մնան հետք անցից նոցին.
Այլ դու անեղծ կաս յոգիս իմ,
Ո՛վ հուսկ երազ սիրայորդոր:

Նկատեմ զի չար ամացս երագ
Յեռուստ դիզեալ չեղջակուտի.
Ջերդ ըղկաղնեաւ շուրջանակի
Տերեւքն անկեալ թափին թառամք:

Սպիտակ ներկաւ ճակատս յաւուրց.
Հազիւ հոսէ արիւն իմ ցուրտ.
Որպէս ալեաց կաշկանդի կոյտ
Ի շունչ հողմոց սառնասառույց:

Այլ քո պայծառ գեղ պատկերին
Վայելչացեալ ցաւոց անձկաւ,
Ոչ ծերացի 'ի սիրտ իմ ընաւ,
Գոլով աներր իբր ըզհոգին:

Երբեք դու զաչս իմ ոչ լքեր.
Եւ երբ հայեացքս յառանձնութեան
Այս յերեսաց քոց զերկեցան,
Յանկարծ ըզքեզ տեսի յեթեր:

Ընդ ես ինձ դեռ երեւիս նոյն,
Որպէս էիրն յօրն այն վերջին,
Երբ յոթեան քո երկնային
Թռեար ընդ ելս արշալուսոյն:



Ըզմաքրափայլ գեղ քո սիրուն
Տարար ընդ քեզ անդր իսկ յերկին.
Աչք քո, յոր կեանք շիջանէին,
Ճառագայթեն զանմահութիւն:

Ի մեղմ հողմոյն շունչ սիրային
Դեռ երկայն ծամքդ 'ի վեր խաղան.
Եւ վէտքն 'ի լանջաց 'ի ծուփ ծածան
Թուխ խոպոպեօք վայրաբերին:

Յաղօտն այն քող բասուերամած
Անէ գեղոյդ քաղցրախորժ փայլ,
Ջերդ արշալոյսն մերկացեալ
Յառաւօտին 'ի հուսկ միգաց:

Արեգական բոցն արփենի
Գայ ընդ աւուրց և տայ միշտ լոյս.
Սակայն գիշեր ոչ գոյ սիրոյս.
Եւ շողդ յոգիս ոչ շիջանի:

Ըզքեզ դիտեմ, քեզ 'ի լուր կամ
Ընդ ամայիս, ընդ ծաղս ամպոյ.
Նկարեն ալիք ըզպատկեր քո,
Եւ հողմն ըզքոյդ ածէ ինձ ձայն:

Յորժամ 'ի քուն լինել երկրիս
Լսեմ զհողմոյն հեծութեան շունչ,
Կարծեմ լսել ըզքո մրմունջ
Որ ըզսուրբ բանս յունկն իմ խօսիս:

Թէ կամ դէտակն ընդ ցոլս անդ ցան,
Որ զգիշերաց ըզքող պըճնեն,
Դու երեւիս ինձ յաստղ 'ի մէն՝
Յախորժագոյնն իմոյս ական:

Եւ երբ 'ի սիւգ մեղմիկ հողմոյ՝
Ջուարթ զիս առնեն բուրմունք ծաղկանց,

Ի քաղցրագոյն հոսս անդ խորհանց
Օդ զոր շնչեմ՝ այն շունչ է քոյ ։

Սրբես զարտօսր իմ աչօք քով,
Մինչ միայնիկ թախծեալ երթամ
Հեղուլ զաղերս 'ի գաղտնութեան
Առ մխիթարիչըն սեղանով ։

Յորժամ 'նընջեմ, ընդ մայլս հըսկես .
Թեւք քոյ զինեւ հանգուցեալ կան .
Քոյ են երազք իմ ամենայն ,
Քաղցրահայեացք լըրև զըստուերս ։

Թէ 'ի ժամ քնոյս՝ 'ի ձեռաց քոց
Կենացս իմ թելք հատանէին ,
Ո՛վ կէս հոգւոյս դու երկնային ,
Անշուշտ 'ի քոյդ զարթնուի ծոց ։

Որպէս այգոյ 'նըշոյլք կըրկին ,
Կամ զոյգ հառաչք յիրեար խառնեալք ,
Ի մի յօդին հոգիքս երկեակ .
Եւ ես հեծեմ դեռ տակաւին ։

---



# Տ Ա Գ

Անպարտակիրըդ քաւեսցես ըզմեղս հարց ։
(Ողբաս . տաղ . Ջ . գլխ Գ .)

Առ հարց քոց մեղս , ով ժողովուրդ ,
Զորդիս քոյին պատժեալ երկնի ,
Խոշտանգեսցէ զնոցին սերունդ
Յաւերժ սաստիւ պատուհասի .
Մինչև ուստեմն աջ բարերար
Կանգնեսցէ զյարկ մեծապայծառ ,
Որով երկիր կըցի յերկին .
Եւ ջերմ 'նախանձ ընդ մաղթանաց
Առցեն ըզժամն փոշին 'ի բաց ,
Յոր վերնայնոց պատկերք ծանկին ։

Ի հին գերբկաց ելէք 'ի վեր ,
Տաճարք , զոր լայր յողբս Իսրայէլ .
Կանգնեաց , կամար սըրբանըւէր .
Օ՛ն , ղեւտացիդ , 'ի խորանն ել ։
Ի Սաղիմայ քնարացն 'ի ձայն՝
'Նորածին զուհն ողջակիզման
Զենցի 'ի սուրբ ձերոյ աջոյն .
Եւ արտասուօք որ 'ի յերկրէ՝
Արեան ըզշանթըն շիջուցէ ,
Որ դեռ գոռայ 'ի գլուխ մարդոյն ։

Ազգդ այդ շամբշեալ և խրոխտապանծ ,
Վէս 'ի ճակատ ազատադէմ
Երբեմն ասէր . « Բուռն է Աստուած .
Մեզ թող աստուածք լիցուք մեզէն ։
Մխոք մեր վըսեմ իւր հանճարով
Զերկին , զանդունդըս զըննելով ,

Էին մեծի եւ 'ի խնդիր ·
Այլ ոչ 'ի կողս ուրեք երկրի,
Եւ ոչ յարփիս գընտոյն երկնի
Մեզ դրոշմեցաւ անուան խոր գիր ։

« Արդ աշխարհի մեք խըրատ տամք
Ջաղխել զմական թագաւորաց ·
Այժմէն խորին մեր քամահանք
Ծաղրեն ըզլուծ հինն օրինաց ։
Թօթափեցէք, ով բարուէք հեգք,
Ըզժանտ շըղթայս թօթափեցէք ·
Ելէք անդրէն յազատութիւն ։
Ո՛վ մարդ, յորէ յորմէ շընչես,
Իղձ քոյ՝ օրէնք լիցին առ քեզ,
Եւ պարտք քոյին՝ քաղցր հեշտութիւն ։

« Հատեր մըտօքդ ըզվայր բացատ ·
Ըզժամանակս հաշուէս կանխաւ ·
Յանդըգնութեանդ տեղի տայ շանթ ·
Ծըփանուտ կառքդ յածին զերկնաւ ։
Ջերդ հուր, ում բնաւ նօթծէ ճարակ,
Մըտաց քոց բանն աճեցուն ցանդ՝
Տարածեսցի զանբաւութեամբ ·
Եւ զօրութեանդ յեցելոյ յայն՝
Կէտ և սահման լիցի միայն
Յաւերժութիւն և վայրն անչափ ։

« Օ՛շ մեր որդւոց, վա՛շ և դարուն,
Որ բարգաւաճ մերովք խրատուք,
Առնուլ գայցէ զժառանգութիւն
Հըրահանգաց զոր նմա թողումք ։
Հի՞մ նախանձու ամաց շըրջան
Մերոյ բախտին դընէ սահման
Այսգոյն երագ ժամս վայրկենի ·
Ո՛վ օրէնք խիստ և անօրէն ։
Առ յաղթելոյ բնութեանն ընդդէմ
Ի՞մ կարօտիմք ։ ժամանակի ։ »

Քա՛ջ է․ զփոշւովք ձեր ժամանակ
Հազիւ դեռ քայլ մի յառաջեաց ։



Ելէք արտաքս ըստ մահուն ցայգ,
Ելէք, ոգիք մերոցս հարանց ։
Եկա՛յք գործոց ձեր 'ի զըննին ·
Եկայք առնուլ արդ ըզբաժին
Պարուս փառաց ներանութեան ։
Ե՛ւ, ազգ, որ շատ ինչ խոստացար ·
Ո՛վ աշխարհի դաս բարեբար,
Տես ըզզարմիդ ճետ սերընդեան ։

Զի՜նչ տեսանեմ․ աչքն յետս հային ·
Եւ ըզկապերտս արկեալ ծածկոյթ,
Ամօթալից խուժան նոցին
Ի գերեզման մըտանէ փոյթ ։
Ո՛չ, ոչ․ կացէք, ոգիք վատթարք,
Մերոց թըշուառ աւուրց պատճառք ·
Կացէք · յայժ քաղցր են այդ ձեր վիշտք ։
Ընդէ՞ր երկինք յամր հալածեալ
Ձեռուն վըճիռ ձեզ առ 'ի կեալ
Յայնմ 'ի դարուն՝ զոր բամբեղծիք ։

Եւ յո՞ աւուրքն այն գընացին,
Յորըս Գաղղիա 'ի գլուխ ազանց,
Ծագէր զերդ աստղ ինչ ահագին,
Զեղեալ հանուրց զիւր լոյս փայլմանց ։
Ո՛վ դար միակ 'ի բնաւ մեր դարս ·
Յո՞ր պերճ շըքոյ պայծառ ըսպաս
Փառք զարքունիս քոյ յարդարէր ։
Վեհ լուսատուին մեզ նման էիր ·
Ընդ մեծութիւնդ ափշէր երկիր,
Յոր փայլք քոյին տածէին սէր ։

Մինչ խակ ուրեմն հանճարոյ դարք
Էն դարք գործոց առաքինեաց ·
Մինչ քաղցրաձայն երգոցն աստուածք
Վառըն վեհիցն իջին արանց ։
Մօտ առ աթոռն ազդեցական
Տեսէք՝ ինքնին ըզքնարսըն տան
Ի պարկեշտ ձեռս և զերծս յաղտոց ·
Եւ անդ Ռասին, անդ և Թիւբէն

Զաթենացւոց շնորհօղն կայեն
Ի յաղթօղ կառս հռովմայեցւոց :

Բայց , ո՛վ անկումն . յոր շուրջ դըժնեայ
Ծաղկունք գարուս թառամեցան :
Ծանըր կարօտն այն Եւկլիդեայ
Խեղդէ զարուեստքըս հրաշագան :
Ո՛վ սլացք հոգւոյն և հանճարոյ ,
Տենչ խօլական ցուրտ համարոյ
Առ հարըքս ըղձեր անեղին կալաւ .
Ըզըմբռնութեամբ արկլին համայն
Ըզպատառեալ մասն 'ի չափել զայն ,
Եւ ըմբռնութիւնն 'ի պաղ մածաւ :

Դու , քըրմանոյշ երկրիս մերոյ ,
Կոյսըդ Պինդեայ կամ Սիոնի ,
Թողուս դու զգունատ այս 'ի նիւթոյ ,
Ի հուսկ նշուլից քոյ ամպի :
Լըքանէ շունչդ աստուածային
Ըզցամաք սիրտս , յորըս քնարին
Ոչ ևս ազդեն գողտրիկ մըրմունջք .
Եւ առ Աստուած , որ դիտեն աչք ,
Առանց քոյ բնաւք են զերդ տաճարք ,
Ուր լռեն երգք և ոչ գոյ խունկ :

Լացցուք ուրեմն , հարց մեր որդիք .
Լացցուք . ճակատք մեր առցեն սուգ .
Եւ ըզչարիս , ոյց դարման չիք ,
Լուացցեն թող մեր դառն արտասուք :
Հելիոդորայ որդւոց նըմանք
Յերեկորեայ քաղեսցուք յոյդ
Ըզտաճարին փլատակ կործան .
Եւ ընդ մոխրովըն ճեռաստապար՝
Դեռ խընդրեսցուք ըզվառեալ հրատ
Մտաց հանճարոյ և ուղղութեան :



# ՇՈՒՇԱՆՆ

## Ի ՆԵՂՑԻՆ ՍԱՆԹԱ ՌԷՍԹԻԹՈՒԴԱՅ

### Ի ԿՂԶԻՈՋՆ ԻՍՔԵԱՅ

Յայգուն ձըկնորսք տեսին մարմին մի կընոջ ,
Վարեալ յախուռն 'ի գիշերոյն կոհակաց .
Գեղն ընդ քօղով մահուն ազդէր դեռ յոգւոջ :
Յորէ անտի ծնանի ծաղկանցըն բողբոջ
Յաւազըն ջուրս՝ յոր 'նայն կոխեաց :

Այլ ուստի՞ զայր կոյսն անծանօթ երեւալ՝
Ի նաւաստեացն հեքաց խընդրել ըզշիրիմ .
Ոչ կայր 'ի փտանգ ուրեք տեսաւ ինչ ընդ ծով .
Չէր օղ 'ի մասն . այլ դնէր մեռեալ , մերկ մարմնով ,
Եւ պատմուճան՝ ալիքն էին :

Չոգան խընդրել անդ յընտանիս բովանդակ՝
Նորա անձինն 'ի զարդ կըտաւ պատուական .
Նարդէս , շուշան , կապել նըմին փունջ պըսակ .
Ըզպարս աղջկանց , յերգել զողջոյն հուսկ նըւագ ,
Եւ մարս 'ի կոծ եղերական :

Զաւագն անբոյս նըմին մահիճ կազմեցին ,
Ըզնըշանակն անպըղծութեան և փըշոյ .
Այլ քաղցրացաւ ծոմն 'ի ծաղկանց սիրային .
Զափանցն աւազ լօրք զարդարեալ ծածկեցին ,
Եւ ծաղկէ բոյսն ամարանի :

Եկայք քաղել , կոյսք , ըզմենիկդ հեշտ շուշան ,
Մեղուք սըրտիցս , ոյց սէր՝ է մեղր խակ ինքնին .
Հրեշտակք արկին յերկիր ըզհատոն իւր սերման .
Անուն նորին՝ խորհուրդ , և հողն է տապան .
Բուրմունքն ըզմիտս հանեն յերկին :

# ԽԱՆԴ ՈԳԻՈՑ

Երբ որոտման արծուին յերկին
Ըզգանիմէդ շողէր 'ի վեր ,
Մանուկն յարեալ յերկսս երկրին ,
Ընդ աստուածոց հաւոյն կըռուէր :
Այլ 'ի մագիլն երագագոյն
Զերկչոտին կողս ալընդեալ արծւոյն ,
Ի հայրենին կորզէր դաշտաց .
Եւ խուլ յաղերս նորին բարբառ ,
Արկանէր զինքն , որ դեռ դողայր ,
Ցասս անմահիցն երկնաւորաց :

Սապէս մինչ յիս դու զեղանիս ,
Նռանդն աշխոյժ , արծուդ յաղթող ,
Բոցանըշոյլ թեւոցդ 'ի թիւս
Սըրըանըւէր ունի զիս դող :
Ընդ զօրութեամբըդ տատանիմ .
Խոյս տամ , զի մի անսըլեամբ քոյին
Ի չեք դարձցի սիրտ մահացուի .
Որպէս 'ի հուր , զոր վառէ շանդ ,
Ծախի յանչէջ բոցոյն 'ի հրատ
Խարոյկ , սեղան ընդ տաճարի :

Սակայն առ թափչ մըտացս 'ի յոյզ
Ընդ վայր հեստանքն են ըզգայնոց .
Ընդ աստուածոյն ընկճեալ հոգւոյս ,
Ոստնում 'ի սլաց , տրոփէ յիս ծոց .
Շանթն յերակունս իմ ծաւալի .
Եւ զծախիչ հուրն հիանալի
Ե՛ս արծարծեմ՝ թէ մաքառիմ .
Եւ հանճարոյս ուղխից կուտակ
Ի դաշնակաց յորդեալ վըտակ ,
Ծախեալ մաշէ զիս յեռան ուժգին :



Աղէ յիս հեքս հայեաց , Մուսա .
Չէ այս ճակատն այն վառ 'ի խանդ ,
Եւ դերահրաշ ոչ ակն է աս ,
Յոր սըրբալոյս փայլակեր շանդ :
Ազգեցութիւն քոյ այդ ծախիչ
Հազիւ զկենաց մընացորդ ինչ
Յառոյգ տիոցս եթող առ իս :
Ի ճակատուս իմ դալկահար՝
Մընայ եւեթ դոյզն ինչ նըշմար
Փայլատականն որ եհար զիս :

Ո՛չ քերդողին անազգական ,
Որ ոչ թանայ սըրինգն 'ի լաց .
Եւ ոչ յաւիտն ողբերգական
Բորբոքի խանդն հանդարտընթաց .
Ի յորդ և ջինջ իւր երակէն
Ի չափ և թիւ դետահեռեն
Առուք մեղեր խառն ընդ կաթին .
Եւ երկչոտին այն Իկարեայ
Նընդաւ թեւոցըն Պինդարեայ
Հոսել յերկնից չէ ինչ հնարին :

Բայց առ վառել մեզ ըղձողիս՝
Այրել և թափ կորզել է հարկ
Ի ժըլատ երկնից հուրս երրակիս :
Նկարեմք լոկ , թէ զգամք համակ :
Սիրտք մեր լուսով եռանդալից՝
Ըզճառագայթս համագոյից
Ողջոյն 'ի մի խառնել սպառին :
Զի՞ զօրպարտէ զկեանըս մեր մարդ :
Այլ զոր խանդան մեզ լամբարդ այդ
Ծոլայ 'ի կրից հուր բոցային :

Ո՛չ բնաւ 'ի սիրտ հանդարտագին
Ծընաւ եռանդն աստուածեղէն .
Եւ ոչ այն յոյզքըն սիրային ,
Որ յերգըս մեր զաշխարհ նուաճեն :
Ինքն Ապողոնն իսկ Հոմերի

Երբ 'ի տեղալ ըղձեռան յերկրի՝
Ի կատարաց գայր Երիքսեայ,
Ընդ դըժոխոց թեւացեալ եղերս՝
Թաթաւէր զզէնսըն մահաբերս
Յեռանդնապտոյտ ջուրս Ըստիւգեայ:

Ի վեհափայր իջէք բարձանց,
Զոր անարգէքդ յեռանդըն մեղկ.
Ի վսեմական լոկ սըրընդաց
Թըռչին նըւագքն աստուածեղէնք:
Սիրտ երգողաց որդւոց քնարին
Ըղձմանութիւն բերէ վիմին,
Որ զմեմնոնեան մընչէ շիրմաւ.
Ում առ 'ի տալ շունչ և բարբառ,
Հարկ է զի զշող իւր ջինջ և վառ
Ակըն տուընջեանն արկցէ հարկաւ:

Եւ դու կամի՞ս զի լուցից դեռ.
Ըզթաքուցեալսն ընդ մոխրով հուրս.
Եւ 'ի բարբառս լուծեալս յեթեր
Յընդեացի հուսկ 'նըշխար հոգւոյս:
Իբր ըստուերի երազք են փառք.
Նովաւ հատան աւուրցըս շարք,
Զոր 'նա ուրախ անցնել պարտէր:
Խընդրե՞ս զի 'նմա ես զոհեցեմ
Զայս հուսկ իմ շունչ կենացս այժմէն:
Կամիմ պահել զայն առ 'ի սէր:



# ԱՌԱՆՁՆՈՒԹԻՒՆ

Զըքնաղ լըճիդ առ ափան,
Հեռի յանմտաց պաշտեցելոցըն կարծեաց,
Կաս դու ծածկեալ իմաստութեանդ 'ի վահան.
Ի հեշտ աւուրցդ ինչ ոչ կարօտէ ժամանակ.
Այգդ էր պայծառ. շարժէ զնախանձ պատանւոյս
Հանգարտ և ջինջ կապոյտ կենացդ յերեկոյս:

Զոր մեք աւուրս առեմք բարեաց,
Փայլակն է այն շողեալ ընդ ցայգ մըրըկալից.
Զեր ինչ, թէ զսէր առցես 'ի բաց,
Որ իմաստնոյն բերցէ կըսկիծ:
Այլ զի՞նչ. սէր ընաւ ոխոց է կից:
Քաղցր և յաւէժ հուրդ 'ի յոգւոջ եղեալ փակ,
Խուն իւր բոցովն ազդէ ըղտապ ջերմագոյն.
Է սա հաստիչ մարդկան այն շունչ գերունակ,
Որ չիջանի սուկ ընդ հոգւոյն:
Գաղտնիք են մեծ՝ լայնել զոգի, կարճել զիղձ,
Զոր խաժամուժն անգիտանայ գըլխովին:
Դու գիտես զայն. որ զերջանիկդ այդ անկիւն
Դըներս պատուար սիրոյդ, քըմոց, վայելից:
Չելանեն իղձքդ անդր ըստ գեղջուկ քոյ սահման,
Սակայն քոյ միտք լայնածաւալ են պարզին.
Բովանդակեալ զաշխարհ համայն՝
Ջահն իմաստից առ լոյս մըտացըդ բանին:

Առ Տիբերի և Նիլոսի, Գանգիսի
Նկատես զի յար ընդ ընաւս, 'ի դէմս այլազան,
Մարդն է միշտ մարդ. ընդ տիեզերս՝ ամենայն
Գընայ յանշարժ օրէնս, ոչինչ փոփոխի.
Նկատես զի ազգք մի առ միով պակասին
Որպէս զաստեղս յերկնից կայան.
Ձեռաց 'ի ձեռս փոխի մական.

Ազգք գլուրեանց դար , մարդիկ գլուրեանց օրն ունին ։

Ընդ օրինօքըս գերունակ
Վարին 'ի թեւս ժամանակին
Պետութիւն , փառք , ազատութիւն .
Զաստուածս ինքնին եղծ ժամանակ
Ըզհնոց ազանց թանձրամըտաց ,
Եւ զոր ըստ չափն հըպարտացեալ մարդկան ազգ
Ճըշմարտութիւն կարգալ իշխեաց ։

Ի մեծատարր այս մեգ ամպոյ
Զինչ իսկ առնել է իմաստնոյ ,
Զոր տագնապեն ցանգ տարակոյս և պատիր .
Շատ են նըմա յանցս անդ քաղեալ աւուրք խուն ,
Զոր յիւրն 'ի բաստ և յուզղութիւն
Փութայ ածել նա 'ի կիր ։

Զայրս երջանիկ և զիմաստուն ես տեսի ,
Եւ հիւր իւրոցն եղէ յարկաց .
Ի հովանիս նա ձեռատունկ բուսակաց
Դիւրեէր ըզժամս յանոյշ դաշնակ քընարի ,
Նըւագելով զիւր բաստ կենաց ։

Գութ քեզ արկցեն , Տէր , իղձք սըրտին երախտեաց ։
Ոչ թախանձէ ըզքեզ յաղերս սընոտի .
Միայն պահեա նըմին զանշուքն բաստացուած .
Ո՛ւմ նուազ հայցէն , տուր զամենայն լիուլի ։

Իւր սիրելեացն անոյշ դասակ
Ցանգ առեալ պար գլուրև 'ի յարկան հըրճուանաց ,
Հարսն և մանկունք զալեօքն հիւսեն թող պըսակ ,
Զերդ ծառ հաստուն պըտղին պըտղովք փառազգեաց .
Բլուրք իւր հասկօք ոսկեվարսեալ դեղնեացին .
Որ առ ժայռին իւրով լըճակ՝ լիցի վճիտ .
Սիրուն յասմիկք խիտ հովանեօք թանձրացին .
Արև իւր հեշտ , երկին կապոյտ պարզեալ միշտ .
Ծորանք գինեացն հասունացին վասն եկին ։



Իսկ ես հեռի յայս երջանիկ դադարաց ,
Ո՛հ , զիմագրաւ դեռ մըրըրկաց և ալեաց
Գընամ վարեալ յարբուն տիոց և 'ի յուսոյ ։
Սակայն ծըփեալ յալիս և խանջ 'ի հողմոց ,
Գամ , բարեկամ , ցանգ յերեկս
Առ ոտս անկեալ ժայռեցըդ քոց
Կապել այսրէն զիմ ըզնաւակն յափունս քոյ ։

---

## Լ Ի Ճ

Ա՜յսպէս ուրեմն 'ի նոր մըղեալք միշտ ափունս ,
Վարեալք անդարձ 'ի մութ յաւէժ գիշերոյ ,
Չիցեմք կարող յաւիտենից ընդ անդունդս
Մի օր խարիսխ արկանելոյ ։

Ո՛վ լի՜ճ , հազիւ լըցաւ տարւոյն ասպարէզ .
Առ քաղցր ալեօք , զոր տեսանել էր նըմա ,
Տես , միայնիկ գամ աստ 'ի վէմս հանգչիմ ես ,
Յոր դու նըստեալ տեսեր ըզնա ։

Ընդ խոր այս ժայռս այսպէս մըռունչ դու տայիր .
Խորտակէիր այսպէս 'ի կողս այդ 'ի հերձ ,
Եւ թափէր հողմ զալեացդ ըզծուփ փըրփըրալիր
Առ պաշտելւոյ ոտիցըն մերձ ։

Յիշե՞ս , լռիկ թի վարէաք յերեկոյն .
Չըգոյր շըշուկ այլ ընդ ալիս և յերկին ,
Բայց միաձայն թիավարացըն թընդիւն
Ի քաղցրագեղ ալիս քոյին ։

Յանկարծ բարբառ իմն անծանօթ 'ի յերկրի
Ըզգուարթ ափանց յարուցանէր զարձագանգ .

Լռեսցին ջուրք . և ձայնն ոգւոյս սիրելի
Այսգոյն բանից արձակէր վանգ .

« Կա՛ց , ժամանակ . և դուք , ո՛վ ժամք բարերարք ,
Դադարեցէք արդ յընթացից .
Տուք ճաշակել մեզ զայս աւուրց սիրունակ
Ըզշոյտ բերկրանսըն վայելից :

« Շատ են թշուառք , որք արդ առ ձեզ պաղատին .
Վազըն նոցին սահեալ գնասջիք .
Առէք ըզկեանսն և զկեղեքիչ հոգ նոցին .
Մի յուշ լիցին ձեզ երջանիկք :

« Այլ ես վայրկեանս ինչ վայրապար հայցեմ դեռ .
Սահեալ զինեւ ժամն անցանէ :
Ցգիշեր ասեմ . Զի՞ խուճապես . և զգիշեր
Այգըն մերժեալ փարատեսցէ :

« Եկ սիրեսցուք ուրեմն ըզսէր քաղցրութեան ,
Մինչ փախչին ժամք երագասլաց .
Ժամանակին եզր և մարդոյ չիք կայեան .
Անցանեմք մեք յիւրն 'ի յընթաց : »

Ժամանակ խիստ , զիա՞րդ վայրկեանքս ըղձալից ,
Յոր մեզ հոսեն վայելք սիրոյն յորդաբար ,
Սրասցին 'ի մէնջ նոյն վաղւք ընթացից՝
Որով աւուրքս յոգնաթշուառ :

Ո՛հ , չկարիցեմք պահել ըզհետս գոնեայ .
Գնացի՞ն անդարձ . 'ի չի՞ք դարձան բընաւին .
Որ ըզնոսին ետ ժամանակն և բառնայ ,
Ո՞չ դարձուսցէ մեզ վերըստին :

Յաւերժութիւն , ոչինչ , անցեալ , վիհք մըթին ,
Զի՞նչ զընկլուզեալսն 'ի ձէնջ զաւուրսն առնիցէք .
Տո՛ւք բան . դարձցի՞ն մեզ ըզմայլմունքն երկնային
Զորս առ 'ի մէնջըն յափըշտակէք :

Ո՛վ լըռին ժայռք , ո՛վ լի՜ճ , անձաւք , մութ մայրիք ,



Յորս անխայեալ և նորոգէ ժամանակ .
Դու պահեսջիր գէթ , ո՛վ բնութիւն գեղեցիկ ,
Ըզգիշերոյն այն յիշատակ :

Մընասցէ այն յանդորրդ ու 'ի ծուփ , լի՜ճ սիրուն ,
Եւ 'ի պատկեր գեղածիծաղ քոց բարձանց ,
Յեղեւին թուխ , յառապար ժայռըս կանգուն ,
Ի կախ զալեօքըդ վերամբարձ :

Մնասցէ 'ի հողմն հեզաբարբառ խուսափուկ ,
Եւ 'ի հընչիւնս , ոյց յափն յափնէ կըրկնին զանգք .
Յարծաթածամն աստեղ , որ մեղմ գիրդ նըշուլք
Ցերեւոյթ հոսեն շող բացխտակ :

Հողմն հեծեծող և եղեգնիկն 'ի մըրմունջ ,
Եւ հոտանոյշ հեզիկ բուրմունք 'ի բացին ,
Եւ որ լըսին , որ տեսանին , ոյք գոյ շունչ ,
Գոչեսցին բոլոր թէ՝ Սիրեցին :

---

## ՓԱՌՔ

### ԱՌ ՔԵՐԴՈՂ ՏԱՐԱԳԻՐ

Վե՜հ սիրելիք իմաստութեան դըստերաց ,
Զեզ պըլազան բանին շաւիղք արդ երկուք .
Երանութեան է մին , երկրորդըն փառաց .
Հարկ է ընտրել , մահացուք :

Քեզ , Մանուէլ , եհաս հանուրցըն պայման .
Մուսայն եհեղ 'ի քեզ պարգեւս կանխահաս .
Զախողութեամբ , փառօք աւուրքդ հիւսեցան .
Եւ դու յարածոր հատեալ կաս :

Շիկնեաց , և մի բերեր նախանձ խուժանին ,
Որ ըղձանգիստն անշահ խնդրէ ջերմարար .
Վասն իւր աստուածքն ըղձեալ բարիս տան գեղին .
Այլ մեր բաժին է քնար :

Քոյ խակ են գարք . և աշխարհ՝ քոյդ հայրենիք .
Երբ ոչ եւս եմք , զին բատուերաց մեր սեղանք ,
Յոր հանճարոյդ կազմին արդար ապառնիք
Զանմահ փառաց մրցանակ :

Այսպէս յոխորտն արծիւ 'ի կայս շանթընկէց
Ճախրեալ , և հարթ կալեալ զյանդուգն իւր թըռչան ,
Թըռի առել մարդկան . Ծընունդ եմ երկրի .
Այլ կեամ յերկնից 'ի կայան :

Այս , մինան քեզ փառք . այլ կաց , ո՛ 'ի քնին՝
Ո՛ր այն սըրբոց զուարթաց մըտից է պայման .
Տես , բախտն ողորմ Նըստեալ առ դրան տաճարին
Պահէ զեկըն աստիճան :

Ասա ծեր ոք այր , զոր Յոնիա ապառում
Եանս զի փնայր ծովէ 'ի ծով մըշտապղեաց ,
Վարձս հանճարոյն իւրոյ մուրայր զաշացուն
Ըղձաց թացեալ յարտասուաց :

Ընդ տաշրեալ Թասսոյ 'ի բոց դըժընդակ ,
Ըզփառս և զգութ սիրոյն յերկաթըս քաւեալ ,
Ցերթայն առնուլ ըզյաղթականըն պըսակ ,
Մուզի 'ի յարկս անդ մըռայլ :

Դասք թըշուառաց , պարագրելոց , բոպանդից
Կըռուին ընդ բնաւս ընդդէմ դաշնաց և բախտին .
Իբր այն թէ մեծ սըրտից անդուստ 'ի յերկնից
Մեծ եւս աղէտք կըշռեցին :

Լուեցի ուրեմն ըղձայնս ողբոց քընարիդ .
Զախողութեան վիշտք՝ խաչընդոտն են փառաց .
Իսկ քեզ , երբեմն արքայդ , արկածք աղէտից
Տացեն զոգի մեծապանծ :



Զի՞ քեզ ըղձաս թէ անողորմ հրամանդ այդ
Ի խանձարրոցդ ափանց կապէ զքեզ 'ի բաց .
Զի՞ փոյթ թէ ուր քեզ պատրաստէ արգեօք բախտ
Ըզգերեզման գերապանծ :

Աքսոր , երկաթ բըռնաւորացըն Գաղեայ
Ոչ կապեցին ըզփառսդ յափունս ուր մեռցիս ,
Արդ պահանջէ զայն Լիսպոնա . զայդ Նըմայ
Ահա թողցես դու բաժինս :

Որք մոռացանն՝ ողբասցեն զայրն անուանի .
Տարագրելոցն Աթէնք բանայ զիւր մեհեան .
Որդեք Հռովմայ , երբ Կորիոլան փախճանի ,
Խընդրեն ըզվրէժ իւր անուան :

Յառաջ քան զէջն 'ի մեռելոց եզր ափանց՝
Ովիդիոս բառնայ յաղերս ձեռս յերկին .
Թողու զածիւն յաւանդ խըժից Սարմատաց ,
Եւ Հռոմայ զփառս անձին :

---

## ԳԹՈՒԹԻՒՆ

### ՆՈՒԱԳ ԱՐԵՒԵԼԵԱՆ

Աստուած ասէր երբեմն արփւոյն .
« Ո՛վ որ փայլես զանուանս , յըղեալդ 'ի յաջոյս
Տանել բնաւից զիմ շուք պայծառ և զհաճոյս ,
Զի գովեսցեն զիս սիրեղերք՝ երբ զարթնուն .
Դու , որոյ լոյս սըփռէ զպարգևս հրաշալիս ,
Որ ընդ երկինս հըսկայաքայլ յառաջես ,
Հեղեալ 'ի բիւս հանուրց նըշոյլս կենդանիս ,
Ի՛ւ 'ի բոլոր ապարիցիդ , տամ ցիս ,
Նըմանագոյն առ իս , և մեծ յաչսդ իցես :»

— Թող ըղձիմք, պատասխանի ետ արփին.
« Ոչ 'ի ծագելս ըզլոյս յանչափ միջոցին,
Կամ մինչ շողամ յաւազ վայրացն ամայի,
Եւ զԼիբանու հալեմ ըզպսակ սառնային.
Ոչ մինչ նկատեմ զիս 'ի ծովուցն հայելի,
Եւ կամ ըզհուր փըրփրամ յալիս եթերի.
Այլ ընդ վիմին երբ սողոսկիմ ընդ ճեղքուած,
Ուր հէք բանտեալն յաշտարակին կայ զընդան,
Եւ անդ ջընջեմ զարտօսր յեզերըս բըբաց՝
Զուարթացելոց ընդ մութն 'ի շող մի տուընջեան: »

— Սէր քոյ է նման սիրոյս, յաւել Եհովայն:
Զոր ճառագայթն առ բարեգործ իւր վըսեմ,
Ըզնոյն և ես, որդն երգեցիկ, յանձն առեմ:
Հընչէ քընարս իմ յաղեբախս հըրճուական,
Ոչ առ խայտալ 'ի շունչ փառաց ինչ ըլտակ,
Կամ աւանդել աւուրց զանուան յիշատակ,
Կամ ամբառնալ յերկին 'ի նուագ յաղթական,
Այլ 'ի մընջել ընդ մայլ գիշեր գաղտնեաց խոր
Ի սիրտ հեքին, որ լուիկ անձայն մնաւոր,
Լսէ եւեթ յերկրի շըշունչ հեռաւոր,
Եւ տանել անդր ընդ ծերպ սըրտին զիմ ըղձայն:

---

# Ի ԾՆՈՒՆԴ ԴՔՍԻՆ ՊՈՐՏՈՅԻ

## ՏԱՂ

Հեղէք զարիւն, հարէք դարձեալ.
Որչափ քըշէք զասպըս նորին,
Սուրբ բանն և ևս տեսցէ շաքեալ
Մինչ ըզնոր ծիլս բարունակին:
Որ զչար պատրէն՝ տատանա՞ծ է այն:
Մինչ վէհ զոհից կայլակք արեան



Ծնանին ըզհօյլ վըրիժառուաց.
Ցանդ ճողոպրեալ 'ի Գողգոթայ
Մանկիկ զոր սուրբն մօրանայ.
Աճէ յըստուեր Տեառն հովանեաց:

Ծընաւ մանուկն այն հրաշալի,
Ժառանգաւոր վկայի արեան.
Ծնունդ տարաժամ ինչ պատգամի.
Զաւակ վերջնոյ հաւակ հեծութեան:
Մինչ պըղընձոյն զուան որոտք,
Ցարթնու Գաղղիա զարմանալեօք
Ընդ պտուղ զոր մահ բարձեալ բերէ:
Ով խազք բախտին, երկնաւոր հրաշք:
Սապէս ծաղկէ ընդ աւերակ
Շուշան տընկեալ 'ի մըրըրկէ:

Գայ նա, մինչ ազգք լեալ նըշաւակ
Փըռնոյ իւրեանցն առաջնորդաց,
Յեզր անդընդոց գըտան թափառք,
Իբր անհովիւ երամք խաշանց:
Մարտն ընդ անցեալըն ցընդելի
Եւ յապագայն անգիտելի՝
Լուղայ 'ի վէհ անկերպարան.
Խէթ զուղեցոյցն յածէ մոլար.
Զայնի միոյ սպասէ աշխարհ.
Երկիր կարօտ է դիւցազան:

Առէք խրախոյս. այսպէս ծնանին.
Այսպէս յիւրումըն բարութեան
Սերմանէ տէր, և երբեմն
Յաւուրս անբեր ամայութեան:
Սապէս մինչ սուրբ ակընկալեօք
Վարատական հովուացըն ջոկ
ԸզՄովսէս նորոյ խօսէր,
Յեղեալ ըզքօղըն գիշերին
Խորհըրդաւոր աստղ ըզնոսին
Ի խանձարուրս առեալ ածէր:

Սուրբ խանձարուրք, յոյս գեղեան,

Զոր ունի մայր կալեալ 'ի գիրկ ,
Փեւ որդ Գաղղիա յառնէ կանգուն :
Ոչ ընաւ պատրեն բաքանչելեք :
Աներկեան ընդ խանդ իւր վառ ,
Առ խանձարուրան խմա որդ քընար
Պարզէ ապայս յաղթողական .
Եւ արքայիցն որպէս Նէլց՝
Տենչ իմն անյայտ յորդոր տայ ինձ
Տանել պաշտօն մատաղ մանկան :

Նմանեալ որդոյն այն Պերգամայ ,
Մօտ խանձարրոց ունացէ իւրոց
Զխչխանս , ըզկին զոք և զարքայ
Ըզդամբանաւ ուրուք 'ի կոծ :
Մինչ գըգուէ զինքն 'ի գիրկսըն մայր ,
Եւ խընդրեացէ նա զիւրն ըզհայր ,
Տեսցէ զի աչք խոնարհեսցին .
Եւ հէք այրին անմըխիթար
Ըզտապանին զօղեալ ըզքար ,
Մատամբ ցուցցէ նըմա զերկին :

Մօտ 'ի սպառուած ժամանակաց
Տեսցէ զանծայրն արքայութիւն ,
Որ 'ի շուքեղ ելեալ մըրրկաց՝
Դեռ կայ յախորտ յանկմանն իւրում :
Բայց սուրն 'ի դաշտս յաղթանակի
Արկցէ մեզ յուշ յիշատակի
Զառեալ խոստումն 'ի Կլովիսէ ,
Յորչափ ջախջախ սըրոյն ընկոր
Հատեալ փայլակըն փառաւոր
Յորդւոցն 'ի ձեռըս նըշողէ :

Խուլ առ դարուն խրատըս կընաւ
Որովք մարդել սիրէ զնաս ,
Ինք խեղամուտ լիցի թէ բախտ
Կարգէ զարքայս 'ի գահ կամ մահ .
Եւ զիւցազանց հընոյ զարմին
Խիզախութիւնն էր շուք նախկին ,
Եւ առաջին աթոռն՝ ապար :



Զուր գոչեսցէ թող մարդկութիւն ,
Վասն հայրենեաց հեղեալն արիւն
Գոլ արքայից ծիրանի վառ :

Դողումն արկցէ ձայն պատմութեան ,
Մարդկան դատօղն այն կենդանի .
Եւ զխօսացէ , զարմ զաղղիական ,
Զի փառք զոյգ շահս 'ի ձեռան ունի .
Մին սըփռեալ փայլս արիւներանգ ,
Գըծէ զահեղ ընթացս՝ յոր ազգք
Զարեօք եղեն բարեբաստիկ .
Հանգոյն ջահիցըն Կատաղեաց ,
Զոր տանէին զհետովք իւրեանց
Դարուցն հընոց չարքն անուանիք :

Միւսն յաւուրց սեաւ մոռացմանէ ,
Յոր թաղի ազգ և թագաւոր ,
Զիմաստուն զարս ևեթ փրրկէ ,
Եւ զքաջութիւն զօրինաւոր :
Նըշույքն անբաւ և մաքրափայլ
Ընդ ապառնի սերունդս անցեալ ,
Ի տիւն անանց երթան խառնին .
Հանգոյն հրաշից խաղաղական ,
Զոր քեզ , Վեստա , ձեռք մաքրական
Լուցանէին 'ի քոյդ բագին :

Առցէ 'ի միտ եթէ զօրդիս
Յարքայից գահ ծնեալցի այն ,
Որ արասցէ մարդկան յայտնիս
Զոյգ զիրաւունս ընդ ուղղութեան .
Եւ զի բազմեալ 'ի վեհ բարձին ,
Պարտի պաշտպան կալ ինքն անձին ,
Որպէս աստուածքն յիւրեանց սեղան .
Ընդ ընաւս յիշել զպատկեր նոցուն ,
Եւ տալ պաշտել ըզքօղ ամպոյն՝
Խըղարց ընդ մարդն և ընդ նոսայն :

Հուպ առ աթոռըն բազմամեան ,
Յոր կայ բազմեալ միւս ոք Նեստոր ,

Գոռ փոթորկաց ժողովրդեան
Դեռ մրրընչեն ալիքն անդորր :
Արդարն, յոր աչք երկնից հային,
Օրինակաւ ցուցցէ անձին,
Զիարդ անկեալ ընդ առապար,
Ի մնացուածոց բեկման նաւուն
Մարթի անդրէն յեզր անդ կանգուն
Անմահութեան կերտել տաճար :

Այսպէս 'ի քնար իմ պարզէին
Հանդէպ աչացս բաշխք բախտի,
Հասեալ սատար իմոյ խանդին
Բնաւից յերկինս և 'ի յերկրի :
Քաղցրահայեաց ակնարկեալ Յոյս
Ի սուգ Գաղղիոյ ծաւալէր լոյս.
Որպէս ըղձեա երկայն ցայգոյ
Ի խանձարրոցն ելեալ մըթից
Այգն եղծանէ զքայլ թախծալից
Մռայլ ըստուերին խուճապելոյ :

---

# ՅԻՇԱՏԱԿ ԼՃԻՆ ԼԵՄԱՆԱՅ

Քուն ընդ արթունս դեռ յերազոց անուշակ,
Մինչ ձայն տայ լիճն հեռուստ, զեռեալ զքոյ զափամբք,
Առանձնացեալ յանշուք իմ վայր միջոցին,
Եւ փակեալ զաչս հայիմ 'ի խորսըն ներքին.
Ահա զաչօքս իմ թաւալին ըստ դիպաց
Պաճոյճք երկնից ընդ բընութեան նըշխարաց :
Թէ զգունոս Աստուած 'ի շփոթ տարերս փոխարկէր,
Այսգոյն բեկորքն անցանէին առ ընթեր :...

Մեծ կիրճք կապոյտք, կամ տատասաք մեղմագնացք
Կատուեայ թեօքըն պաղպաջեալ լուսարձակ,
Ցափանց յափունս ածեն խարտեաշ դասակաւ



Խոտս յերիկէ հընձեալս՝ 'ի ջուրսըն թաթաւ :
Դալար լերինք տափճանեալք 'ի բոլորակ,
Զկողիւք բառնան զյարկըս շինին բոլորակ.
Այսպէս հովիւն հուժկու դիւրաւ և հեշտինս
Ուղն ընդ բազկօք՝ ելեալ գնայ 'ի մայրիս :
Յետ 'ի բարձունս՝ թուխ եղեւինք, լօռք վախից,
Եւ մեծադեղ երընջովք մարգք յողնաբիծ.
Եւ ընդ ամառն ողջոյն թաքուն տաղաւարք
Ի հուսկ կատարս գընդայդ այդմիկ մարգարնակ,
Ուր հիացեալ աչք ընդ անհաս բարձրութիւն,
Սլանան սիրով, որ յարաթռիչ է մինչիւն . . . :
Ցամայն յածեալ մարդ, ընդ կաթին և մեղեր,
Զազատութիւն գտանէ, յերկնից զոր եբեր :
Զբարձանցըն 'ի վեր ձիւն բոլորակ կամ կարմիր,
Ծաղիկ պահեալ յամառն, յամպոց ցօղալից.
Սառոյցքն 'ի կախ, համատարած մածեալ պաղ,
Առ 'ի հովտին պատուք կաթեն հաղ քան զհաղ.
Ընդ խուլ անդունդն հասին թաւալ ձիւնակոյտք,
Եւ ընդ ձեռամբ Տեառըն ճըռնչեալք իբր բոցունք,
Ցիրմէ լուսոյն լուծեալք, ուղեալք ընդ արփին,
Ճակատք երկրի քամեն զքըրտունս նորին :
Ի նսեմ հովտին նկատեմ հարեալ յըսպիտակ
Հեղեղս փոշւոյ, թեւագգեցեալ ըզկոհակ :
Խուլ մռունչք նոցին այնքան հեռուստ որոտան,
Մինչ ոչ լսել ինձ ըզչառաչն՝ յոր դէտ կամ:

Հրեղէն զերդ նետ սլացեալ 'ի խորս 'ի բարձանց,
Զըգեն չըչող սահանքն ըզմիտս 'ի հիւսց,
Որ զերդ ծըւէնս տատանաւին հողմավար՝
Անձրեւաթափ ժայթքեալ բախին յառապար,
Եւ չառաչմամբ թափին 'ի վէմ ծըխամած,
Իբր 'ի դալար փայտից լուցեալ հրատ հովուաց :
Ի գոլոշեացն հազիւ մընայ բուակն՝
Յոր ներկեալ զերանգսն աղօտ ծիածան,
Խուն մի ծըփեալ ընդ ծըխաշունչըն կոհակ,
Զերդ մեռելոյ անուան վաղանց յիշատակ :

Յալիսդ, ով Թուն, հանգչի մակոյկ մեր հեզիկ,
Ոյր չըթողու փըրփուրն 'ի ձեռս դառն ինչ սիկ.

Ալպք՝ եզերք են քոյ, կապոյտ Հայելի։
Ահա գիշեր. լուսինն ըզքեւ ծածանի,
Վըտակօրէն սըփռեալ յոյլայլ իւր շաւեղ
Զարծաթափայլ իւր անկուածոյն ըզբիւրեղ,
Եւ նըշմարէ յեզերց այլոյ աշխարհի
Զի քորքն աստեղք թանան յալեացըդ միջի։
Զընկուզենեօքըն ծաւալեալ իւր մահիկ՝
Գոգ ծըփծըփայ ըզծաւիս ալեաց հանդարտիկ.
Մերթ զինքն յայտնէ եւ մերթ ծածկէ մէն մի ծառ.
Յաջ մակուկին պարզէ ըստուեր զմեր տխպար.
Ի ձախ՝ լերինք ձիւնապաճոյճք, սառնային,
Սպիտականիչ փըրփրովք 'ի հեռաստըն ուղին։
Զըմբըխայեա կոթող պատեալ 'ի գոհար,
Եւ 'ի ճակատ լուսանըշոյլ պըսակ վառ,
Լըւին Եունկֆրաւ 'ի խաւըրախէն գալարեալ
Պարզէ հողմոց ցոյցըդ զլօդիկ իւր ըսփըռեալ։
Յայդ պերճ տեսիլ՝ մոռանայ յարմըրն թիակ
Բաղխել զկուտեալն առ եզերօքըն կոհակ -
Լըսի լոկ ձայն ջուրցն ըսպիտակ մարգարտաց,
Որք գան ընդ լիճն հօսին՝ կուրծն 'ի կողաց,
Եւ անուշակ պյաուծն ալեաց ուռուցիկ,
Անյօդաւոր ձայնք ջուրց խաղաղ եւ լռիկ։
Ծովակ սիրուն. գոյ արդ սառէն յայս մակոյկ
Սիրտ քան ըզմի՝ հատու մընչմանցդ ողորմուկ,
Որ մինչ տեսլեանդ ազդեցութեամբ կայ զեղուն,
Վերացեալ ծոցն՝ ուռնու ալեաց քոց հանդոյն.
Պարզի յաղօտն 'ի լոյս՝ խակալ մըտադիր
ՅԱստուած, 'ի սէր, յազատութիւն եւ յերկիր։
Եւ անկարող 'ի բան, ընկճեալ յըզմայլմունս,
Հեղու ըզխօրս ոգւոյ բնաւից ... զարտասուս։

Երջանիկ ծնունդ զարմից Թելլեայ դու Հիւպէր,
Զոր մօտ յոյժ յիւր խորանն՝ յԱլպիս կարգեաց Տէր.
Փառաց լերանցդ հեզիկ եւ խոնարհ դու թարգման.
Քաղաքացւոյ հոգի 'ի սիրտ երգարան։
Ահա կատարքն եւ լիճք փայլեալք յաստեղց վառ,
Զոր պշուցելոցս աչաց պարզես դու պայծառ.
Ահա եւ ժայռքդ, առ որս կարդաս կաթոգի,
« Հայրենիք » քաղցր անուն զոր մարդ տայ երկրի։



Ո՛հ, երկակի զօգիւք կապիս դու յերկին.
Սիրօղք բնութեան՝ քաղաքացի են կըրկին։

Բայց խոնարհ գոչես վառեալ 'ի գութ խանդակաթ.
« Սիրոյս անձուկ են այս լերինք շուրջապատ.
Ահա զկողիւքն ազատութիւն տայ ըզփայլ.
Այլ ես կըրկին կամիմ պաշտել զայն՝ լայնեալ։
Զի գուզնաքեայ թէ բեռն յանբաւ մէան իցեմ,
Զեմ ինչ ազատ, թէպէտ եւ զիս մեծարեն։
Ըստ զօրութեանն եւ բնաւ օրէնք են արդար։
Ժողովուրդ մեծ՝ խնդրէ զոտիւքն ըզմեծ վայր։
Թէ արքայից գութ պահէ զմեզ 'ի չարեաց,
Ոչ եմք անկախք քամահելովս ըզբըռանց։
Թէ զխաղ ազգաց խաղալ կամի որ յայս դար,
Հարկ է լինել հաշուել եւ ոչ մանրաբար։
Խանդաղակաթ ոգւոյս է միայն Հելուետիա.
Սիրեմ զորբանս, խնդրեմ զաշխարհ մի 'ի նմա ...։ »

— Սիրեա՛ զաշխարհդ, եւ մի՛ չափեր, բարեկամ.
Ոչ թէ չափով Աստուած ազգաց ետ սահման.
Հոգւոյ են պէտք. ազգ մեծ՝ վարեալ յաղթ ալեօք,
Առանց հոգւոյն անբաւ խուժան մի է լոկ։
Սըրբանուէր տարփմամբ ըմբնիկ աշխարհին՝
Հովուաց երամք ազգ մի ողջոյն կազմեցին.
Շիթ մի արեան, զոյր փառք ըզհեռաստըն պահեաց,
Ըզդրօշ ազգի միոյ ներկէ միշտ անանց։
Ո՞չ արիւնոտ նետըն Թելլեայ իցէ շատ
Յանմահ առնել զազգն, եւ զերկին իւր ազատ։
Գործ մի քաջի՝ ետ ըՍպարտայ երեք դար.
Հայրենական սիրով չափի լոկ աշխարհ։
Բնաւ հայրենիք են մարդն եւ փառք, մարդ ռազմին.
Զերդ Մարաթոն, Յուրիք, Մօռա, Սալամին։
Մեծ են ազինք, յորժամ իցեն սիրելիք.
Սկիւթաց ամայք են, Հելլենաց՝ հայրենիք...
Շուրջ ըզլերամբք եւ զկըղզեկօք ցան եւ ցիր,
Ըզմիգապատ սարաւանդօք ցօղակիր,
Արեամբըն հեղլով 'ի գիւցային երակաց
Լէոնիդ. անկեալ՝ յերկրի մատամբըն գըրեաց
Բանս արութեան, ազատութեան եւ սիրոյ,

Որք գաւառի նօթճեն զանուն մրչատգոյ :
Չեն պէտք երեւքն . որ մի դարձցի այդ բըլըակ ·
Ի Պարթենոն , 'ի Սալամին' այդ կոչակք :
Դու գրոշմեցեր զանուանս փառացն , իրաւանց
Ի վէմ անեղծ քան ըղքարոէս թագազանց :

Այլ արդ , Հիւպէր , համեճար' ոչ սուր տիրանայ ,
Իւ զօրութիւն ազգաց 'ի մէտ կըշռեալ կայ :
Արքայութիւն մըտաց եհաս 'ի վերջէ .
Ո՛չ ևս անպար . 'ի կռիւ մարդ մերկ իջանէ :
Վըրէպ են փառք յաղթանակաց բըռնութեան .
Տեսեր զի զմեր գործս արուեստից վէպք մեր լան :
Յաղթանակօք աշխարհակալն ապառում,
Յոր մեծացուն' արար զաշխարհն անձկագոյն ... :
Հարկ է զի ճգամբ մեծանձն ոգւոյ վըշտահար
Կայցի զՊասզըս խաղաղութիւն և համեճար .
Իւ զի մերոց ճըշմարտութեանց պայծառ լոյս
Յաչաց ազանց գողանայցէ ըզմեր սուրս .
Արմոդիոս որպէս 'ի փունջ վարդենի
Ծածկէր ըզսուրբ գաշըյնն' այլում ծարաւի :
Դիւցազն է այր որ ծառայէ աշխարհի .
Ուր ծնաւ որ մեծ , անդ պետութիւն մի կանգնի .
Երկիր որ ծնաւն ըզնա' օրհնեալ և պայծառ ,
Նովաւ աճէ և մեծանայ յիւրն համեճար .
Գերէ անուամբն ըզճնաւս որ զնկըն ծանեան :
Առ այս պայման' չիցես դու մեծ յոյժ , Նեման :
Բնաւ իսկ յղնարեալ երկիրն եհեղ երբէք Լն
Ի պարգևաց , սիրոյ , տաղից եղջերէն
Այնչափ անմահ քաջահընչող պերճ անուանս ,
Որովք յորդես զաւուրց զանդիւնս բազականս :
Ազատութիւն , սէր , ակնկորդ աշխարհի ,
Թևատարած կացին յալիսդ որքանի ,
Կամ զըռյնս եդին յականակիտ ջուրսդ յաւանդ :
Ահա զդալար Քըլարեայ դիտեմ զարևանդ ,
Ըզցնորական վայրս Ոսսայի անդաճմանց ,
Իրողականս և ընակացեալս յըստուերաց'
Քան թէ քըսան ազգ անսիրող և վատթար
Ըզհանգըստեան դիրան աստ փորէր ամս հազար .
Այնչափ հատել ըզհայրենիս զօրեն միոք :



Ահա այս մարդք , ժայռք Միկըլեայ և ալիք ,
Իւ առ 'ի կախ յոլորտս հովիտք Վոլէի ,
Իւ զհիւղեկօք փողփողեալ ցոլք արփենի .
Ուր 'ի խոտոց դաշտաց քաղեալ զխանթէփար ,
Ծըծեաց ըզչուշն 'ի նոցին բոյր անվըթար :
Այսպէս յիշումն երանաւէտն այն կենաց
Չեթող բնաւ զնոքն 'ի մռայլ ըստուերս քաղաքաց :
Ուն երկրաքարշ զբարձըր խոտոց պահէր բոյր .
Նախն իւր փայլէր երկին' վըխպմանցն անդ 'ի խոր .
Որպէս ուղխից ջուրք պըղտորեալք ըրթագոյն ,
Ի պաղն Արխա բերեն զնախկին զովութիւն :

Վըլգեռ , ում զինչ անուն և բնաւ տացի այլ,
Է կենդանի շըրջան , և գար մարդացեալ .
Զոլորտ ընտրեաց ակամբն արծուոյ , լուսակին ,
Յեւ 'ի բարձանց դիտել ըզլայսըն բանին :
Ո՛չ թէ յայդ սարս ուր առաւել փայլէ Տէր ,
Ընդ մէջ ամպոյն այլ իմն երկին տեսանէր :

Պայրն իսկ , ըմբիշ խանջեալ 'ի կռիւ , յավերդ գայ
Անկանել անդ , բացեալ զերակս առ 'ի մահ :
Գոցցես մինչ հոգւք զալիսդ հասեն զերդ փուշի ,
Զայնն 'ի գոչիւնսդ , աչքն 'ի քոյ չանթ զըստանի :
Առ 'ի կողէն կորզեալ փետուր կարափոյ
Մօտ Ըսպլիտակ լերին փայլէ յալիս քոյ :

Այլ իմ, Կոպեռ , որանայ յափունսդ արդ հօգին ,
Ուր Կորինթա հանգչի յալիսդ ողբալին :
Ի տես շիրմիդ ճանապարհին առ երի .
Յանուն մարդոյ վըսեմ ճակատ քոյ կըքի :
Մտաց տապանին նա աղաւնի փըրկութեան ,
Ըզբըռնութեանն անդունդ եհաս ինք միայն :
Մինչ տիեզերք պարուանդեալ յիւր շըղթայս ,
Զօդոստափառըն ճակատու քընէր ծալս .
Վըէժխընդրութեան կայան' անկիւնդ երկրի խուն
Բռանայր քողք վառըն մըտաց և դարուն .
Չէր բաւական բեռն աշխարհի համօրէն
Զազատութեան թափել հուսկ շունչն 'ի սըրտէն :
Ի շունչ կընոջ հընչեաց ճայթիւն որոտման ,

Եւ շանթահար եղև ներքուստ գոռ Տիտան .
Անկաւ , փարեալ յիւր վէմ ցասմամբ վրիժու :
Եղեր Վէստա ապառաժեան և քինու .
Ի ծըխաշունչ ուերս հրածախ ափեղերաց
Ցոլւոյ քոյին գըտաւ՛նոցուն հուրն անանց :

Թո՛ղ այլք շը՛նթողք գոռոզութեան խուժանին
Մնասցեն ծառայք 'ի խոր մեծի գաղաղին .
Եւ կայսերացն հետևելով նուաստ կրօնից ,
Ի պատուանդան շիրմին գիցեն զհոյրենին .
Եւ զոգգ մի մեծ յընդվայրահար փոխեալ ջոկ ,
Տացեն ըղխոյր գըլխոյ լինուլ կամ ըղմյկ :
Նոր բըռնաւորս ծընցի արտօսր գերեաց .
Որ պանծացոյց զերկաթ , շըղթայս իւր գարրնեաց :
Ուշ որ ըղմարդ նուաստացուցեալ՝ մեծացի .
Նուազէ ըզբոցն որով փայլել նա կամի .
Ցածուցանէ՛ նդ իւրև զկատարն յոր զընայր ,
Կոփեալ զարձանն յամօթալիցըն կարկառ :
Անարգ՝ն այն խունկ փառեալ 'ի ձեռըս նոցին՝
Նախատանօք թէ կըշռիցի մահացուին ,
Վ՛խլաց նոցուն ծանըր կոթողն երկաթի
Որչափ վատթար նոյն և չըքեղ լինիցի :
Ո՛վ ըստուերի Աէյանք , տեսէք մայրամած .
Նա գտաւորս հանդոյնըս ձեզ գուշակեաց :

Թո՛ղ գործեսցեն . գառեսցէ սակ ժամանակ .
Գիւց խուժանին թող զանգեսցեն զարեան վաակ .
Բնաւք բաց յինէն առ ոտն անկցին պըղընձեայս .
Շգայել , նըմա ախեղերք , իսկ քեզ՝ արտօսր այս : —

Հիւղեր , այդ մեծ անուն , ըստուերըդ անձկալի
Իցիւ լայնեալ բացցեն զաշխարհդ հայրենի :
Պընդեա զաղեղն հին թուլացեալ յիւր բեռանց .
Սեղմ պըրկեսցի հանգոյց՝ զոր խուրձըն լայնեաց :
Փողովեաջիր ըղհիւթն 'ի բուն զաշնաւոր .
Զի մուլթին ասնէ ըղցեղս ազգ մի նոր :
Մեզ Գենեւայ բացցին ազատ նաւակայք .
Ազատութիւն ակարին՝ հզօրին է պարծանք :
Օ՛շ 'ի հազար թէ կուրս՝ որք զիւր կընճռեն ջուրս ,



Իբր եւրոպեան Պալմիր՝ 'ի մէսոց անդ խառնուրդս
Տեսցէ զՎեբրման , զիւրեր յիւրում պարըսպին
Հաջորդըս մօօք , խառնեալ ըղձեռն 'ի ձեռին :
Ջերդ բոյն արծուոյ , զեր 'ի վերոյ բըռնութեան ,
Տարագրելում լիցի մըտաց օթեան .
Եւ յանմահից նահատակացըն վըսեմ՝
Մէն ճառագայթ տացի սիրոյն փոխարէն :

Իսկ ես կարօտ ձմերաց յեզերաց թափառ ,
Որ զխմագրաւ մըըրկաց դառնայ յիւր գուառ ,
Իցիւ երբեմն յալիս քոյին անպըղտոր
Զիմ թանայցեմ , Լեման , զփետուր ըըծաւոր .
Օ՛շ իբր յերէկն ըղմեայլ մարգաւ թէ տարած ,
Շագանակացն հեւեայ յըստուերս հովանեաց
Ըղձըլկնորսին տեսից ըղքև թըռչարան ,
Ջեռանկիւնին պայծառ՝ փայլեալ ձիւնանման .
Եւ զկարկաջուամբ ալեաց լուայց կաթողին ,
Զոր մըըմընջեն զինև ծըփանք ջուրց քոյին .
Զճերմակ տեսից փըրփուր , որ զքոյդ հինեալ ծիր ,
Ասուրցս համգոյն փայլեալ ցընդի 'ի կայտխ :

## Ա Ղ Օ Թ Ք

Տըքեղ արքայն տուընջեան մըտեալ փառազգեաց ,
Ցամք իջանէ 'ի յաղթական իւր կառաց .
Լուսաւոր ամպն ըղնա յաչաց մեր ծածկեալ ,
Պահէ յերկինս ըղնորին հետս ոսկեփայլ ,
Ոգողելով ըղվայրս 'ի շող ծիրանի :
Իբր 'ի կապոյտն երկնից կախեալ ջահ ոսկի ,
Ճօճեալ ճեմի լուսինն յոլորս եթերաց .
Ընդ գալարիս նընջէ նըշոյլ իւր առկայծ -

Եւ գիշերաց քօղն ընկերամբք ծաւալի ։
Յայս ժամ բնութիւն ամփոփեալ յինքն առ վայր մի ,
Ընդ խուճապող ալիւն և ընդ ցայգ վայրաբեր ,
Ամբարձեալ յԷն , որ ստեղծ զալիս և զգիշեր ,
Իբր ընծայէ առ Տէր 'ի սերտ իւր բարբառ
Զարարչութեանն ըզմեծարանըս պայծառ ։

Ահա անհուն համատարած պատարագ .
Սեղան՝ երկիր , տաճար՝ տիեզերք բովանդակ .
Երկին՝ գմբէթ , և բոյլք անթիւ աստեղաց ,
Բոցք քօղազարդք , ըստուերին շուք մըթագգած ,
Արփաւեալք կարգաւ ընդ կապուտակըն կամար ,
Են նուիրական լամբարք վառեալք յայդ տաճար .
Եւ ամպք վըճիտք՝ երփնեալք 'ի հուսկ տուընջեան լոյս ,
Զորս հողմ թեթև յարևելից մինչ 'ի մուտս
Ընդ դաշտս օդոց ծալեալ ծաւալ մեղմակի ,
Վարէ յեզերս երկնից 'ի ծալ ծիրանի ,
Այնք խընկոյն են՝ որոյ ծուխն ամբառնայ
Ի պաշտօնեցեալն 'ի բնութենէ յԷին գահ ։

Այլ կայ տաճարս անձայն . ո՞ւր սուրբըն այն նըւագք .
Ո՞ւստ առ արքայն տիեզերաց եկցեն տաղք .
Լռէ համայն . լռկ խօսի սիրտս յայս լռութեան .
Միտք իմ ինքնին տիեզերաց խօսք են ձայն .
Ցերեկորին շողս , 'ի հողմոց թևս 'ի թիւռ
Վերամբառնան յԱստուած զերդ խունկ կենսակիր ,
Եւ 'ի բարբառ շարժեալ զեղեալքս համօրէն ,
Զոգի իմ տան համագոյից , պաշտել զէն ։
Միայն ես սոս յաղերս աչացն հայրական
Լինում զամայս անուամբ յաւերժն էութեան .
Եւ որ լռէն յանբաւ փառացն անդ 'ի ծոց
Ըզգաշնակումն արփեաց յիւրմէ կարգելոց ,
Լսէ և զձայն բանի մըտացըս ցածուն՝
Որ գիտէ զփառսն և մըրմընջէ զիւրն անուն ։

Ողջոյն , որ եսդ երկրի և քեզ ծագ և ծայր .
Որ ակնարկեալ բեղմնաւորես զանհուն վայր .
Տիեզերաց հոգի , հատուիչ , հայր , Աստուած .
Տէր , հաստատամ'ի քեզ ձայնիւքս այս անուանց .



Եւ անկարօտ լսելոյ զքոյ խօսկ բարբառ ,
Կարդամ յերկնից ճակատ ըզգրոշմ իմ պայծառ ։
Միջոցն յայտնէ աչացս ըզքոյ մեծութիւն ,
Աստեղք՝ ըզփառս , երկիր՝ ըզքոյդ բարութիւն ։
Ի սերտ արարող անձեր ըզքեզ ինքն 'ի գոյ .
Տիեզերք համայն նըկարագրեն զպատկեր քոյ ,
Եւ զտիեզերըս կերպագրէ հոգիս իմ։
Միտքս ընդգըրկեալ ըզպէսպէս ձիրըս քոյին ,
Ըզքեզ ընդ բնաւս յայտնեալ ըզքեզ և պաշտէ .
Յինքն նըկատեալ , անդ ես յայտնիս 'ի նմանէ ։
Սոպէս արփին փայլատակէ ընդ երկին ,
Շողս յալիս և նըկարի ընդ աչս իմ։

Զեն չառ հաւատքս 'ի բարութիւնդ , զեզ անճառ .
Ընդ բնաւս ըզքեզ խընդրեալ , անձկամ սիրաբար .
Հոգիս սիրոյ է ճառագայթ լուսաւոր ,
Որ զվառարան երկնից թողեալ առ մի օր ,
Ի քէն հեռի հաշեալ կըզկալթ տենչանօք՝
Տայի բերիլ անդրէն յաղբիւր իւր բորբոք .
Ի քեզ շընչեմ , սիրեմ , ըզգամ և խորհիմ .
Որ զքեզ ծանկէ աշխարհս՝ յայտնի է փառն իմ .
Ի խոր անդ ծոց բնութեան ըզքեզ գըտանեմ ,
Ըզքեզ օրհնեմ ես յարարածս համօրէն ։
Փախեայ յամայս , զի մերձեցայց մօտ առ քեզ ։
Երբ արշալոյս շարժեալ ըզքօղն անդ յայերս ,
Բանայ զոլորտս երփնեալս 'ի փայլ նորածին ,
Տեղեալ ընդ բլուրս ըզտեղ այգոյ մարգարտին ,
Ինձ ակն է քոյ՝ որ 'ի վերնոց կայանէ
Ի կէս բացեալ յաշխարհ , ըզլոյս ծաւալէ ։
Եւ մինչ արփին 'ի միջօրեայն զետեղ առեալ
Ջերմ յիս կեանս , ըզջերմութիւն և ըզփայլ ,
Ի հզօր նշոյլսն՝ որով զգայունքս արծարծին ,
Ըզշունչդ ըզգամ , Տէր , և զազդումըն քոյին .
Եւ երբ գիշեր ճեմեալ 'ի պարս աստեղաց ,
Յաշխարհս 'ի քուն սփռէ զիւր քօղ մըթագգած ,
Միայն ընդ մտայլս և յանապատ ամայի
Մտախոհ 'ի զուարթ պայծառութիւն գիշերի ,
Պատեալ յանդորր և 'ի լռութիւն և յստուեր ,
Մօտ ես հոգիս պաշտէ զերեսդ առընթեր .

Ի ներքս 'ի յիս ըզգամ փայլեալ պայծառ լոյս,
Եւ լսեմ ձայն յորդորելոյ զիս 'ի յոյս ։

Այո՛, յուսամ, Տէր, 'ի քոյին մեծութիւն ։
Որ տաս բնաւից ըզկեանս աջով քով զեղուն,
Անշուշտ չէդեր սահման աւուրցս համարոյ
Զաղմկալից և զսուղ աւուրս կենցաղոյ.
Ինձ երեւիս ընդ բնաւս հասարակ, պաշտպանող.
Ոչ եղծանէ որ անեղծանելին է կարող ։
Վըստահ 'ի սէրդ և զօրութեան քոյ վըկայ,
Մընամ աւուր անմահութեանն յարակայ ։
Ընդ վայր զիս մահ պատէ յըստուեր թախծալի.
Տեսանեն միտքս ըզլոյս ընդ մառայլ խաւարի.
Հուսկ կէտ է այն, որ մօտ առ քեզ ածէ զիս,
Եւ քող արկեալ ընդ քոյ երեսդ և ընդ իս ։
Տէր, փութացո ըզժամն ինձ զայն զոր հայցեմ.
Կամ 'ի գաղտնիսդ եթէ պահի դեռ 'ի քէն,
Յերկնից բարձանց լո՛ւր ըզկարեացս աղաղակ ։
Քեւ խընամին ողջ տիեզերք և հիւլեայք.
Տուրք բարութեանդ իցեն նեցուկ տընանկիս.
Սընո՛ զմարմինս հացիւ, յուսով ըզհոգիս.
Վառեա 'ի լոյս ամենազօր աչաց քոց
Ըզխաւարեալ միտքս 'ի մըռայլս ըզգայնոց.
Եւ զերդ ձըգէ արև ըզշիթըս ցօղոյ,
Ընկլո՛ խսպառ զիմ ըզխորհուրդս 'ի ծոց քոյ ։

---

## ԱՂԵՐՍ

Ո՛վ զոր տեսի յանապատի աշխարհիս,
Նըժդեհ յայս վայրս և կամ բնակիչ երկնային.
Որ փայլեցեր ընդ խոր խաւար գիշերիս
Նըշոյլ սիրոյ ընդ աչս իմ.



Յաչս հիացեալս ըզքեզ դու ցո՛յց ինձ բոլոր.
Ասա՛ զանունդ, ըզհայրենիս և զպայման.
Էի՞ր քոյ օրրան երկրաւոր,
Թէ չունի՛ս իցես աստուածեան ։

Երթա՞ս վաղիւ 'ի տես լուսոյն մըշտավառ,
Թէ յայս ցաւոց, աքսորանաց և սգոյ վայր
Գնասցես դարձեալ ըզճանապարհդ անձկութեան.
Ո՛հ, զինչ և կեանքդ են և աշխարհդ և անուն,
Ո՛վ դուստր երկրի կամ կայենիցն երկնածեմ,
Թո՛ղ ընդ բոլոր կեանս համբուն
Ըզքեզ պաշտեմ կամ սիրեմ ։

Եթէ զընթացդ իբրև ըզմեզ ընուցուս,
Լե՛ր առաջնորդ ինձ և նեցուկ, և ներեա
Օրհնեալ ասիցդ հոգոյն ընդ բնաւ տալ համբոյրս.
Իսկ թէ անուս թևս և յաչացս 'ի բացեայ,
Քո՛յր զուարթնոց, անդէն ճախրեա առ նոսա,
Յետ սփրելոյ զիս աստ յերկրիս գոյզն աւուրս,
Եւ 'ի յերկինս անդ յիշեա ։

---

## ՀԱՒԱՏՔ

Ո՛վ դու ոչինչ. աստուած, ում սուտ խելամնեմ.
Անդունդ լռին, ընդ որ իջից ես այսրէն.
Հի՞մ զերծանել յաջոյդ թողեր դու մարդոյ.
Քանի՛ ես խոր նըրնջէի քուն 'ի ծոց քոյ.
Էր ինձ նիրհել դեռ 'ի մոռացս յաւիտեան,
Ոչ հայելով 'ի լոյս պատիր, զոր առեամ.
Եւ ընդ երկայն գիշերդ 'ի նինջ քաղցրաքուն,
Ոչ գիտէի զերազ և ոչ զարթնութիւն ։

— Այլ զի ծընայ, հարկ ծընանել էր անշուշտ.
Զոր չառնուի յանձն՝ եթէ տայր ոք խորհուրդ։
Զու՛ք ապաշաւք. կարգեալ՚ի կեանս՚ի բախտէն,
Քեզ, արեգակն, ահա անէծս արձակեմ։

— Այլ յիրաւի նոր արշալոյսդ այդ նախկին,
Եւ անբաւոյդ զարթուցմն անդէտ էակին,
Անպարագիր պարզեալ միջոցն աւընթեր,
Եւ երկար խոյզք աչաց մարդոյն ընդ եթեր,
Եւ պատարուն յոյս և հիացք ըղձալմանց
Զօշոտեն զակն այն ինչ ՚ի մուտս անդ կենաց։
Ողջո՛յն, յարկ նոր, ընդ որ յաւուրց ես անկայ.
Քե՛զ, հողագունտ, յեանց բաստից իմ վըկայ։
Ողջո՛յն քեզ, ջահ նըւիրական՝ կենսաբեր.
Արփի՛դ, համայն արարածոց նախկին սէր.
Երկինք անբաւ, տեառն արարչին հովանիք.
Երկիր, որբան մարդոյ, չըքնաղ արքունիք։
Ողջո՛յն քեզ, մարդ, ընկեր, եղբայր, ինձ հանդէտ.
Քեզ, հրաշագեղ հատոր հոգւոյս իմ յաւէտ,
Եւ ձեզ, բաստից վըկայք, պատճառք և գործի.
Լըցէք ըղձեր պայման. բերեմ ձեզ սիրտ մի...։

— Երազ պայծառ. սակայն երազ է, եղո՛ւկ.
Անդուստ բակիցըն առեալ, և գայ արդ յամբոկ։
Ցամր ըղձամբանն ալէտք բանան ինձ տակաւ.
Հուսկ օր, ողջո՛յն. լե՛ր քաղցրագոյնն ՚ի կեանս բնաւ։

Կելով կեցի, հատեալ զամսյս կենցաղոյս,
Ուր մէն մի քայլ կոխէր զթառամ սին ծաղկունս.
Ուր անդադար պատրեալ ըղձիւս իմ յուսոյն,
Զերջանկութիւն ինձ ցուցանէր յաղօտ մոյն.
Ուր շընջելով մահուն խորշակք բոցակէզք,
Ցամաքէին յար ՚ի շըրթունս իմ աղբերք։
Այլ ոք ալէ ցընդեալ՚ի ցաւս ընդունայն,
Թող՚ի խընդիր եկցէ աւուրցն որ կորեան.
Եւ ընդ կորուստ այդոյ գարնան իւր յաշխար,
Այգրէն կենաց ցանկանայցէ նա յոժար։
Իսկ ինձ թէ բախտ շնորհէր ընտրել ինքնակամ
Զարքայից գահ, կամ զհանճարոյ գաւազան,



Զիմաստութիւն, ըզփառս, ըզգեղ կամ ըզգանձ,
Եւ յաւելոյր ըզմանկութեան տիս անանց,
Երդնում ՚ի մահ, զի ՚ի կենցաղս այսգունակ
Առագանալ յարև չըզայր ինձ փափաք։
Զկամիմ զաշխարհ, ուր բնաւք փոխեալ անցանեն,
Ուր յիշատակն իսկ եղծանի համօրէն.
Ուր բնաւ յոզդոզդ, կորըստական, վաղանցիկ.
Ուր աւաւօտ իսկ չէք աւուր երջանիկ։

— Այսպէս քանիցս անկեալ ՚ի խորս ՚ի դոյս,
Իսպառ յանձնէս վտարեցի ես ըզյոյս,
Քանիցս իմ միտք վեհերոտեալ և տարտամ,
Կարծեաց վաւիլ ցուրտ իմն ոգւով զօրութեան.
Եւ մըտախորհ ընդ խոլ իմաստ Զենոնի,
Ցըստոյիկեանն ըղձէքս ՚ի քօղ ծածկէի.
Եւ զառածեալ օր մի յանհոգս անխըռովի,
Մոռացութեանն հառաչէի առ ՚ի գիւր։
Մին հեշտ. նինջ սուտ։ — Զերդ ոչ բըլըոցն ՚ի բացէ,
Ուր Հռովմ յիւրոցն աւերակաց ելանէ,
Ընդ կոյտան անբաւ խառն անդ և աստ տեսանի
Նորոգակերտ պարիսպ, շինուած վաղեմի.
Թատերք կործան, որոց ճակատք ահագին
Ծածկին ՚ի սեզ կամ ընդ փոշի թաւալին.
Մարենի թուփք պատեն զպալատ դիւցազանց.
Կան դիք թաւալ զսեմովք թափուր տաճարաց.
Անմահ կոթողն հոլանացեալ ՚ի հիւղեակ.
Սիւնն յարմարեալ յօտարածե ՚ի քանդակ.
Խոտ և ծաղկունք ՚ի հրապարակն ու ՚ի շիրիմ,
Եւ տատուածովք նորովք լըցեալք տաճարքն հին,
Մինչ աստ և անդ ձիգ միջոցաւ ՚ի բացէ
Տըկար շըշունչ ըզլըռութիւնն հատանէ...
Նման է սմին գըղըրդեալն յերկար հոգին մեր։
Թըշուառութիւն սարսեալ ըզբանն հիմն ՚ի վեր,
Դարձոյց ըզնա յանծայրածիր աւերակ.
Անյուսութիւն անդ կայ զերդ յաղթ փըլատակ.
Լըռին անդուստ ըղձալութեանց շիջանուտ.
Ընդգիմամարտ անշունչ տարերք յարապտոյտ.
Ժամանակաւ ցընդեալ կըրից մընացուած.
Բազմաշըփոթ խաղմ խորհըրդոց և կամաց.

Մին յիշատակք, ցաւք, խիղճ մըտաց, դառնութիւն։
Աւերն այն, ո՛հ, 'ի նշան լինէր գէթ մահուն։
Այլ կեայ հոգին դեռ յայդ տըխուր պայմանի.
Հուրն այն առանց անընդհատ ինքեամբ սընանի,
Եւ 'ի մոխրոյն ծնանի անդրէն. ջա՛հ գըժնեայ,
Որ քան զչիրիմն ևս անդր այրել դեռ խիթայ։

Ո՜վ ես, հոգի. կայծակն 'ի հուր բոցակէզ,
Ցես իմ կեայցես. դեռ տառապանք կայցե՞ն քեզ.
Հիւր դու անձառ, զի՞նչ լինիցիս յապագայն.
Գնայցե՞ս խառնիլ 'ի մեծ լամբար տըւընջեան։
Թերևս իցե՞ն կայծ մի նորուն կայծականց.
Ճաճանչ մըլար, զոյր առաղն այդրէն խընդրէ զդարձ.
Գուցէ մեռեալ, երբ մարդն յեղծումն հասանէ,
Լիցիս հիւթ ջինջ քան զոր բղխեացն ինչ յերկրէ.
Տիղմ հոգեկիր, կաւ մըտաւոր խոհական...
Զինչ տեսանեմ. զընդաս ընդ բանըս 'ի դողման.
Ոչինչն՝ երկիւղ, և վիշտք՝ տաղտուկ քեզ ածեն.
Կեալ զանգիտես, և զարհուրիս յօրհասէն։

— Ո՞վ պարգևեցէ ըզքեզ, խորհուրդ սոսկալի։
Ընդ վայր 'ի լուր կամ իմաստնոց աշխարհի.
Նոցին իսկ միտք վըսեմք յածին 'ի վարան.
Զի և 'ի նմին իսկ 'ի կաւոյ զանգեցան։
Սոկրատ ըզհնոցն իմաստութեան քաղեալ լոյս,
Քեզ 'ի խընդիր գայր յԵլլադայ պերճ աւուրս.
Ի Սունիոն ապա Պլատոն գայր ըզքէն։
Քանի դարք անցին, և զքեզ խընդրեմ ես աստէն.
Անցցեն քըսան դարք տարըստին, և մարդիկ
Խարխափեսցեն դեռ ընդ գիշերն յոր յածին։
Սրանայ յաչաց ճըշմարտութիւն դիմադարձ,
Եւ զցիր ճաճանչըն ժողովէ սոսկ Աստուած։

— Այսպէս հուպ աչքս 'ի կափուցումն առ 'ի լոյս,
Եւ չեկեացէ 'ի մըխիթար ըղձացս յոյս.
Անցցէ հոգիս անառաջնորդ մըթային
Ի գիշերոյ աստեացս 'ի մռայլ տապանին,
Եւ տանիցիմ յանդէտս յաշխարհն յոր երթամ՝
Զբարիս՝ անյոյս, ըզչար՝ առանց հատուցման։



Աստուած անգութ, ձայն տուր. թէ կաս յիրաւի,
Չկարեմ զօրէնդ անիծանել յարժանի։
Գէթ վարձուորն յետ ցերեկին տաժանմանց
Բազմի յերեկս ընդ հովանեաւ, առնուլ վարձ.
Իսկ կըքելումն արդ ընդ բեռամբ խիստ բախտին,
Ցաւուրն իմ վերջ՝ մա՞հ նըլանէ ինձ բաժին։

— Այլ մինչ ժայթքեալ ըզհայհոյանս 'ի վարան,
Լամ յիմ վերայ, դէտակն առ իմ գերեզման,
Վառեալ հաւատքն իւրև ըզքաղցր յիշատակ,
Ծագէ նըշոյլ յուսոյ յապայս տըխրերանգ.
Ցըստուերց մահու վերականգնիմ ես արծարծ,
Պընդեալ առոյգ հոգւով 'ի ծայրս անդ կենաց։
Վերաբերիմ 'ի փայլ ջահից երկնալոյս
Ցելսն 'ի զըւարթ՝ 'ի մանուկ իմոյ կենցաղոյս.
Ի մի նըկատ դիտեմ ըզկեանս մահացուին,
Որ բնաւք աչացս հանդէպ 'ի չար ինձ պարգևին,
Եւ ընթեռնում յապայս ըզկարգն որ յայժմուս.
Զանէութեան դըրունս յետուստ փակէ յոյս,
Եւ ափշելոյս զուցեալ զոլորոսըն տարած,
Մահուամբ պարզէ ինձ ըզկենացս առեղծուած։

Հաւատքն՝ որ մեայ ինձ առ եղեր դամբանին,
Յիշեմ, աւա՜ղ, զի թևարկէր յորբանն իմ.
Անմահական վիճակ երկրին աւետեաց,
Դարուց 'ի դարս յանձնեալ որդւոց առ 'ի հարց.
Զօր ընդունին միտք զարթուցեալ նոր անդուստ,
Որպէս զարև, ըզկեանս, պարգևս 'ի վերուստ։
Զերդ կաթն հոգւոյ, զոյդ ընդ բանալ մեր ական
Մեզ ջամբեցաւ այն 'ի չըրթանց մայրական։
Ի նախ տիոյն 'ի մարդն եղեալ խորամուխ,
Փայլեաց 'ի սիրտ և քան ըզբանըն կանուխ։
Փորձեալ մանկանն 'ի ծիրն ըզխօսս առաջին,
Թոթովէ զվեհ իւր զաւանումն յորբանին.
Որ բողբոջեալ յանդէտս անձին իւր առ մօր,
Ընդ լաւութեանն աճէ 'ի սիրտն օր քան զօր։

Ո՛հ, թէ առ մարդ ճըշմարտութիւնն հասեալ կայ,
Ըզպարզ զայդ զեղ անչուշտ առեալ էր նորայ.

Եւ 'ի մանուկ տիոց աչացս՝ յանդիման ,
Անցեալ 'ի միտս յըղձայութեանց ամենայն ,
Իբր ըզվըճիտ նըշոյլս արփւոյն երկնայնոյ՝
Ինքն անդըստին պատէր զոգիս մեր յայգոյ ,
Գայր իջանէր 'ի մըտաց 'ի սիրտըս սիրով ,
Ընդ յիշատակս , ընդ բարս 'ի մի խառնելով .
Եւ ձիւնաթաղ որպէս ցորեան 'ի յատոջ ,
Ի մեր 'ի սիրտ , դեռ չեւ փըթթեալ , տայր բողբոջ .
Եւ յանցանել մըրըրկայոյզն ամարան
Տայր ըզպըտուղն յանմահութիւն նուիրական :

Արփիդ անհաս , լամբար այլոյ իմն արփեաց ,
Տուր ըզսուրբ լոյսդ առկայծելոյս իմ աչաց .
Շող մխիթարիչ , էջ Բարձրելոյն 'ի ծոցոյ .
Աստղ ազդեցող , ծագեա 'ի սիրտս ըզլոյս քոյ .
Ո՛հ , սոսկ ըզքեզ ունիմ . 'ի ժամս իմ տըխուրս
Աղօտ իմ բանն 'ի մռայլ թողու զիս անլոյս .
Բանն այն հըզարտ , աներեւական լոյս ջահի ,
Առ դրամբք շիրմին հանգոյն կենաց շիջանի :
Ե՛կ փոխանակ նըմին , նըշո՛յլ երկնածեմ ,
Եկ ծաւալեալ 'ի բիբս ըզլոյս աննըսեմ .
Լեր ինձ փոխան արփւոյն , զոր ոչ եւս տեսից ,
Փայլատակեալ իբր երեկոյն աստղ յերկնից :

---



# ՀԱՆՃԱՐ

## ԱՌ Պ. ՏԸ ՊՈՆԱԼ

Ընդ աներկիւղն հարցեն փլատակք»
(Ովրատ . Տաղ Ե . Գիրք Գ .)

Ձերդ մինչ յորոտ փայլատականց
Ի բոցակէզ կատար Սինայ
Մեծ տեառնօղըն գերապանծ
Արձանագրէր զտախտակս Յուդայ ,
Ի ժամ խօսից այն հրաշաճառ՝
Ամպ մի ծածկէր անդ ըզկատար
Բարձանցն առ աչս անմատուցից .
Եւ 'ի շանթից շըռինդն 'ի դող
Յուդա թաւալ անկեալ 'ի հող
Ետես զօրէնս իջեալ յերկնից .

Սապէս ըզպերճ իմաստակաց
Փարատելով զփայլըս պատիրս ,
Ի խոր մռայլից հանես 'ի բաց
Ճըշմարտութիւնս ըսքանչելիս :
Քօղն որ անկեալ յօրէնս հընոց
Ծածկէր զգաղտնիս վեհ խորհըրդոց ,
Ձայնիւդ անկեալ ցելու 'ի վայր .
Իսկ դու զուգիդ գնաս անվեհեր
Մինչ անդր յաղբիւր սըրբանըւէր ,
Ուստի էառ զօրէնս աշխարհ :

Նըստեալ յանչարժն 'ի պատուանդան
Ճըշմարտութեանն յաւէժական ,
Դիտես առանց այլայլութեան

Ըզփոփոխմունս մահկանացուաց։
Գահք ինքնիշխանք և հանրականք
Ի հին ծըղխնեացըն գըլըրդեալք
Յիր տապալեալ յաւեր դընին.
Դու ծիծաղիս՝ մինչ մեք սարսեմք.
Եւ ուր զմարդիկ տեսանեմք մեք,
Նկատեն զԱստուած ոք աչք քոյին։

Ընդ վայր պատիր հնարից ձեռնարկ
Հերքէ զձեռնարկ իմն այլ մոլար.
Անկարգութիւնն ինքնին 'ի կարգ
Զբարոյականն ածէ աշխարհ։
Եւ որպէս շուրջ միոյ աստեղ
Երկիր յընթացս իւր առ 'ի շեղ
Գըծէ զշաւիղն յօդըս գնացից,
Նոյն ըստ չըքնաղ և օրինաց՝
Արդարութիւնն յարամընաց
Է իւր առանցք համագոյից։

Աւաղ զի՞նչ. 'ի թեւս մինչ հանճարոյն
Հեռի յաչացս յափըշտակիս,
Վատ աղաղակք չար նախանձուն
Զհետ քոյ գընան մինչև յերկինս։
Ինձ հաւատա, մի՛ գար 'ի վայր.
Եւ մի՛ ցածնուր ըրնաւ խոնարհ՝
Ըզբանսարկուաց լսել բըզզիւն.
Վարեա՛ զընթացըդ գերունակ,
Վարեա՛. ռամկին արհամարհանք
Մեծաց սըրտից մընան բաժին։

Դու, զոր սիրեաց նա վայրապար,
Զտեսե՛ր զի միշտ փոխանակաւ
Դարընեալըն յեւրմէ կուռքըն ապիկար
Ի նմին աւուր պաշտեալ՝ բեկաւ։
Զտեսե՛ր զի բարք իւր անհաստատ
Ըզհաւատոցն հայրենաւանդ
Շիջոյց ըզջահ սըրբանըւէր.
Այրեաց զոր հարցն էր մեծարոյ,



Եւ անուանեաց փայլըս լուսոյ
Ըզմռայլ շիրմաց մըշտագիշեր։

Ըզհին լծոյն թօթափեալ կապ,
Բայց յոյլ ըռւանց պատրեալ դաւոյն,
Խիստ երկաթոյն գտան 'ի տագնապ,
Լըսեն՝ գոչէ Ազատութիւն։
Ի խօլ ցընորըն պըղծալից
Ո՞չ տեսանես զի իւրն ախտից
Բնաւ ուղղութեանց անուանըս տայ.
Եւ ըզՍոկրատ վարէ յօրհաս,
Զի մատուցէ 'ի գարշ տաճարս
Աստուածական փառս Անիտեայ։

Թէ 'ի գըրգել զիւր տկարութիւն,
Շողոմարար գըրիչդ յանկարծ
Յիմաստութեան պըճնէր անուն
Ըզխորամս իւրոցըն պատրողաց,
Տեսանէիր զի ձեռն իւր պիղծ
Ի խամրելոց մերկեալ սարգից
Զանարգելոյ առն ըզճակատ,
Սըփռէր զնոսին յիւր ճանապարհս,
Եւ 'ի նախատ փոխեալ ըզփառս,
Քեզ ընծայէր յաղթանակ ժանտ։

Այլ դու կացեալ յասպարիզին,
Յորում մարտեար 'ի մանկութեան,
Գիտես անշուշտ զի յարգ ախտին
Ի նախատինս է ուղղութեան։
Զայնքանի քէն գըրեալ քեզ փառս,
Ոզըստ ըզտկար ոգիս վարեալս
Մոլար գարուն յընթացս երագ.
Եւ միայնակ սուր ալեաց դէմ
Գընաս 'ի քոյլ պատադէմ
Ի հուսկն այն կէտ՝ զոր ցուցին փառք։

Այսպէս հեղեղ մըրըրկածին
Ի կատարաց խուժեալ լերանց,
Թէ պատահէ յընթացս անցին

Կաղնւոյ, հովտացըն պարծանաց,
Գոռայ ցասմամբ, ցայտեն փրփուրք.
Ջուր ըղձառուն ալեացըն ծուփք
Պատին 'ի սաստ ըսպառնական.
Արձանացեալ յաւերակս անդ
Կայ յաղթ կաղնին այն խորարմատ.
Եւ ջուրք ուղխիցն անցեալ գընան:

Արհամարհանք քոյդ դարուն
Մի ընաւ առ քեզ լիցին խափան.
Զարխական քոյ քաջութիւն
Պընդեա յալիս ձախողութեան:
Ի կախ մարտից յոր գաս 'ի վեր՝
Ճըշմարտութիւն քեզ սուր սուսեր,
Արդարութիւն լիցի վահան:
Մի ցանկանար զըրահից այլոց.
Եւ թէ առնուս ըզվիրաց խոց,
Ի սարդենիս պատեսցուք զայն:

Տես 'ի նախնեաց մըրցարանին
Զերիվարօք, ըզկառօք հոծ
Ոլիմպական մըրկեալ փոշին
Ծածկէ զնոսին յաչաց մըրոց:
Սապէս յընթացս խըռում հանճար
Ի նախանձուն ամպոց մըթար
Պատեալ գընայ ընդ ժամս երկայն.
Այլ 'ի հուսկ կէտն անդ ընթացից,
Յանարգ փոշւոյն 'ի պըտուտից
Պըսակազարդ գայ յաղթական:

---



# ԻՄԱՍՏԱՍԻՐՈՒԹԻՒՆ

## ԱՌ ՍԵՊՈՒՀՆ ՄԷՋՈՆՖՈՐ

Ո՛հ, ով տարցի զիս 'ի ջերին եզր ափանց,
Ուր պըսակեալ Առնոյ յուր մութ հովանեաց,
Եւ Մետիչեայ որմոց կացեալ աւընթեր,
Նկարէ յինքեան զիմաստնոյն տանն ըզպատկեր,
Եւ իբր հեզիկ ալեացն 'ի գոզոյր բարբառս
Մինչէ զՏանդեայ և զԲետրարգայ մեծ անուանս.
Կամ գէթ իցիւ 'ի գալ անոյշ երեկի,
Երբ թօթափեալ զանձն 'ի հոգոց արքունի՝
Գնաս 'ի խընդիր քոյդ Եգերեայ ընդ անտառս,
Գայի զհետովքդ անդաճելով 'ի դալարս
Յըյարկն անշուք, քոյ ձեռակերտ ծաղկազգեաց,
Ուր գնաս պաշտել ըզլըռութիւն և զմուսաց:
Վեհիցդ և ես տանիմ պաշտօն. և զամ մի
Հաստնացեալ յիմաստ 'ի շըղս անդ վըշտի,
Ի մոռացմանէ զոգիս պըտղովք անթառամ՝
Ըստուերց բազմացն անձկաւ 'ի յայց ես գընամ.
Եւ գալարուտ թէ բըլըակին 'ի կատար,
Կամ զառ 'ի թափ գարեանդին ընդ մէտ դար,
Կամ մենաւոր ուղխից յեզերս ամայի
Կանաչազուարճ կայցէ զեղջուկ հովանի,
Ոյր զընտանի սեմովք սողեալ բարունակ
Օձապըտոյտ յածցի ՚նդ գաւիթ դիւրահակ,
Անդ ճեպ թռուցեալ հանգչի հոգիս դանդաչոտ.
Զերդ աղաւնին յալեան 'ի ճեմ թափառոտ,
ԶԱրարատայ տեսեալ սաղարթս եղևնեաց,
Սլացաւ 'ի ծայրսն հանգչել ոտիւք վարդագգեաց:
Այսպէս մինչ դու բազմեալ յակումբս արքունեան,
Եւ փոխանորդ պետին պատուեալ ընտրական,
Ունիս ըզմեծ մի թեւս հաղըից աշխարհի,
Ես յեզր ալեաց ՚նըստեալ հովուացն 'ի խըմբի,
Մտախոհ ակամբ ընդ կուրս հայիմ ծովակին,

Եւ ըզհեծիկս հողմոյն լսեմ 'ի շամբին .
Ընկողմանեալ յանհոգս հուպ յակն աստ աղբեր ,
Ըզգենովք կաղնեաց գիտեմ յածեալ շուրջ զբօսուեր ,
Կամ 'ի կեղև ծառոց դրոշմեմ սէր անուանս .
Խօսիմ առ գանգ , որ տայ ձայնիս պատասխանս ,
Կամ զակն յառեալ ընդ ամպս յերկնիցն 'ի կապոյտ ,
Այնպէս թափառ յածին իմ միտք ծփմանուտ :
Ահա գիշեր . և ժամք 'ի մասն աճաւոր
Զուշ իմ հաշուեալն ինձ ցուցանեն միւս ևս օր :

Լոկ մերթ ընդ մերթ , յորժամ փըղձկիմ տագնապաւ ,
Եւ յորդ իմաստք զեղուն ըստ միտս իմ չափաւ ,
Ցերեկորէն յամայս 'ի շունչ խանդաղաւ`
Լըքեալ քընարս դեռ նուագաւոր տայ բարբառ :
Քաղցր են պըտուղքս ինձ , ոյց հասեալ խրախին
Ազգմամբ ընութեան , դեռ չև քաղեալք , թօթափին ,
Հողմատատան զերդ ծառաստանկըն վայրի
Ընդ մարդ թառամ 'ի սաղարթուցն յերերի
Թափէ զպըտուղ լըքեալ յստոյն ինքնակամ,
Որ մեռանի յառա անդ ծառոյն` որ եա զայն:
Եղև երբեմն` յոր լաւ լցեալք իմն աւուրք ,
Պըճնեալք 'ի սէր , և 'ի փառաց լոյս փայլունք ,
Եւ յերազ թևս յինէն 'ի բաց խուսափեալք ,
Ցանցելոյն մութ չանկանէին ինչ ունայնք :
Ի կեղակարծ փայլ մարդկայնոյ անդ բանին
Ըզպըլատոնի հետովք յածեալ ընդ երկին ,
Զհետ կըրթէի անձամբ լինել խելամուտ`
Արդեօք իցէ՞ հոգիս այս շունչ յաստուածուստ ,
Եւ պարփակեալն 'ի կաւ ճաճանչն երկնային
Շիջցի՞ մահուամբ , թէ վառեսցի վերըստին .
Ըզկնի հազար ամաց նա այսըր դարձցի ,
Թէ փոխելով եօթնիցս ըզբախտ կամ զարփի ,
Եւ աստղ յաստեղց ըլացեալ 'ի կէտն երկնաւոր
Առ մըշտախոյս ծայրն յար մերձի հըպաւոր .
Մերս յիշատակք մնայցե՞ն յետ այս փոփոխմանց ,
Եւ զհետ գայցեն մեր հոգք , տարփանք , գործք բարեաց :
Տարտարոսին առ դրամբք կայցէ՞ ոք դատիչ ,
Ընդ չարն յաւէտ և ընդ արդարն որոշիչ .
Արդեօք կայցե՞ն երկնապարգև օրէնք սուրբք ,



Եւ պետութիւնք յաւերժական շատ աւուրբք ,
Որք անկուշող բարուց մարդկան դիցեն սանձ ,
Զարդարութիւն տըւեալ 'ի պահ թագաւորաց .
Կամ թէ աստուած ոք 'ի թըմբիր հեղգագին
Թողու 'ստ քըմաց բաշխից զկուր մէտ նըժարին ,
Եւ դարձուցեալ ըզցուրտ աչացըն նըկատ ,
Զէքըս մատնէ բախտին , զերկիր` ըռամից ժանտ :
Այլ զերդ արծիւ ըլացեալ յաճախ արփեգնաց ,
Ցորոյն վըրէպ` վայրաթևէ յեթերաց ,
Եւ ես զէտակն յանրաւ բարձունս զերակայ ,
Գըտի եւեթ զունայնութիւն և զերկբայ .
Եւ խանչ յուղղոյս թափառ յամայս անպարփակ ,
Սակ զօրն յոր կեամ , և զամն եւեթ` յոր կամ ընակ ,
Հոգոցս և մտաց եդի սահման յայտմհետէ .
Միայն աստուած թագուն զիմ պէտս հոգայցէ ,
Եւ սիրելւոյ հարսին 'ի գիրկ` զերծ յաշաց
Վայելեցից յանոյշ պըտուղս իմ կենաց ,
Եւ անպաճոյճ իմ հայրենին օթևան
Ծածկոյթ 'ի ձմեռն և յարկ տայցէ յամարան ,
Եւ մանկերամն ըզսեղանովս առեալ պար ,
Ամի ամի կօշնականաց լըցցի շար ,
Ոչ ես երթայց հեռի խուզել , բարեկամ ,
Գաղտնիս Տեառն , առ իմէ՞ այս , կամ ընդ այն ,
Կամ ծաղըալից ճըգամբք մըտացս անզօրի
Ջանալ 'ի նըպաստ իմաստութեանն անբաւի .
Շատ են մեզ կեանք . մեծ իմաստնոյն իսկ է բան .
Անցնիւր աւուրն հոգ բաւական է ինքեան :
Սրբոյն սըրբոց պատկառ կացեալ վեհ գաղտնեաց ,
Անըրծութիւն տուաւ ինձ բաժին ու Աստուած հարց .
Բազկօք տարած նըմին կըքեմ ըզճակատ .
Քանզի ըզնա երկիր պաշտէ յանըզգաստ :
Իբր ալկեան 'ի հեղ կամ գոռ անդ ծովու
Ցիւր բոյն ծածան հանգչի զալեօք յանդորրու ,
Վըստահ յԱստուած , որ հասուցէ զիս խընամ
Ցանեղեւոյթն հանուրց դադարս հանդըստեան ,
Եւ անվըրդով անդորր մըտաց պարապմամբ
Ըզբաստ կենաց ջանամ ածել ըզբըռամբ ,
Ու ամէն հողմոց անշուք պարզեալ առագաստ
Սահել ընդ ժամս , յինք կառուցեալ զիմ նըկատ :

— Դու որ յերկար հողմոց՝ մրրկաց խաղալիք,
Ջանամիտ երկին վայելելով յորս յայսմիկ,
Ցանգոյր կայից ակամբ դիտես դու նովին
Մտադիւր՝ զարկածս և ըղպատրանս՝ հեղագին,
Որոյ համբոյր և բարեմոյն միտք ըղգաստ
Ջհանճարեղաց դարուս քաղեաց լոկ զիմաստ.
Եւ զանպատումն աւեր պարգևս ՚ի բարձանց
Ցաստուածեղէն բարբառ խօսել մահացուաց,
Ցափանց սիրուն, ուստ ձայնդ առ իս տայ հրաւէր,
Ուր ջինջ ալեօք կենացդ աչուն սահի դեռ,
Եւ մնկրմութիւն, ջուրք և ծաղկունք, հովանին
Շորթեալ ըղկես անդորր աւուրցդ և տանին,
Ի խառն անդ տաղս, զորըս հիւսէ քեզ Մուսայդ,
Սասօջիր մեզ, որպէս երբեմն և Ովրատ.
Կըքրե՞լ բախտին եթէ անսալ կայ մարդոյ.
Խոստրեցայ՞ ինչ ՚ի կիտէն թէ յուղւոյ.
Կամ գուցէ՞ այլ իմաստութեան արահետ.
Արուեստ բաստից չիցէ՞ կենաց իսկ արուեստ:

---

## ԾՈՑ ՊԱՅԵԱՑ

Տես երբ հեղիկ այդ ալեակ
Գայ մեռանի յափն ըսփիւռ.
Տես ըղյօղդօղդ մեղմ զեփիւռ,
Ոյր շունչք կընճռեն անըղգայք
Ջալիս յոր գնայ մըտադիւր:
Օ՜ն ՚ի թեթև նըշաւիմբ կուր,
Ջոր վարեն ձեռք իւր հեշտաեաւ,
Եւ շուրջ ծոցիս մենաւոր
Քերեմք առ ափն ըղգուշեաւ:
Ափունք ՚ի մէնջ տան խուսափ.
Եւ մինչ երկչոտ դու ձեռամբ
Ըղդիւրադարձ ունիս ղեակ,



Կըքեալ ՚ի թին ես գոչուն՝
Ընդ ծոց ալեաց երերուն
Գըծեմ ակօս ինչ երագ:

Ո՜վ Տէր. զի՛ շունչ զովագին:
Ցայգոյ բամբշան ոլժգոյն լոյս
Փոխանակեաց արդ զարփին՝
Ի գիրկ Թետեայ խորասոյզ:
Ըստ ծոց ծաղկանց կիսափակ
Ծաւալք ծըխոյն անուշակ
Ընդ օդս սաւէն զեղանին.
Եւ երեկոյն հողմ քընքոյշ
Ի հոտ բուրմանց քաղցրանոյշ
Խընկէ զալիս ծովակին:

Հընչէ ընդ ծով երգոց ձայն.
Լըսին գեղգեղք ընդ ցամաք.
Եւ զքաղցր հընչմանց միաձայն
Ջերգս երկայնէ արձագանգ:
Ջըկնորսն ՚ի խէթ յատուեղց սաստ՝
Ամփոփ ծալեալ զառագաստ,
Ըզ յարկն երգովք ողջունէ.
Խօլ պատանեաց մինչ երամ
Գոչմամբ ձայնից խընդութեան
Ջողջամբ ըղձարձ իւր տօնէ:

Ահա յըստուեր թանձր համակ
Մթագնին երեաք լայն ծովուն.
Թաքչին եզերք, լըռեն ձայնք,
Եւ զօդ պատէ լըռութիւն:
Ցայս ժամ ոգին թախծութեան
Բազմի մտայոյզ ինքն յինքեան
Ցանձայն տեղիս ծովափնեայս,
Եւ մըտախոհ յաւէր վայր՝
Դիտէ ՚նդ բըլրոց զառ ՚ի վայր
Ջանչէն պալատս և տաճարս:

Ո՜վ հին և սուրբ ազատութեան հայրենիք.
Երկիր, ծընող վեհից գործոց համօրէն,
Ցոր արդ տիրեն զուօզ բըռունք դըժպըհիք.

Թող քոյ անկաւ, և դիւցազունքդ ոչ ես են։
Այլ 'ի ծոցիդ լայնեալ հոգին մեծափառ,
Իբր յարձանաց նոցուն չընչէ ըղձանճար․
Ձերդ 'ի կործան ուրեք տաճար դեռ ես մարդ
Զ' 'ի նմա փառաց աստուածութեանն առնու զաղդ։
Սակայն թողցուք ըղձեր աճիւնըս վըսեմս,
Նախնիք Հռովմայ, կատոնք, ըստուերք Բրուտոսեանց․
Ե՛կ երթիցուք խընդրել յորմոցդ աւերած
Քաղցր յիշատակս և երջանիկ ես ըստուերս։

Ովստ 'ի հով այդ վայրի,
Յառանձնոցին՝ ում զարդ տայր
Զըւարճութիւն և հանճար,
Խուսէր 'ի շքոյն արքունի,
Անդ գայր Պրոպերտ յայց Կինթեայ,
Եւ յանդիման Դելիայ
Տիբուլ մընչէր գողտրիկ մըրմունջ սիրալի։
Անդ Թասսոյի դադար երգոցն 'ի բացեայն,
Մինչ նա բախտին և հանճարոյն նըշաւակ,
Յածեալ յերկիր, թափառ ընդ ծով և անյարկ,
Վէհ արկածիցն եգիտ սատար գըթութեան։
Մօտ 'ի նոյն վայրս յետոյ անկաւ չընչասպառ․
Փառք կոչէին ըզնա․ հասեալ՝ պակասի․
Գողցես պըսակն որ ճնայ նմին՝ խուսէ յար․
Եւ սարդն անժամ կայ լոկ չիրմին հովանի։

Բըլուր Պայեայ, գեղածիծաղ վայր սիրուն․
Հովիտ քաղցրիկ, դադար հեշտից պատարուն
Բնաւից որ մեծ կացին յերկրի,
Ոչ ես հընչես ըզգանդ փառաց և սիրոյն։
Ոչ գոյ ձայնիս պատասխանի,
Բայց սոսկ ալեաց ձայնն ողբալի,
Կամ արձագանգք որ յաւերակս աստ զարթնուն։

Այսպէս փոխեալ անցանեն բնաւք․
Այսպէս և մեք խոկ անցանեմք․
Եւ ոչ, աւաղ, մընան նըշմարք
Քան ըզկուրիս՝ յոր հատանեմք
Ըզծով, ուր չեք լինին համայնք։



# ՏԱՃԱՐ

Զի՛ քաղցր, երբ աստղ երեկորին մնաւոր
Կարապետեալ լըռին կառաց գիշերին,
Վերամբառնայ յամր ընդ կամար եթերին,
Մինչ դեռ զերկրէ գան 'ի պայքար ցայգ և օր։
Ի՛բր է անոյշ գընալ 'ի քայլ երկիւղած
Ընդ խորս հովտին 'ի գիւղականդ այդ տաճար,
Զորոյ զանշուք դաւթաւ պատի լոռ դալար,
Այլ ուր խօսին երկինք յոգիս դեռ լաւաց։
Ողջո՛յն, ծառք սուրբք․ ողջոյն քեզ, դաշտ տըխրական,
Գերեզմանաց գեղջդ անպաճոյճ քընարան․
Անցեալ առ քե, օրհնեմ զարձանսըդ զանշուք։
Վա՛յ որ ըզհող նընջեցելոցըն պըղծեաց։
Առ խոնարհ վէմն անկայ 'ի ծունր երկրամած,
Եւ ընդ տաճարն հընչեաց ոտիցըս շըշուկ։
Զի՛ լուռ գիշեր․ 'ի սըրբութեանցըն խորոջ
Հազիւ նկատեն աչք ըզնըշոյլդ այդ դողդոջ
Առ սուրբ սեղանըն վառելոյ կանթեղին։
Տիեզերք նընջեն․ ինք նըշողէ դեռ միայն․
Մըխիթարիչ պատկեր արթուն բարութեան,
Որ ժողովէն ըզհեծութիւնս մահացուին։

Գնասցուք յառաջ․ ոչ հարկանի յունկն իմ ձայն,
Հընչէ դաւիթն եեթ 'ի քայլս իմ չափեալս․
Ահա ելի ընդ տաճարին աստիճանս։
Սեղանք, որմունք սուրբք․ միայն եմ․ և հոգիս
Զիւր ցաւս և զհուր կարէ առնել ձեզ յայտնիս,
Եւ աւանդել երկնից ըզըղձանըս ծածուկ,
Զոր գիտասցէ լոկ ինքն և սոսկ լուիջիք դուք։
Այլ առ սեղանդ իբր արդ մատչիմ համարձակ․
Իշխեմ բերել, ո՛վ մեծդ Աստուած, յայս վէհ յարկ
Ըզսիրտ՝ զոր դեռ կըսկիծ և սէր տոչորեն,
Եւ ոչ գողամ զի մի՛ յանկարծ քոյ սուրբ փառք․

Զանարգանաց տանդ ըղձըրէժ խընդրեսցեն ։
Ո՛չ, ոչ չիկնիմ այլ ես ընդ հուրն յոր ծախիմ.
Անմեղ է սէր, երբ արծարծէ զայն բարին ։
Մաքուր է իմս հանգոյն ում եսն երդուայ զայն,
Եւ բորբոքէ ըզսիրտս 'ի հուր նուիրական,
Զոր և պատուէ հաստատութիւն, վիշտք սըրբեն ։
Ասացի զայն երկրի, էիցս համօրէն.
Առ սուրբ սեղանոյդ ոչ դողացայ ասել զնոյն,
Զոր իշխեցից քեզ, Տէր հըզօր, տալ զանուն ։
Այո՛, տաճար քո թէպէտ յիս ազդէ ահ,
Շուրթն իմ մինչէ դաշն արդ զանուն Էլվիրայ.
Եւ զանգ անուանն հընչեալ չիրմաց 'ի չիրիմ,
Իբրև ողորմ ձայն ըստուերին' որ ողբայ,
Խառնեսցի զանգոյր ողբարանեալ կայանին ։

Ողջո՛յն, ով ցուրտ արձանք. ողջո՛յն, սուրբ դագաղք.
Երկիցս ըղձամս հընչեաց ցայգոյ արձագանգ,
Մինչ հեղուլ զարտօսր ես ձեր առաջի.
Ըսփոփեալ գնամ. տեսին երկինք զի լայի ։
Ինքն իսկ թերևս 'ի վայրկենիս յայլ երկիր
Մտախոհ փամն իմ միայն հըսկէ և Էլվիր,
Եւ աչք թացեալ յարտօսր յանշուք տաճարի
Գայ նա պատմել զցաւսն առ սեղանս ամայի ։



# ՀՈՎԻՒ ԵՒ ՁԿՆՈՐՍ

Իր ժամ զուարթ, յորում քան զայգ քաղցրագին
Տիւն 'ի կէսն հուսկ թըւի ժըմնել տակաւին.
Եւ հողմն յստոց, յորս նընջէր քաղցրաքուն,
Գայ ծածանել յալիս, իջեալ ընդ մըթոյն.
Ցաշտարակէն զանգակն 'ի թինդ յամրագանգ
Զոր 'ի ձորոյ գանչէր զհեծմանցն յերկար վանգ.
Իբր ընդ ալիս նուաղեալ բարբառ յերեկոյս,
Որ նախ քան զցայգ 'ի նինջ կոչէ զհամագոյս ։
Որեար չինին զատաղաւարօք սըփռեալ ցիր,
Զգեղջուկ մաղթանսն երգեալ ընդ թինդսն 'ի կըշիռ,
Գեղգեղելով արծարծէին զբոց հրատին.
Ըզցանցս ըղընովք կապամախեաց կախէին,
Կամ թօթափեալ ըզլուծ ցըլուց խրոխտապանծ,
Արկանէին հանդէպ զհամեղ խուրձ զարեաց.
Այս առ սեամս յարկաց բազմեալ լուռ համբուն
Մնային քընոյն, աւուրցն լըրեանց հեշտ վարձուն ։

Մանկունք երկուք չինին, հովիւ մին մայրեաց,
Մեւսն ձըկնորս մըրըրկածուփն եզերաց,
Նուիրեալ առ սէր ըզգաստարկ ժամս երեկին,
Ընդ հովանեաւ ծառոյն եկեալ բազմէին.
Անդ զովարար մըլաթզենւոյն առ երի
Անցնիւր ըզհետ գայր կոյս սըրտին պաշտելի,
Նէար, Նէալ, քորք երկոքեան, զոյգ շուշանք
Ըզնոյն բընով 'ի մի եւեթ շունչ քաղեալք ։
Կոզմնեալ տարփողքն անդ հովուհեացն առ ոտին,
Զնոցուն կապել ըզծըղօտ սիզոյն դիտէին ։
Բըլըակ զալար հողմածաղկամբ գեղերփնեան
Ընդ դարն 'ի վայր ծաւալ պարզէր գորգ բուրեան.
Գրգուէր ծով զեզր ալեօքն 'ի ձայն ողբագին.
Երկոտասան զառամ կաղնեք կորք յափին'
Ցուցանէին 'ի կէս ընդ քօղ տերևոյն

Զերկնից կապոյտն յառեալ յալիս իւր 'ի քուն :
Անդ ծառ , յոր որթն յեռայր զսատոյն ըզմանուած ,
Հեղոյր ըզհով 'ի ծըփանուտն հովանեաց .
Եւ մօտ յետուստ յառաջաճեմ 'ի դաշտի ,
Ուր գործէին յիրեարս որմած ուռն , յակրի ,
Յունկն անկանէր նոցուն զեփիւռ յեղյեղուկ ,
Որ մերթ լռէր , մերթ հեծեծէր ողորմուկ ,
Եւ արծարծեալ զօդ նըւաղեալ 'ի տուընջեան ,
Սահէր սուլէր ընդ վէտս հասկաց ոսկենման :

Ըզքաղցր հոգոց կենաց 'ի վէգ ընդ իրեար ,
Նախանձելի գիւր բախտ առէր անդ այր այր .
Հովիւն անշուք գովէր զհօտին հեշտ խընամս .
Ձըկնորսն ըզկուր իւր և ըզջուրց ըզբօսանս :
Ծեր ոմն անդուստ քաղցր 'ի ժըպիտ զայս ասաց .
« Երգեցէք ո՛ն , ազդեալ յալեաց ու 'ի դաշտաց .
Ո՛ն երգեցէք . և որ 'ի ձայն կաթոգի
Ցուցցէ զմայրիս և կամ զալիս սիրելի ,
Ձեռք սիրուհւոյն , ում քաղցր հընչէ իւր նըւագ ,
Տացեն ըզվարձ տաղիցն իւրոց ներդաշնակ .
Առ տարփածուն ձօնեալ ըզվարձս հընձողին ,
Նէար գիցէ ծաղկունս 'ի ծայր որային .
Իսկ Նէալոյ ոլորս հիւսեալ վարդենի ,
Պըսակեսցէ խելս ըզկուրին ձըկնորսի .
Տեսցէ նաւաւն ըզտին ողջոյն 'ի կայմէն
Փունջս 'ի ծըփան , որ հոտանոյշ ծըխեսցեն : »
Զայս ծերունին . հաւանեցան նոքա լուռ .
Միտ դնէր ձըկնորսն , հովիւն այսգոյն ձայնս առնոյր .

Մինչ գարնայնոյ աստղն 'ի յելից ջինջ այգուն
Յոյլոյլ կապոյտն ըզկէս բառնայ ճակատուն .
Ի ծուխ շընչոյն մինչ արշալոյսն այգածին
Սփռէ զբուրմունս ընդ քաղցրաբոյր ձորս հովտին ,
Եւ գետնամած հակեալ ծաղկանցըն բաժակ ,
Ըզգիշերոյ արտօսր հոսել տայ ընդ մարգ .
Յորժամ այգոյ աւետաբեր ժիր արթուն
Արտոյտն 'ի սէգ լըքեալ զգագար իւր բընոյն ,
Եւ զուարթ երգեալ գեղգեղս հանգոյն արթնութեան ,
Ճըռուողելով սլանայ արփւոյն յանդիման ,



Անդ իմ ձըգեալ ըզցըլուց լըծկիրծն եղջերաց ,
Ըզփորոտող գըլուխն հակեմ լըծաբարձ :
Եւ յերկեակ վեց պարոյրս ածեալս ընդ ճակատ ,
Ըզմիազոյգ կապեմ զանդամն յողորկ փայտ .
Օղ պողովատ յօդէ զնոսին ընդ քեղիս .
Պատկեմ ըզլուծն յերկայն գրասանգս 'ի կաղնիս ,
Ոյց խարշափուն տերևք և ոստք յերերի
Ի տապ տուընջեան պարզեն յուընդունան հովանի : . . .

---

## ՔՆԱՐԵՐԳԱԿԱՆ ՆՈՒԱԳՔ ՍԱՒՈՒՂԱՅ

### ՅԱՐԱՍՈՒԹԻՒՆ ՍԱՂՄՈՍԱՑՆ ԴԱՒԹԻ

Հեղէց զոգիս , Տէր , առ սեմովք սըրբութեան .
Անձն իմ յանուանդ ապաստանեալ յուսասցի .
Եւ զարթիցես ընդ ձայնս . ու աղերս իմ խոտան
Եկցէ առ քեզ իբրև ըզխունկ երեկի :

Նըւաստացեալ խոնարհեցայ 'ի փառաց .
Իբր ըզճըռճըղուկ ընդ լեառն յածիմ թափառոտ .
Եւ տագնապեալ չարակոչկոճ 'ի վըշտաց ,
Կայ սաստ հոգիս զերդ անապատ ծարաւոտ :

Ընդ սուգ ցաւոյս բերկրեալ հըրճուին գոռ ոսոխք .
Եւ ցուցեալ , Տէր , զօծեալ քոյին վըշտազգեաց ,
Տեսէք , գոչեն , ելէք ըզնա իւրն Աստուած .
Ծիծաղեցաւ անզօրդն առ գութ իւր Մոլոք ,
Եւ ըզգըլուխ իւր շարժեաց :

Լարեա՛ զաղեղն . արի՛ և զիս , Տէր , դատեա՛ .
Լից ըզկապարճս իմ բոցաշունչ 'ի նետից .
Եւ լափլիզող շանթք կայծականցդ 'ի յերկնից
Տացեն ըզմահ զոր կարդային ինձ նոքա :

Ելեալ գայ Տէր · կամարն ահա խոնարհի
Անկէտ երկնից սասանելոյ ընդ նովաւ ·
Խաչ իւր փայլէ 'ի բոց շանթից և յարփի ·
Զուարթունք թռուցեալք ըզմահ վարեն զառաջեաւ :

Ծառալանայ ծուխ 'ի բոցոյն բարկութեան ·
Ի նշոյլ փայլմանցըն փեռեկին ամպք երկնի ·
Ի հայեցուած իւր ական
Երկիր ծախեալ բալաւի :

Հա՛ բարբառի · յահեղն 'ի ձայն
Երկիւղալից սասանեցան
Մայրք Լիբանու , անապատաց քարանձաւք ·
Յորդանանուն պարզի յալեաց ակն աղբեր ,
Եւ տիեզերաց մէտ յերեր
Ոսկերքն 'ի յայտ գան բացեալք :

Ի ձեռս իմ Տէր մատնեաց ըզձեռ անըզգամ
Գոռոզ որդւոց ժանտն Ամնայ :
Արի , Սաւուղ · 'ի քող յաւէժ թուխ մըթան
Ընկըղմեսցի անուն նոցա : . . .

Զի՞նչ տեսանեմ · դողա՞յք , բըռունք խրոխտապանծ .
Դիւցազն ըզտէգն 'ի յաջում
Ճօճեալ ասրայ եռանդուն ·
Եւ 'ի տեսիլ լոկ նորուն՝
Սոսկումն աչացն անդէն ընդ սիրտ ձեր էանց :

Խո՛յս տուք . . . աւա՜ղ , նա ահընկէց սուսերաւ
Շուրջանակի ծիր գըծելով սպառնական ,
Ընդ ընաւս ըզհետ պընդի , և կայ յանդիման ·
Եւ որ բիւրուցս 'ի ճապաղիս ձեր թաթաւ ,
Դեռ արբենայ յուղխիցդ արեան ·

Յաղթ իւր երիվար
Կոխէ զերդ գալար
Ըզկոյտ դիականց ·
Դիւցազին մըտրակ
Վարէ զնա երագ



Ընդ կարգ բանակաց ·
Հուր պատէ շուրջ փակ ·
Գանչեն սաղաւարտք
'Ի ոտիւքն յարիւն մած :
Ցընթացն հապըշտապ
Խուժանն ալըստամբ
Տապաստ անկանի
Նետիւքն հըրաբոց ,
Հանգոյն զերդ փոշի
Վարեալ 'ի հողմոց :

Իսմայելեանք գոռք , ո՞ւր էք ·
Ճետ Մովաբու , զաւակք ազգաց Եդովմայ ·
Իդումէք , քաջք Ամնայ ·
Եւ դու յոխորտ զարմ Տիւրոսի , Սիդոնայ ,
Եւ դու , վայրագդ Ամաղէկ :

Կան աւանիկ իբրև զաղբիւր ցամաքուտ ·
Եւ յիշատակն անգամ յանհետ 'ի կորուստ : . . .

Այս քանի՞ ինձ Տէր նոթ ճէ բարութիւնս ·
Ըզծերութիւն նա զարքայի պսակեսցէ :
Իմ է Եփրեմ , իմ Գաղաադ , Մանասէ ·
Յակովբ վահան իմ և Նեցուկ է գըլխոյս :
Այս քանի՞ ինձ Տէր նոթ ճէ բարութիւնս ·
Ըզծերութիւն նա զարքայի պսակեսցէ :

Յարևելից 'ի ծագաց
Յարևմըտից ծայրս ափանց
Տըւաւ սահման յԱնեղէն ·
Եւ մարգաշատ Սաբա , պարարտն Եթովպիա ,
Ծով Տիւրոսի ճոխն և ամպք Արաբայ
Զիսրայէլին պետ պաշտեն :

Ծափս հարէք , ազգք · գայ արքայիցն արդ արքայ ·
Ահա ելեալ նըստաւ յիւր գահ գերապանծ ·
ԸզՍիոնի կանգնէ հիմունս յաւիտեանց ·
Յուսապատար բերկրեալ լեառն անդ խայտայ ·

Ծափս հարէք, ազգք. գայ արքայիցն արդ արքայ .
ԸզՍիոնի կանգնէ հիմունս յաւիտեանց :

Յարդարաբաշխ իւր աջոյ
Սփռէ ազանց ըզլիութիւն և զհանգիստ .
Ցընծա՛, Սիոն. ընդ հաշտարար յարկաւ քոյ ,
Իբր 'ի կադէս բուրեան արմատն արմաւոյ ,
Արդարութիւն, խաղաղութիւն ծաղկեն միշտ :
Յարդարաբաշխ իւր աջոյ
Սփռէ ազանց ըզլիութիւն և զհանգիստ :

Ընդ Սիոնի սուրբ տաղաւարն հաճի Տէր
Քան ընդ խորանս Յակոբեայ .
Բնակեալ անդէն՝ տայ զպատգամացըն պատուէր .
Ուր փայլէն փառքն և զրանչելիք գեր 'ի վեր .
Հանգոյն նըմին կացցես Սիոն դու անմահ :
Ընդ Սիոնի սուրբ տաղաւարն հաճի Տէր
Քան ընդ խորանան Յակոբեայ :

Անդ լաւ իցէ քան ըզհազարս՝ օր մի լոկ .
Ուր և արքայ, զօրով պատեն շուրջ ժողովք
Քաղցրիկ որդւոցն յոգւոց, նըմին փառք և ցուպ ,
Գնայ յաւերժ, զերդ ձիթենին այն տօք ,
Զօրով շաքլեալ ծաղկեն բողբոջք առ բնոյն հուպ :

---



# Ի ԾԱՂԻԿ

## ԹԱՌԱՄԵԱԼ Ի ՏԵՏՐԻ

Յիշեմ, յեզերս անդ ծովափանց ,
Յոր հարաւոյ ձգէ զիս երկին ,
Երկին ջինջ, զերծ 'ի մըրրկաց ,
Ուր ընդ ոստովք տերևամած
Շընչէի զբոյր օդոց ջերմին :

Անդ պարզէր ծով անծայր ընաւին
Ի ծագս բոփիւ կապուտագոյն .
Ծառն հանգիսից՝ նարընջենին
Էր զի տեղայր 'ի գլուխս ըզձիւն .
Ծըխէր բուրումն 'ի դալարոյն :

Առ կոթողին աճէիր անդ
Ուր կայր տաճար յամաց կործան ,
Ածեալ նըմին պըսակ 'ի զարդ .
Եւ պըճնէին ըզբուն իւր հարթ
Խոյակք քոյին ծըփեալ ծածան :

Ո՛վ ծաղիկ, զարդ աւերակաց ,
Յոր հային աչք 'ի զարմացման .
Քաղեալ զառէչըրդ ձիւնազգեաց ,
Տարայ 'ի կուրծս իմոց լանջաց
Ըզքոյ բուրումն՝ 'ի շընչել զայն :

Այլ արդ տաճար, ափն և երկին
Անհետացան անդարձաբար .
Յամայն ամբարձեալ կայ բոյր քոյին .
Եւ 'ի շըրջել անդ զէջս՝ հայիմ
Ի քաղցր աւուր աղօտ նըշմար :

## ՆՈՒԱԳ ՑԱՐՓԻՆ

Ընդ երկայն վիշտ նորին 'ի քեզ գութ անկաւ .
Տաս լոյս ինձ , Տէր , զի պաշտօն առ քեզ սէր .
Ահա 'ի գէջ դալուկ ճակատս իմ թաթաւ ,
Յաչըս նորուն երփնի յերանգ կենսաբեր .
Եւ ջերմութիւն քաղցր ընդ անդամս իմ բընաւ
Արեամբս յածեալ բերի 'ի սիրտ իմ տակաւ .
Ծնանիմ այսօրէն 'ի սիրել դեռ :

Այլ և բնութիւն ինքնին զարթնու յօրս առտէն ,
Վերկենդանեալ 'ի հեշտ արև Մայիսի .
Հաւք Աստըղկան պատուհանիս առ երի
Ըղձագըրագոյն ամսոյն ըզդարձն աւետեն :
Ընդ դաշտ դալար եկ ընդ նախկին իմ քայլից .
Տար զիս , սիրուն Նշվիր , ուր մըլթ տարփելոյդ .
Կամիմ դիտել ըզյամրընթաց ելս արփւոյդ ,
Եւ ըզկառացն էջս 'ի լերանց մեր ծայրից ,
Մինչև 'ի ժամ յոր ընկլուզցի նա յալիս ,
Եւ թողցէ զօդս առ գիշերոյ մեղմ զեփիւռս :
Եկ , զի խիթաս վասն իմ . անամպ են երկինք .
Հեշտ անցցէ օրս քան զամենայն գեղեցիկ .
Եւ ժամ է այս , յոր ընդ դալար ծաղկազարդ
Մօտ առ խաչին նընջեն հովիւքն արդ հանդարտ :

Ո՛վ տէր . զի՛ քաղցր են օդք , և ջինջ փայլէ լոյս .
Դու , արեգակն , իշխես յաղթօղ 'ի բնաւ դոյս .
Եւ 'ի յերկնից , ընդ որ վարես ըզքոյ կառս ,
Հեղուս նոցին ըզլիութիւն և ըզկեանս :
Յաւուր յայնմիկ , յոր զմութ զատեալ 'ի լուսոյն ,
Ըզքեզ Յաւերժն արկ յասպարեզ քոյ անհուն ,
Տիեզերք համայն ըզքեզ ծանեան թագաւոր ,
Եւ պաշտեաց մարդն անկեալ հանդէպ գըլխակոր :
Յօրէ անտի հատեալ զուղիղ բոցավառ ,



Անդուլ վարես ըզքոյ սովոր ճանապարհ .
Ոչ նուաղեցան քոյ լուսափայլ ճառագայթք ,
Եւ ըզճակատ քոյ ոչ խամրեաց ժամանակ :

Երբ ձայն այգուն զարթուցանէ զարշալոյս ,
Հընդիկն անկեալ պաշտէ և տայ օրհնութիւնս .
Եւ միջօրեայն յորժամ 'ի հուր բարերար
Ի նուաղ անդամս ազդէ տակաւ աշխոյժ վառ ,
Գոգցես Աստուած որ 'ի նըշոյլդ 'ի հրաբոց
Մտանէ յոգիս , արծարծելով զիմ ըղծոց .
Եւ զգամ զի միտք իմ զերծանին 'ի կապոյն ,
Իբր այն թէ յիս հըպեր բազուկ Բարձրելոյն :
Այլ . . վեհդ հատուիչ ո՞չ ներէ այդմ հաւատալ .
Զիցե՞ս , արփիդ , փառաց նորին մէն դու փայլ .
Եւ մինչ չափես զանպարագիր երկնից դաշտ ,
Ո՞չ , արեգակն , աչաց նորին ես նըկատ :

Ո՛հ , թէ երբեք ուրեք յաւուրս անձկութեան
Նըզովեցի ըզլոյս արփւոյն զերդ խոտան .
Թէ շըփեցի զառ իս ողբովքդ ինչ եպեր .
Տէր , որ ըզխոր սըրտից գիտես , ներեա՛ , Տէր .
Զեր ճաշակեալ իմ բնաւ զանճառ քաղցրութիւն
Տեսանելոյ զէքս առ իմս տարփելոյն ,
Եւ 'ի սըրտիս , ընդ փայլս աւուր ոսկորալոյ ,
Իմանալոյ ըզդարձ կենաց և սիրոյ :
Վա՜հ անմըտիս . ոչ գիտէի ես ըզկեանս .
Այլ օրս ուսոյց ինձ զայն , և տամ առ քեզ փառս :

# ՖԵՐՐԱՐԱ.

## ԱՓ ՅԱՓՈՅ ՅԵԼԱՆ ԱՆԴ Ի ԲԱՆԴԻՆ ԹԱՍՍՈՅԻ

Սուրբ նաՀատակ են մարդ, Աստուած, բնաւ Հանճար։
Գործի պատժոյն յապաղս Համբոյրս ընդունի.
Մարդ պաշտէ զխաչ, յոր զոՀն եկաց չընչասպառ,
Եւ մեծարէ զշաղախ բանտին Թասսոյի։

Աստ Թասսոյի զբնդան, 'ի Հռոմ՝ Գալիլայն,
Խարոյկք, դամբանք, խաչք, փայտ մաՀու Սինեէին,
Ո՛Հ, իրաւամբ ըզմարդ ատնէք դուք խոտան.
Որ զայս խընդրեաւ յերկնից, խառէ զջաՀ նորին։

Մեծ 'ի փոքունս, ազատ 'ի գաս բանտըրկաց,
Թէ չիջանի Հանճար, 'ի դէպ այնմ եՀաս.
Զի զկախաղանս ճըշմարտութեան և փառաց
Առ քաղաքաց դըրամբք կանգնեմք ընդ բընաւս։

Բախտս այս պընդեաւ զօրացուցէ զմեր ոգին.
Զասուրան յարգեսցուք, այլ եղիցին ձեռք մեր բաց։
Մեր արտասուք ա՛ արիւն՝ են իւղ կանթեղին,
Զոր տայ տանել մեզ Տէր Հանդէպ մաՀացուաց։

---



# ՈՂՋՈՅՆ ՀՐԱԺԵՇՏԻ

Այո՛, թողի զանդորր դադար,
Զդադար՝ վաղուց ինձ տենչալին,
Ուր քաղաքի զբաղմանց 'ի տար,
Ի գիւր քաղցրիկ և Հեշտարար
Աւուրքս անշուշտ լուռ սաՀէին։
Լքի զՀովիտն յանշուք 'ի գիր,
Եւ ըզմտերմին անպաճոյճ յարկ։
Թողեալ զՊիսեայ թաւուտ պուրակ
Ցաւով Մուսայն իմ տարագիր
Լքանէ տըխուր և վըշտակիր
Ըզվայր՝ զոր իւր ընտրեաց բընակ։
Ոչ ևս գնասցուք մեք ընդ գալարս
Ի նախ նըշոյլս առաւօտին,
Ցածեալ թափառ 'ի քայլս ոտին
Ըզմեր ցընորս քերթողականս։
Ոչ ևս տեսցուք մեք զարեգակ,
Երբ 'ի լերանց իտալական
Թաւալեալ զկառսըն կարմրերանգ,
Հօրըն կենաց Համանըման՝
Նըւաղելոյ ծագէ բնութեան
Զարթնութեան լոյս նորափայլակ։
Ո՛վ մայրք զառամք, չուք անտառաց,
Ո՛չ ևս տաջիք մեզ Հովանիս,
Եւ ոչ լուիջիք ըզմեր գաղտնիս.
Ոչ ևս եկցուք Հովտին 'ի Հայց
Ի մըթասսուեր գէջ անձաւիս.
Եւ ընդ երեկս յանշուք տաճար
Երբ զանգակին զանգ տըխրարար
Կարդայ Հրաւէր մարդկան չինին,
Ո՛չ ևս գնասցուք աղօթականք
Ի գուճս 'ի վէմն անփառունակ,
Որ ծածկէ զՀող գեղջուկ չիրմին։

Ողջո՜յն, Հովիտք. ողջո՜յն, պուրակք,
Ժայռք ապալերք, լի՛ կապուտակ,
Թաւուտ մայրիք, հեշտ օթեւան,
Երանելեաց, իմաստնոց կայք,
Գնացի 'ի ձէնջ անդարձական:
Ահա մանկունս իմ խուսափուկ
Ի շուրջ թեւթեւ պատիր հողմոց
Սրանայ յափանց յանկարծ յանձուկ,
Զոր ինձ տային խնամք աստուածոց:
Նորոց մրըրկաց գնամ դիմագրաւ,
Եւ փոթորկաց նորոց հարկաւ
Կայ 'ի վտանգ կուրս իմ բեկբեկ.
Թէպէտ 'ի տիս ծաղիկ կենաց
Ընդ ո՛ր վիմուտս, յո՛ր եզր ափանց
Ոչ խըրեցայ ես նաւաբեկ:
Այլ հի՞մ ողբովքս յանդըդնաբար
Թախանձ բախտին արկանեմ ես:
Ճանապարհին հազիւ 'ի կէս,
Ցեռս ակնարկել իցէ՞ հընար:
Հազիւ շըրթամբքըս մերձեցայ
Ի կենցաղոյս գաւըն բաժակ,
Եւ անդր յինէն արկի բացեայ:
Այլ կըշռեցաւ վըճիռ դըժնեայ.
Հարկ է ըմպել զայն ցըյատակ:
Ցորժամ անցեալ հատանիցեմ
Ըզմեծ կէս մասն ասպարիզին.
Երբ ընդ բոլոր կենաց բեւռին
Հերք բալխոտակք ինձ ծաղկեսցեն,
Ծերոյն Պլինեայ այսրէն եկից
Ցայց մնաւոր օթեւանին,
Ուր ինձ պահի մտերիմ յերկնից:
Անդ 'ի խորին առանձնոցի,
Ընդ ձեռատունկն իւր ծառաստան՝
Տեսցուք սահեալ իբրեւ զալի
Ըզվերջ աւուրցս յոքնատատան:
Անդ մեք անդորր և անվեհեր
Ընդ մրըրկալից մեր կեանս յերեր
Այսրէն բերեալք միշտատակաւ,
Եւ զաչս յածեալ յետ կոյս 'ի հեռ,



Զասպարիզին չափեսցուք ծիր,
Զոր հատանել կայր մեզ հարկաւ:

Նո՛յն նաւապետ որ ալեօր
Ի բարձր ուրեք ժայռ. մնաւոր
Բազմեալ հանդարտ մօտ ընդ երեկ,
Ընդ խորան յածի աչօք թափառ,
Եւ դեռ դիտէ ըզծովն 'ի տար՝
Զոր հատ երբեմն ակօսաբեկ:

---

## ԱՒԱԳ ՇԱԲԱԹ

### Ի ՌՈՇ-ԿԻՑԵՈՆ

Ա՛յս մեռանին վերջին շըշուկք աշխարհի.
Օ՜ն յայս դադար, նաւազգ անլոյս, մատիր դու.
Այս 'ի խորին խաղաղութեան կայ հոգի.
Խաղաղութիւն ոչ մահու:

Զեն աստ երկինք մըրըրկալից, ոչ մըթին.
Այլ քաղցր աչաց պարզի միշտ նոյն լոյս անբիծ:
Կենդանին աստղ, որում ըստուեր է արփին,
Ծաւալէ զլոյսն 'ի յերկնից:

Որդունակ այր փաղփարոյց նախ քան զայգ,
Ցերջանիկ յարկս յառաջ 'ի տիս տըւաք խոյս.
Երագքս անցին, մինչ դուք դեռ ես 'ի նոյն կայք.
Արիք զարթիք. ծագեաց լոյս:

Սիրտ խանդակաթ, մատիր. կայ սէր և աստէն.
Այլ սէր մաքրեալ փառի արծարծ 'ի սեղան.
Յընդի յայս հուրս որ յայնմ ինչ գոյ մարդկօրէն.
Իսկ այլն անմահ է համայն:

Հրակեն աղօթք 'ի սրբութեան սատ 'ի վայրս,
Եւ այգաստեղ գնացից լինին մեզ բանբեր.
Եւ վառքն մեր վարեալ զժամուց ըզգաստ կառս,
Լցեալ չափեն զաւուրս մեր:

Վըսեմ պըղինձըն զարթուցեալ ընդ այգուն,
Խառնէ 'ի ձայն հողմոց ըզմեր պաղատանս.
Եւ գոչաւոր կռանաւ սարսեալ անդ օդոյն
Հընչէ զաղերս մեր բարբառս:

Ի փառս ժայռին ընդ կամարաւ մըթաստուեր
Կայ պարզ սեղան. Արքայդ երկնից, դու ինքն ես:
Այո, Աստուածն էից վառեալ ջերմ 'ի սէր,
Անդր հաւատոյ գայ 'ի տես:

Լռեցէն խորհուրդքս, և պաշտեսցէ սիրտս համբուն.
Յաչս իմ յայտնէ խաչն ըզլուսոյ նոր պատկեր:
Դեռ յերկուացայց յոսս անդ մեռեալ Աստուծոյն.
Ո՛չ. սէր պարզէ ինձ ըզսէր:

Կոր այդ ճակատք վառեալք 'ի հուր եռանդունք.
Խունկք, հեծութիւնք ծըխեալք 'ի սուրբդ օթեան,
Եռանդն արծարծ և ըզմայլման արտասուք,
Բնաւք ինձ ասեն. Տէր է այն:

Տեառըն մտերիմք, թոյլ տուք զի ձեզ նմանակից,
Որպէս առ դրունս ապարանից որք 'ի մայր,
Առ տաճարին սեմովք հեռուստ պաշտեցից
ԶԱստուած՝ որ տայ ձեզ զանդորր:

Ո՛հ, տուք խառնեմ զերգս իմ ընդ ձեր օրհնութեանց.
Խունկքս անմաքուրք զոյգ ընդ խընկոյդ ամբարձցին.
Ո՞չ նախ մարդիկ ընդ սուրբ երգոցն հրեշտակաց
Ըզնուագս խուրեանց խառնէին:



Ի կենդանեաց թըւոյ մեն այդ ջընջէ զիս.
Լի եմ ցաւօք, խըղճիւ մըտաց և աւուրք.
Ի մութ գաւթիդ սահմանեցէք զիմ տեղիս
Աստ մեռելոց յարկացն հուպ:

Թո՛յլ տուք հըսկեմ օտարս յաճխինս անդ 'ի՛ պահ:
Վառ ըզչիրմաւ հանգոյն ջահիցըդ սըրբոց՝
Ըզգենու առ մահն յինէն. տացէ յետս ինձ մահ.
Մընամ չիրմացն 'ի զարթոյց:

Ո՛հ, տայր որ ինձ հուպ առ նորօք ըստ կամս իմ
Առ սեղանովն և մօտ անդորր այս տեղւոյս
Այսպէս վճարել գնըչլար կենացս առանձին
Աստէն ընդ մահ և ընդ յոյս:

---

## ՔՐԻՍՏՈՆԵԱՅՆ ՄԵՐՁ Ի ՄԱՀ

Եւ զինչ լսեմ. հընչէ զինև պղինձըն սուրբ.
Զինչ լացողացդ այդ մըտերմաց պատեալ խումբ.
Վասն ո՞ր այդ երգ տըխուր և ճրագ կիսալոյս:
Մա՛հ, այդ քոյ ձա՞յն իցէ յականջս ազդարար
Զայս հունկ նըւագ. և ես չիրմին յեզր 'ի ծայր
Ընդոստ զարթնում 'ի քընոյս:

Ո՛վ դու յաւէժ կայծակն հըրոյն երկնայնոյ,
Անմահ բնակիչ կորըստականըս մարմնոյ,
Բարձ զարհաւիրս. մահն ազատել ըզքեզ գայ.
Թողեալ զկապանս առ ըզքոյ թռիչս, հոգիդ իմ.
Մարդկեղինաց կարեաց լըքումըն բեռին
Համարեցի՞ արդեօք մահ:

Ո՛չ ևս, այո՛, զժամս իմ չափէ ժամանակ:
Վերին յարկաց պատգամաւորքըդ պայծառք,
Ցո՛ր նոր գարպասըս տանիցիք զիս թեթև.
Ահա լիւղամ ես ընդ ալիս լուսակիր.
Ընդարձակի միջոցն հանդէպ, և երկիր
Գոգցես խուսէ ընդ ինև:

Այլ զի՞նչ լսեմ. 'ի ժամ հոգւոյս իմ զարթման
Ձայնք հեծութեանց և ողբք ընդ ունկն իմ հարան:
Նըժդեհակիցք իմ, արտասուէ՞ք զիմ ըղձահս.
Դուք արտասուէք, մինչ ես 'ի սուրբ բաժակիս
Արբի զմոռաց վըշտաց, և զուարթ հոգիս իմ
Մտանէ յերկնից նաւակայս:

---

## ԱՍՏՈՒԱԾ

### ԱՌ ԼԱՄԸՆԷ

Քաղցր է հոգւոյս թողուլ զկապանս իւր 'ի բաց:
Լըքեալ ըզլուծ մահկանացուացըս կարեաց
Եւ զգայութեամբք յածեալ յաշխարհ մարմնական,
Թեթև սլանամ հոգեղինացն 'ի կայան.
Անդ ընդ ոտիւք կոխեալ զհանուրս ըզգալի,
Ազատ ճախրեմ հնարաւորացն 'ի վայրի.
Նեղ է հոգւոյս լայնատարած իւր զընդան.
Ես ինձ խընդրեմ անծայրածիր օթևան:

Զերդ կաթ մի ջուր ընդ Ովկիան վայրահոս,
Կան միտքս 'ի ծոց անբաւելւոյն խորասոյզ.
Եւ անդ իշխան յաւիտենից և վայրաց,
Զափեն ըզժամս և ըզմիջոցըն տարած.
Ընդ եզականքս յածեալ մերձին անդր յանդոյն,
Առնուլ 'ի միտ զէին անհաս բընութիւն:



Այլ թէ զոր զգամս 'ի նկար հանել բուռն հարից,
Անբաւականք ինձ պակասեն ձայնք խօսից:
Կարծեալ հոգւոյս իմ բարբառել, շուրթն 'ի յայզ
Ջօդըս կոծէ, բառուեր մըտաց խորհըրդոյս:

Ես Տէր մըտաց երկեակ բարբառ այլազան.
Մին ընդ այերս յօդաւորեալ թըռչի ձայն,
Սահմանաւոր, իմանալի մահացուաց,
Եւ բաւական պանդըխտելոցս աստ կարեաց,
Եւ ըստ յողդողդ մահկանացուաց պայմանի,
Ընդ գաւառաց և կամ դարուց փոփոխի.
Միւսն յարակայ, վըսեմ, անբաւ և հանուր,
Մըտաւորաց բնաւից բարբառ է բնատուր,
Ոչ իբր ըղձայն ցընդեալ ընդ օդըս ծաւալ,
Այլ կենդանի բան 'ի սըրտին իմացեալ:
Հոգւով լսել, պարզել, խօսել գոյ հընար,
Որոյ ազդումն ածէ եռանդն և լոյս վառ.
Անդուստ հոգւոյն կըրից թարգմանք չանթեռանդ
Պարզին հառաչք և բորբոքումն և ջերմ խանդ.
Սա ինքն երկնից և մաղթանաց է բարբառ,
Զոր սէր միայն իմանայ աստ 'ի խոնարհ:

Ընդ ջինջ կայանս ուր ես ճախրել ըղձանամ,
Եռանդն ոգւոյս ինձ զայն պարզէ յանդիման.
Նա ինձ լոկ լոյս ընդ թանձրամածըս խաւար,
Քաջ քան ըզբանն յայտնեալ հանդէպ ինձ զաշխարհ:
Ե՛կ, առաջնորդս իմ քեզ լեցի գործակից,
Հա՛պա սլացիր 'ի թևս նորին 'ի հրալից:
Բառուերք երկրի բառնին յաչացըս մերոց,
Անհետ լինին արդ ժամանակ և միջոց.
Եւ մըշտընջեան իրականին 'ի կարգի
Կամք աւասիկ ճըշմարտութեանն առաջի:
Աստղն այն հանուր, անառաւօտ, անգիշեր,
Է ինքն Աստուած, ամենամեծ ինքնատէր.
Նա է որ էն. բընաւք 'ի նմա, տիեզերք, ժամք
Են անպարփակն իւր էութեան տարերք պարզք.
Ցարկ իւր՝ միջոցն, և կեանքն՝ աւուրք անվախճան.
Ներկատ իւր՝ տիւ, ու աշխարհ պատկեր է նորայն.

Տիեզերք ողջոյն ընդ հովանեաւ կան աջոյն։
Ցաւերժ ուղխիւք բղխեալ էիցս 'ի ծոցոյն
Եւ իբր ըզգեստ յորդեալք յանհուն ականէն,
Եւ ընթացեալ յանգին՝ ուր բնաւք նոր ծագեն։

Գործն անթերի և անսահման իբր ըզնա,
Ստեղծող ձեռինն ընդ գալն 'ի լոյս օրհնիս տայ.
Լնու նա զանբաւն առ մէն շնչոյն տուրեաւ.
Կամել նորին՝ է գործ, և կեանք՝ հաստելն յար։
Բնաւից աղբիւր, տէր և իշխան բոլորին.
Անճառ իւր կամք՝ անհաս օրէնք են նորին։
Կամքն այն սակայն անշամանդաղ, գերազօր,
Արդար է զոյգ ըզգօն, ուղիղ և հըզօր,
Զոր մարթելեաց բնաւից յայտնէ բառ հաճոյն,
Աստիճանեաւ վերաբերեալ յինք զանգոյն։
Իմաստութիւն, գեղ, մանկութիւն, սէր և կար,
Ձեռնհաս 'ի տալ միշտ և մընալ անըսպառ.
Եւ լի զեղեալ յոչինչն ըզսուրս իւր անգլին,
Կարէ աստուածս հանել յէից հուսկ վերջին։
Սակայն սոքա, ծընունդք աջոյն զօրութեան,
Զառ 'ի միմեանց չափեն խըտիրն անսահման,
Զըգեալք 'ի բնուստ առ ստեղծողն հաստիչ են,
Ի կէտ բնաւից, 'ի բաւականն ինքնօրէն։
Ահա Աստուած, զոր բնաւ պաշտէ մըտաւոր,
Աբրահամուն Տէր, յոր խոկայր Պիւթագոր,
Ազդէր Սոկրատ, Պլատոն գիտէր ընդ աղօտ,
Աստուած, առ բանն համագոյիւք լեալ ծանօթ.
Ցոյս արդարոյն ու ակընկալեք թըշուառի,
Եւ զոր Յիսուս հուսկ եկն յայտնել աշխարհի։
Չէ սա աստուածն այն գործ ձեռաց մարդկայնոց,
Վարդապետեալ առ մոլորեալս 'ի սըտոյ,
Եւ խաթարեալ 'ի կեղծ քըրմացըն ձեռաց,
Զոր պաշտէին հարք մեր ահիւ գիւրանսաց.
Մի է միայն, արդար, առատ, բարեսէր.
Գործք իւր յերկրի են յայտ, անունն ընդ եթեր։

Ո՜հ որ ծանեաւ զայն, մանաւանդ որ պաշտէ.
Որ անարգեալ կամ մոռացեալ յաշխարհէ,



Մենիկ 'ի սուրբ նըշոյլ ջահից գիշերի
Ի սըրբութիւնս ընդ հաւատոց վերբերի.
Եւ անդ սիրով և գոհութեամբ ոգեպատ,
Հանդէպ նորին զերդ խունկ ծըխի բոցավառ։
Այլ առ թըռիչս առ նա ելից միտքս անզօր՝
Պարտին վերուստ առնուլ ըզկար և ըզզօր.
Հարկ է սլանալ յերկինս 'ի թև բոցացայտ.
Եւ թեւք հոգւոյն են սէր և իղձք խանդակաթ։
Ա՜խ, և ընդէր չեղէ յաւուրն՝ յոր մարդիկ
Դեռ. իսկ նորին ընդ ձեռն ելեալ նորատիք,
Աւուրբք յԱստուած մօտք, մօտագոյնք սուրբ հոգւով,
Գնայլին հանդէպ, սերտ խօսակից լինելով։
Զի ոչ տեսի զաշխարհ յարև իւր նախկին,
Զըլուայ զմարդոյն ձայն 'ի զարթոյցն առաջին։
Բնաւ անդ առ նա ըզքէն խօսէր, և դու նմա.
Տիեզերս ըզքոյ շինչէր ըզշուք գերակայ։
Ելեալ բնութիւն առ 'ի ձեռաց Արարչին,
Զարարողին յայտնէր զանուն գըլխովին,
Որ յապա զարս յաւուրց զանխուլ ժանգահար,
Ցարարս քոյին փայլէր կըրկին լուսավառ.
Մարդն 'ի յանցեալն առ քեզ միայն դընէր դէմ.
Զհայր իւր կարդայր. դու ասէիր. Ես ինքն եմ։

Իբր ըզօրըզայ զնա վարժեցեր ընդ երկար,
Եւ զձեռանէն ծըգեալ տանել հաճեցար։
Քանիցս 'ի փառս ըզքեզ ցուցեր դու նըմին,
Ի Սենարայ ձորս, 'ի կաղնիս Մամբրէին,
Ի Քորեբայ թուփս, 'ի կատար վեհապանծ,
Ուր ետ Մովսէս հրէից օրէնս գերազանց.
Ազգն Յակովբայ, անդրանկածնունդ մարդկութեան,
Զամս քառասուն 'ի քէն եառ զմանանայն։
Խրատեալ ըզնա 'ի քոյ պատգամս կենդանիս,
Բարբառէիր յըղքանչելիւք ակնյայտնիս.
Ի մռանալն ըզքեզ՝ հրեշտակք վայրիջեալք
Նորոգէին 'ի միտսն ըզքոյդ յիշատակ։
Այլ հուսկ զերդ փակ բառ ակն աղբեր իւր 'ի տար,
Ջինջն յիշատակ եղծաւ յընթացըն խանգար.
Ըզհնացելոյ աստեղն ըզփայլ լուսազգեաց

Ժամանակին գիշեր տակաւ քօղարկեաց։
Դու լռեցեր. մոռացութիւն, ձեռք դարուց
Եղծին ըզմեծդ անուն դրոշմեալ 'ի քոյդ գործ.
Դար ըզդարիւ հաւատք չիջան դալկահար.
Եւ մարդ զերկրպագս կացոյց ընդ քեզ ու 'նդ աշխարհ։

Այո, ով Տէր, հնացեալ աշխարհս առ քոյ փառս,
Կորոյս զանունդ, ըզհետս եւ զքոյ յիշատակս.
Որոյ 'ի գլուխ հարկ է անդրէն յուրն ընթաց
Ալեաց յալիս վերադառնալ յուխս ամաց։
Բնութիւն, երկին, ըզձեզ դիտէ ակն ընդ վայր.
Ջանեալ զԱստուած՝ կայ մարդ յակճիռս իւր տաճար-
Յամայս երկնից հայի դէտակն 'ի նանիր
Ընդ մեծաքանչ ընթացս արփեաց բիւրուց ցիր.
Կայ 'նա անդէտ համայնավար այն ձեռին,
Եւ հրաշակերտք ըզքանչելեաց եղծանին։
Տացեն վաղիւ որպէս յերէկն ըզնոյն փայլ.
Ո՛ գիտէ ուստ 'նոցուն խաղաց շըքեղ քայլ.
Կամ թէ լամբարդ այդ կենսատու բոցալոյս
Խա՞ւ բոկիզըն եկից ընդ ծագըս գընտոյս.
Ճարք մեր չանսին ըզնախ շողշող իւր շըրջան.
Զի առաջին օր չիք աւուրց մըշտընջեան։
Յաշխարհ մըտաց զո՞ւր տեսչութեամբ քով ըզքեզ
Ի մեծամեծ յեղափոխմունս ցուցանես.
Եւ յըզըօսանօդ անդ պետութիւնք մարդկեղէն
Ընդ վայր յածեալ ձեռաց 'ի ձեռս անցանեն.
Ազք մեր սովորք ազգ ազգ 'նորուն փոփոխմանց,
Ընտելացան ընդ միապէս շուք փառաց։
Քանիս տեսին դարք ըզքախտի դէմս հանդոյն.
Տեսիլն եղծաւ. եւ մարդ 'նիրհէ ծանրաքուն։

Օ՜ն զարթի՛ զմեզ. ձայն տուր. զաշխարհ փոխեա, Տէր-
Լուիցէ ոչինչն ըզքոյ բարբառ կենսաբեր.
Ցե՞րբ հանգիցես. արի՛, արդ ժամ պատեհ է.
Նոր տիեզերս հա՛ն յանդընդոցս այս վըհէ.
Աչքս 'ի թըմբիր՝ 'նորոց տեսլեանց են կարօտ,
Եւ 'նորագործ ըզքանչելեաց՝ միտքս յօդդօդ։
Փոխեա՛ զերկնից ըզկարգ ըզլուռ անբարբառ.



Յաչս առկայծեալս ըզնոր ծագեա՛ զարեւ վառ.
Քանդեա՛ զպալատդ այդ հին. փառաց քոյ անձաւ.
Ե՛կ ցոյց ըզքեզ, եւ հաւատալ բուռն արա։
Սակայն մինչեւ թերեւս ընդ վայրս ամայի
Կասեալ արփւոյն 'ի տալոյ զլոյս աշխարհի,
Արեգականն իմանալոյ փայլ առկայծ
Բարձցէ տակաւ զիւր ըզնըշոյլս 'ի մըտաց.
Եւ յօրն՝ յոր ջահդ այդ մեծ անկցի գլոր տապալ,
Համայն յաւէժ սուզանիցի ընդ ցայգ մռայլ։
Անդ մանրեսցես դու զանպիտանդ այդ արար.
Եւ շանթահար բեկորք գոգցեն դար ընդ դար.
« Ես եմ միայն. ոչ այլ ոք կեայ յինէն զատ.
Կորոյս ըզկեանս մարդ՝ կորուսեալ ըզհաւատ »։

---

## Ա Շ Ո Ւ Ն

Ողջո՜յն, մայրիք, յոր դեռ կանաչ մնացուածք կան.
Տերեւք դեղնեալք ընդ դալարիս դիր եւ տար.
Ողջո՜յն, հուսկ տիւք գեղածիծաղք. սուգ բնութեան
Հաճոյ աչացս է եւ ցաւոց ես յարմար։

Ես մըտայոյզ յածիմ յուղին մենաւոր.
Սիրեմ դիտել դեռ ըզվերջին մի 'նըւագ
Զարեւ տըժգոյն, որոյ 'նըշոյլ քօղաւոր
Հազիւ ցելու զտոփւքս ըզմռայլն անտառակ։

Յաւուրքս աշնան, յորում բնութիւն մեռանի,
Յաչան առկայծեալս զտանեմ շընորհս առաւել.
Հրաժեշտ մտերմի է այն եւ հուսկ ծիծաղ մի
Շըրթանց՝ զոր մահ մինչեւ խաղառ դայ փակել։

Այսպէս 'ի ծայրս հասեալ կենացըս ծագաց,
Լըլով զերկար աւուրցս ըզյոյսըն դերեւ,

Դառնամ դեռ յետս, և ակնարկեալ անձկայրեաց
Դիտեմ զքարիս, յորս վայելել ինձ չեղև։

Ո՛վ քաղցրագեղ բնութիւն, երկիր, ծորք, արփիք,
Յեզըր շիրմիս առ ձեզ արտօսր ինչ պարտիմ։
Զի մաքրափայլ է լոյս, և օդք քաղցրասիք·
Յաչըս նուաղեալս որքան սիրուն է արփին։

Արդ ցըմըրուըն իսկ դատարկել ցանկայի
Ըզբաժակ զայդ, խառն 'ի լեղի ւ 'ի նենգաւր·
Ի խորս նորուն, յոր ես ըզկեանս ըմպէի,
Մնացեալ թերևս մեղր կաթիլ մի դեռ կայր։

Թերևս յապայս ինձ կայր պահեալ տակաւին
Բարեաց ինչ գործ, որոյ կորեաւ յոյսն ունայն·
Գուցէ ոգի մի ինձ անյայտ յամբոխին
Գիտէր ըզսիրտս, և տայր առ իս պատասխան . . .

Անկեալ ծաղկին՝ լքանէ հողմոց զիւր ըզբոյրս·
Այդ են առ կեանս և առ արևն ողջոյնք իւր·
Ես մեռանիմ. և 'ի թափել անդ հոգւոյս՝
Ցընդի զերդ ձայն քաղցրանըւագ և տըխուր։

## ՅՕՐԻՈՐԴ ՈՄՆ, ԴՍՏՐԻԿ ՔԵՐԴՈՂԻ

Ո՛վ քերդողի դուստր երկնային,
Կեանք՝ երկաձայն իմն են նըւագ·
Շողք ճակատուն 'ի քոյդ փայլին,
Երգէ քընարն ընդ քոյ մատամբ։

Շուրթն իւր երբ քոյ պաշտէ աչաց
Համբոյր հանդարտ և անսարսուռ,
Ի քոյ ճերմակ բիբ փարդագզեաց
Ուժգին հընչէ քաղցրիկն համբոյր։



Յորժամ ըզքեզ բառնայ 'ի գիրկ
Ի ցոյց երկնից, որ յայն խանդայ,
Գոգցես զերազն հրաշատեսիկ
Գըգուէ ծընդացն իւր 'ի վերայ։

Մատունքն առ քեզ երբ կարդալ տան
Ըզտաղս երգոց, զոր մընչեաց նա,
Իբր այն ոգի նորուն բամբռան
Անդ խոնարհեալ ազդէ 'ի նմա։

Յոգել նորին՝ արտօսր խակոյն
Յոլայ յաչկունդ առ ինքըն մած.
Յայդ արտասուս դըստեր իւրում
Սիրտըն լիւղայ· փառք իւր փայլեաց։

Ջերդն երբ կըրկնեն շըրթունք քոյին,
Կըրկին խայտան ոգիքն յուզեալք։
Ո՛վ քերդողի դուստր երկնային,
Կեանք՝ երկաձայն իմն են նըւագ։

## ՍՐԲԱԶԱՆ ՔԵՐԴՈՒԹԻՒՆ

### ԴԻԹԻՐԱՄԲԵԱՆ ՏԱՂ

Սարդք պըսակեն զիւր ըզճակատն աստղազարդ,
Եւ մըշտաշող յաւէժալոյս իւր նըկատ
Անցեալ ընդ դարս և վերառեալ զքող համայն,
Զարթուցանէ զանցեալըն, յածի յապագայն։
Պարզին հանդէպ արձանագիրք աշխարհի,
Եւ իբր հեղեղ՝ դարք ընթանան առաջի։
Ըստ կամս իջեալ, ելեալ յընթացըս նոցուն,
Առ գերեզմանս ազդէ ըզժամ մահական,
Կամ 'ի կիթառ կուսական
Երգէ յաշխարհն հին զօր՝ զաւուրց նախագոյն։

Մի՛տ դիք, դիմէ Եհովա
Ա՛ռ ՚ի ծոցոյ յաւիտենից։
Թո՛հ բո՛հն ՚ի նի՛րհ՝ հանդէպ նորին զարթնու կայ.
Լինու զայն աջն, և զօրութեամբ գերակայ
Հանգչի յանհունն ընդ տարած։

Ասաց Աստուած, և եղև լոյս. ու աստեղց հուր
Լուսաւորեաց ըզքող ցայգոյն անհրջուլ.
Ընդ ընաւ տարերք այլազան
Բաժանեցան ընդ ձայնին.
Եւ ջուրք յանկարծ վազս առին
Ընդ խորափոր ալս ծովուց.
Լերինք ՚ի վեր կանգնեցան,
Եւ հիւսիսին հողմք թըռեան
Ընդ լայնածիր դաշտս օդոց։

Եօթնիցս հաստիչ բարբառ ձայնին Եհովայ
Լսելի եղև ընդ աշխարհ
Եօթնիցս առ ձայն նորին ոչինչն էր դարձուած։
Ասաց Աստուած. Արասցուք մարդ յիմ տիպար.
Ասաց, և ծնաւ մարդ, հուսկ յետինն իւր արար.
Ընդ բանին հաստիչ եկաց և յանձն իւր խընդաց։

Բայց ոչ Աստուած, այլ հեծեծէ մարդն ինքնին.
Կորեաւ Եդեմ... և մնաց մեզ մահ և վտանգ.
Զայնքն յարդարու գեղանին,
Եւ բեկանի թևըն հեշտալուր ՚ի տաւղին,
Ցոր Յովբ տայ ձայն ողբուր, բախտին իւր զունակ։

Ո՛հ, կորիցէ օրն այն խապառ՝ յոր ծնայ ես.
Վա՛հ, կորիցէ խապառ գիշերն՝ յոր յղացայ,
Եւ ծոցն որ ետ զիս առ էս,
Եւ ծունկքն յոր ես գրգուեցայ։
Աստուած ՚ի թուոյ աւուրց եղծցէ զայն յաւէտ,
Ու ՚ի թուխ թաթաւ մութ մըռայլից օրհասին
Ի համարոյ աւուրց ջընջեալ այն անհետ,
Լիցի զերդ չէր բընաւին։



Արդ նընջէի յանյիշատակ մոռացման,
Եւ նիրհէի դեռ ՚ի քուն
Ցանապաւօտ յերկար գիշեր թուխ մըթան
Ընդ թագաւորս ՚ի հող ծախեալս ամենայն,
Ընդ յըղացեալ պըտուղն անծնունդ և թառամ,
Զտեսեալ ըզլոյս արևուն։

Սահին աւուրքս իբր ըստուեր,
Զորս ըշտապել փափաքիմ.
Ըզթիւ արփեաց խըլեա, Տէր,
Զորս ես հաշուել դեռ ունիմ։
Ի տես երկար աղետիս
Եղբարքս տեսան մերժեն զիս,
Վաստակարեկք յիմ չարեաց։
Զի՞ր անկանիմ առ նոսա.
Խուսեն յինէն զութք նոցա
Զերդ փտակ՝ բըլրոցն ՚ի կողաց։

Հանգոյն ամպոյ փաղանցիկ
Անհետացաւ գարունս իմ.
Զտեսցեն զըարեաց հետս իմ բիբք,
Ցոր վաղ երբեմն հըրճուէին։
Ի սաստ ցասմանն որ շընչէ՝
Աւա՜ղ, կորզեալ ես յերկրէ,
Գընամ ուստի չիք ընաւ դարձ։
Հովիտք և խմն իսկ կայան,
Եւ աչքս ինքնին՝ որ զիս լան,
Ոչ ևս տեսցեն զիմ ըզգնաց։

Մարդ միօրեայ կեայ յերկիր
Ընդ մէջ մահու և վըշտի.
Եւ յաղեափցն ՚ի ձանձիր,
Իբր ըզծաղիկ թօթափի.
Ո՛հ թօթափի. զէթ ՚ի ցող
Սակայն ծաղկանց բուծն յողող,
Ծաղկէ անդրէն առ վայրկմի։
Իսկ մարդն, աւա՜ղ, յետ կենաց
Ի լի՜ճ թափուր ՚ի յալեաց,
Զոր մինչ խընդրեմք՝ ցամաքի։

Աւուրք հալին իբր ըղձիւ
Ի շունչ ցասմանն երկնաւորաց.
Եւ խղճք յուսոյս որ կարծէին՝
Խուսեն զերդ ջուր յիմ ձեռաց։
Բացէք զիմ հուսկն օթեւան,
Ուր մառայլ մահիճ հանգըստեան
Ցաւոցս 'ի դիւր կայ յարդար։
Զչիրիմ ինձ հայր կարդացի,
Եւ ասացի ցերր երկրի.
Դու ինձ լիցիս քոյր և մայր։

Այլ բարեբաստ օր չարին
Ոչ մըթագնի յոյգս այգուն.
Ցերկար նա կեայ հեշտագին,
Թաթաւ յարեան հէք որբոյն։
Զըգէ զարմատն հեռի ընաւ,
Եւ նման հօտին ըզբըլըաւ
Տոհմ իւր պատէ ըզԱեգոր.
Ապա յարձան պերճ շիրմի
Նընջէ յեմակս 'ի հովտի,
Իբր այն թէ կեայ տատանոր։

Տեառն այս գաղտնիք, զոր ես պաշտեմ անբարբառ։
Զայգուն նա առհս 'ի ծիր գըծեաց յաջոյն կար.
Զովկեան կըշռեաց, և մէտ 'ի կախ եդ զերկին.
Անդունդք են մերկ նըմա, և գժոխք՝ ջինջ պայծառ.
Հաստեաց զերկիր, սերմանելով զաստեղց շար.
Ես ով իցեմ առ նըմին։

Եսայի

Սակայն թընդաց քընարն 'ի մատն Եսայեայ.
Ի վառ ծոցոյն ըսպառնալիք յորդ գընան.
Կոչէ Աստուած. ինքն ընթացեալ՝ ձայն բառնայ։
Երկին, երկիր, լուարո՛ւք որդւոյս Ամովսեան.
Զեր Ովիս. երևեցաւ ինձ Աստուած.
Զգեցեալ ըզփառս և զահ տեսի զԱդոնայն.
Ծուփ ծալ 'ի ծալ ծայրք հանդերձին լուսազգեաց
Լըցին զգաւիթ սըրբութեան։



Սերովբք յոտին ընդ աստիճանս փըղոսկրեայս
Ըզբօղէին հանդէպ՝ հրանիւթ վեցթևեանք.
Թռուցեալ յերեարս և առէին այսգունակ.
Սուրբ, սուրբ, սուրբ, Տէր, Աստուած և պետ երկնայնակ.
Լի է երկիր յիւր 'ի փառս։

Ընդ բարբառոյն դըղրդէր կամար տաճարին.
Ադոնայի սրանայր ընդ ամպն հըրամած.
Մըրրիկ ծըխոյն ըզվայրն ելից սըրբութեանց.
Դողաց երկիր ընդ ոտս իմ։

Իսկ ես սատէն վատաբըրտեալ լըռեցի՞.
Որ զ.քեզ տեսի, Տէր, չիշխիցեմ խօսել ես.
Եւ ժանտ ազգիդ պըղծալից
Երկեա՞ց յայտնել ինչ ըզ.քեզ։

Ո՞վ մեզ եկցէ, ասէ Աստուած զօրութեանց.
Ո՞վ խօսեսցի ընդ իմ.— Ո՛վ Տէր, ես ինքն իսկ.
Դիր ձեռն հրացայտ իմ շըրթանց.
Եւ կամ պատրաստ առաքիկ։

Վա՜յ ձեզ, որ վաղ 'ի յայգուէ
Շընչէք զգինւոյն բուրմանց հոտ,
Եւ զօրս երեկ գըտանէ
Ըզսեղանով գեղեկոտ։
Վա՜յ որ 'ի վաշխ տոկոսւոյն
Լայնէք անեզր և անհուն
Ըզծիր անբաւ ձեր դաշտաց։
Կամե՞ս, անյագ մահացուդ,
Մենիկ ընդ դաշտ ցամաքուտ
Բնակել յերկրին կենդանեաց։

Վա՜յ ձեզ, ով ազգք յետսամտիք,
Ցանդուգն ասուրց զաւակունք,
Որ 'ի սըրտիդ բարբառիք.
Եմք յաչըս մեր իմաստունք։
Ի լոյս փոխէք ըզգիշեր,
Եւ զլոյս 'ի խիտ թանձր ըստուեր,
Ծածկոյթ ձերոյդ հեշտութեանց։

Սակայն զերդ ցուլ ընդ ամայս
Ըղձեա քարշէք ըզշըղթայս
Ձերոց երկայն չարութեանց ։

Վա՜յ քեզ, կըղզիդ Սիդոնի
Եւ Տիւրոսի, դուստր ալեաց,
Որ զՈբիրայ ծիրանի,
Զոսկին տայք գնովք աշխարհաց․
Վա՜յ ձեզ, հընչէ հուսկ ձեր ժամ․
Զո՜ւր պատի զձեօք Ովկիան ։
Զուրց թագուհիդ, առ քեզ վայք,
Ոյր 'ի նոր ծովըս պէսպէս
Թընդմամբ հընչէն իւր ըզթեւս
Բիւրուց նաւաց առագաստք ։

Եկեալ հասին արդարութեանս իմ աւուրք․
Զեղու զայրոյթ ցասմանս 'ի ձեզ, ասէ Տէր․
Ոչ պատարագք եւ ոչ խունկք
Ածցեն ըզցասումն իմ 'ի սէր ։
Մատնեցից զազգդ 'ի մահ ու 'ի խիստ կոտորած,
Եւ հընձեսցէ երկաթ զիւր դաս բանակաց
Որպէս ըզխոտ 'ի վայրի ։
Տէր, տէր, խնայեա՛․ — Ո՛չ ես այլ դուլ եւ դեգեր․
Ցորդավըտակ հեղցէ զնովաւ իմ սուսեր
Զարիւն զօրացն 'ի մարտի ։

Ցամաքեսցին ուխքն յիմ ծախիչ շընչմանէ․
Աջ իմ զերդ դաշտ լայնատարած հարթեսցէ
Զպալատ նորին եւ զպատուար․
Հրով այրեսցին բոցատոչոր զերդ խոզան․
Ո՛չ ես իցէ անդ ազդ, քաղաք եւ իշխան․
Եւ լըռութիւն մնասցէ յար ։

Որմունքն 'ի փուշ ու 'ի մորենի ծածկեսցին,
Եւ բնակեսցեն յաւերս անդ օձ, բորենին․
Բուն եւ անգեղք տարմաբար
Զայն առ իրեարս արկեալ 'ի մութ գիշերի
Բերցեն ձագուց իւրեանց ըզգուտ պարենի
Ցաշտարակացն 'ի կատար ։



Ցայս բան՝ Աստուած փակէ զշըրթունս Եսայեայ ։
Եզեկիէլ մըռայլուտ
Ի բուռն անշնորհ խորայեղին ցամաքուտ
Իջուցանէ զբանըն կենաց եւ ձայն տայ ։

Հոգւովս ածայ ես յանապատ յանմահէն․
Եւ այն էր լի ցամաք ոսկերըք համօրէն․
Մատչիմ դողմամբ․ այլ ցիս գոչէ Եհովա․
Ցանե՞ն ոսկերըքդ, եթէ խօսիմ առ դոսա ։
Ասեմ․ Տէր, Տէր, դու գիտես զայդ․ նա ասաց․
Լո՛ւր բարբառոյս կա՛լ 'ի մըտի, եւ խօսեաց․
Ո՜վ ցամաքեալ ոսկերք եւ կոյտ ցուրտ հողոյ,
Ելէք 'ի վեր, առէք ըզշունչ ընդ լուսոյ ։
Ցըրուեալքդ անդամք գայցեն ընդ ձայն իմ 'ի մի․
Եւ 'ի վերայ ձեր ածից շունչ կենդանի ։
Հաստատեսցին մկանունք յոսկերսըդ թառամ․
Զիւքդ յօդեսցին, արիւնդ առցէ ըզշըրջան․
Արէք 'ի կեանս, եւ զիս տեսէք ո՛վ իցեմ ։ —
Բարբառոյ Տեառն հըպատակեալ՝ ձայն առնեմ․
Ե՛կ, շունչդ անդուստ 'ի մոլից արփւոյն եւ յելից․
Ի հիւսիսոյ եկ 'ի դոսա, եկ եւ լից ։
Անդ զարթուցեալ նըշխարք շիրմին ճեպ ընդոստ,
Ցանկարծ յիրեար բախին ոսկերք թառամոտ․
Արեգական 'ի լոյս անդրէն բիբք բանին․
Ոսկերքն յօդեալք 'ի մի, պատին 'ի մարմին․
Եւ կանգնեցաւ անդ դաշտ մահուն ամենայն,
Եւ յազգ եղեալ 'ի մեծ, ծանեաւ զԵհովայն ։

Այլ Տէր ելից զորդիսն յանյուշ 'ի մոռաց․
Դուստրն Սիոնի յաղէտ վըշտին մըռայլոյզ,
Հառաչալից նըստի այրի յիւր փառաց,
Եւ յԵրեմեայն ձայն՝ լուծանի յարտասուս ։

Ըզբարկութիւն իւր Տէր զինեաւ ծանրայոյզ,
Մերթ ամփոփեալ զաջն եւ ձըգեալ իւրովի․
Ո՛վ անցաւորք ճանապարհի,
Իցե՞ն եղեալ ցաւք ըստ իմոցըս ցաւոց ։

Զո՞ւր բարբառիմ․ կայ նա առ ձայնս ունկնախից ։
Եդ զիս նպատակ իւրոց փըքնացն հըրավառ․

Եւ չէղու յիմ սիրտ անդադար
Սաստ իւր վարսէ ըզնետս իւրոց կապարճից:

Ի հալ և մաշ ոսկերս իմ մորթք չորացան.
Եւ երգեցին մանկունք զիս յերգս այպանաց.
Եւ Տէր 'ի մէջ զիս ազգաց
Զերդ տարախիլ մի խոտ եթող լքք միայն:

Արկաւ զանձամբ ըզաստ ցասմանն երկնաւոր:
Փակեաց զիմ ռահ, խռովեաց զուղւոյս արահետ.
Եւ 'ի սրտես խինդ խոյս ետ,
Եւ ասացի առ Տէր. Աղէ յիշեա, Տէր:

Ըզթարկութեան զաւուրս յիշեա զայսոսիկ.
Յիշեա զլեղին՝ զոր ջամբեցեր դու առ իս.
Դեռ տակաւին սիրես զիս.
Զիս հարկանես, սակայն յուսամ քեզ այսուհետ:

Զաւուրքս 'ի լալ անցուցանեմ դառնագէտ.
Ծանեայ ըզՏէր անդուստ կենացս 'ի յայդուէ,
Որ 'ի պատժելն իսկ սիրէ.
Անձն իմ, նա ոչ եթող 'ի բաց ինչ յաւէտ:

Ո՛հ որ ծանեաւն ըզնա, և նախ 'ի տիոց
Տարաւ ըզլուծ ողորմած Տեառն 'ի սաստի.
Ի փրկութեան Տեառն հանգչի,
Եւ լուռ սպասէ նըստեալ յեզերըս գետոց:
Ընդ ծանրանալն 'ի նա սիրոյ քոյ լծոյն,
Հեղու զաղերս և զարտասուս ընդ ցայգ մռայլ,
Եւ շուրթն 'ի հող խոնարհեալ,
Պաղատախառն յուսով սպասէ աւուր քում:

Լռեա՛, քնար. և դուք իսկ,
Ո՛վ տեսանողքդ, ապայց ձայն.
Տիեզերք բոլոր կան լռիկ
Եկաւորին յանդիման.
Շըրթունքդ ազդեալք, կացէք փակ.
Դադարեցէք, սուրբ կիթառք.



Մինչև 'ի բարձըր վայրի
Ձայն անծանօթ աշխարհիս՝
Ցամքս հընչեսցէ. փառք յերկինս,
Խաղաղութիւն 'ի յերկրի:

---

## ԾԱՂԿՈՒՆՔ

Անարգ տըղմոյ կայտ դու երկիր,
Որ փըշալից փըթթես ծաղկունս,
Տացուք շընորհս առ Էն, որ ցիր
Ի ծոցդ հեղու ըզվառ զայդ գոյնս:

Թէ չէր սափորն, յոր կաթ առ կաթ
Քայլեց մըրոց դժ տայ երկին,
Լինէր համայն ինչ անապատ,
Եւ ոչ վճարէր ռահն երկնային:

Եւ սաէաք. Հիմ 'ի նանիր
Ըզտապանին զընամք մեք ռահ.
Որ զի և կեանքս ածեն ձանձիր,
Կալ մեզ առ սեամս նեղէ 'ի ճահ:

Այլ 'ի ծածկել զերկայն զայն վայր
Ցանես ըզյոյս ընդ հօղն համայն
Ի մեր աւուրցըս ճանապարհ.
Այսպէս ծաղկամբք ըղձնի տապան:

Եւ դու, իմ սիրտ, սիրտ հէք՝ կըզկաթ,
Ուր այնքան զուարթ ձայնք հընչէին,
Դու, որ մախրոց կայտ մի ես արդ,
Ծածկեալ յածուխ սեաւ և ցըրտին.

Ո՛հ, թող ծաղկեն դեռ միւսանգամ
Նըւաղ նըշոյլքդ աշնանային:
Ցընդեալ երեկն ամառնական,
Փայլ ծիրանի թողու յերկին:

Հոգի իմ, ո՛ն մեռիր վառեալ
Ցնորից մըտացդ 'ի խարուկի.
Ջերդ չիջուցեալ աստղըն զիւր փայլ՝
Ի ճառագայթս իւր ընկըղմի:

## ԹՌՉՈՒՆՔ

Երաժիշտք Տեառն, երգիչք իւրոցն օրհնութեանց,
Երանական նըւագս երգեն ամարան.
Ցածին ընդ օդս, առեալ ըզթեւս հրեշտակաց,
Խուսեալ ուրախք 'ի պարտիզաց տէրունեան:

Ցորչափ ծաղկեն ծաղկունք, ցորչափ կըտրեալըն հասկ
Հատ մի թողու անկեալ յակօսըն տըժգոյն,
Կամ խիստ ձըմեռն ոչ արկ ըզսառն 'ի բաժակ,
Ուր հանգչին ոտք իւրեանց իբր յեզր անդ բընոյն,

Լըռուն զերկինս ուրախութեամբ եւ երգովք.
Պըճնէ աղջիկն 'ի սեգ եւ բոյր զբանտ նոցուն.
Մանկիկն ածէ զայն ըզնոցին գիրգ փետրովք.
Եւ գարմանէ ծերըն առ սեմովք տան իւրում:

Այլ երբ եղեամն եւ ձիւն զամովք ձըմերաց
Խամրեն ըզմիրգ եւ ըզտերեւ, յոյլ երթան.
Ո՞չ են սիրեն. դադարեցի՞ն 'ի կենաց.
Բնաւից գաղտնիք նըժդեհութեանն անյայտք կան:



Գտանի փետուր մի առ ծառոյն աղտեղեալ.
Ջերդ չոր տերեւ, զորով սողայ որդն ունիչ,
Ի շաղ ցայգոյ դընի դեղնեալ եւ թացեալ,
Եւ չէք 'ի նմա, եղուկ, ոչ բոյր, ոչ երփն ինչ:

Կայ անդ զստոյն խեցակարկառ կախեալ բոյն,
Զորոյ թօնուտ հողմ ճօճէ զսեաւ մի բեկոր.
Ո՛վ հէք դադար սըգոյ, եւ հին մասն որմոյն,
Ցոր խայտային երէկ ձագուկքն 'ի ժըխոր:

Ո՛վ քաղցր իմ հաւք, զի՞ զուարթք 'ի լոյս հասանէք:
Հաղբ իմն են կեանք, յոր ըմբըռնէ ըզձեզ Տէր:
Մեզ նման էք դուք, աւա՛ղ. եւ դեռ երգեմք մեք:
Քանի՛ անգութ լինէր Աստուած, թէ մեծ չէր:

## ԽԱՇԽԱՇՔ

Երբ գայ կենացըս երեկոյ,
Գարուն ըզսիրտ առնէ տըխուր,
Ի ծաղկազուարճըն կողմոյ
Ծաղրակատակ ինչ սըփռեալ բոյր:
Ի բնաւ ծաղկանց, զոր փըթթէ նա,
Զորոց ըզթերթ սէրըն բանայ,
Եւ յորս ընդ մարգս ակն ըզմայլի,
Շատ է, աւա՛ղ, տերեւ մի լոկ,
Որոյ բուրմամբք խընկեսցէ ոք
Ըզշարժ մահճաց գերեզմանի:

Ինձ քաղեցէք խաշխաշ վայրի,
Որ ցորենոյն անէ յըստուեր.
Ծորան, սեւն, կաթէ անոյի,
Որ զվարտասեալ փակէ զաչեր:

Շատ տըքնեցայ. խոնջ է հոգիս
Ցանըրջական ցնորից կըռուիւս։
Դու չես վասն իմ, ո՛վ վառ գարուն.
Վարդք և շուշանք գնասցեն 'ի բաց։
Կափուցելոց զի՞նչ պէտք բըբրաց.
Բայց թէ ծաղիկն որ պահէ զքուն։

---

## ԽԵՑԻՆ ԱՌ ԾՈՎԵԶԵՐ

ՅՕՐԻՈՐԴ ՈՄՆ ՕՏԱՐԱԿԱՆ

Երբ սիրուն ոտքդ, աղջիկ, յածեալ թափառին
Ընդ գէճ աւազ, ընդ ծովուն ծոպս ոսկեհուռս,
Կըքեայց, սըրտիս սէր, 'ի խարտէշն այն խեցին,
Զոր ջինջ յըղկէ, տեսն, Աստղիկ յաղի ջուրս։

Ըղձման նորին չունի յարկեղն Ովկիան.
Ում վարդք այտից հազիւ գայցեն 'ի կըշիռ.
Իսկ թէ պատուած իւր մատուսցի առ ունկան,
Բիւր լըսլին ձայնք, զոր իմանալ ոչ է դիւր։

Մերթ լըսլին հողմք, խառն ընդ բոտուար թանձր ալեաց,
Որ գոռալով գան խորտակլին զտափք քովք.
Մերթ անտառին նուրբ սօսափիւն հեծութեանց,
Եւ մերթ մըրմունջք, որք գաշն հըծծեն բարբառովք։

Ո՛հ, ո՛չ թըւի քեզ 'ի խառնակդ այդ շըշուկ,
Զոր ընծայէ խեցին շըրթամբք կարմրալար,
Գանգ իմն անճառ, յորում անբաւ համայնք
Մտանեն 'ի ծերալ գոչեն զիւրեանցըն բարբառ։



Տո՛ր զայդ, ո՛վ իմ զուարթուն. և երբ միտք քոյին
Մենիկ, անգործ, զխորն ըղձամըդ տաղտուկս,
Զայտըդ 'ի ժմիտ՝ դիր յայդ գոհար ծովային,
Եւ կաց 'ի լուր, փակելով զաչսըդ սիրունս։

Թէ 'ի բիւր ձայնս, որ 'ի կեղեն անդ խըռնին,
Զայն քաղցրագոյն 'ի լսելիսդ հարկանի,
Հազիւ ելեալ յեզր արտաքոյ պատենին,
Ջերդ ուխտ սիրոյ, որ գալ 'ի յայս վարանի.

Եթէ ընդ գեղդ ըղձայ զերկիւղ և զհաճոյս,
Եթէ ծնանի՝ մինչ մեռանելն իւր խապառ.
Թէ թուի խուժել 'ի սըրտի խորս յարտասուս.
Թէ կայ տարտամ ընդ հեծութիւնս, ընդ յոյս վառ...

Մի՛ զանձն հաշեր թաքուն գաղտնեացդ 'ի խըդիր.
Շունչն այն քաղցրիկ, ո՛վ իմ զուարթուն, ես ինքն եմ։
Ո՞ր ձայն անհատ և անուշակ գայ յերկիր,
Բայց զանգ սըրտիս որ տայ բարբառս ինձ ըզքէն։

---

## ՄԱՀ ՍՈԿՐԱՏԱՅ

Ճշմարտութիւն է Աստուած։

Արեգակըն բարձրացեալ ըզգագաթամբք Իմետայ՝
Ըզթեսեան տաճարին լուսաւորէր ըզկատար,
Եւ զորմովք Պարթենոնի ըզճառագայթըն ցայտեալ,
Ի բանտըն սողոսկէր, իբր 'ի յողջոյն գաղտնաբար։
Երևէր յալիս ծովու ոսկենըկար խելք նաւու
Թիավարեալ 'ի Պիրէոն 'ի ձայն երգոց նուիրական.

Էր նաւն այն, որ այսրէն չարագուշակ վերադարձ
Սահմանէր ըզվերջին օր պարտաւորացն առ 'ի մահ:
Բայց օրէնք արգելուին բառնալ ըզկեանըս նոցին,
Ցորչափ ըզՅոնիա լուսաւորէր քաղցր արփին.
Զի մի ճառագայթքըն վիճակեալք կենդանեաց՝
Ցանըշըլ կափուցելոց թերեւս աչաց պըղծիցին.
Եւ կամ չուառականն յարտեանացըն փակել
Ըզկեանս և ըզլոյս կըրկին լացեալ ողբայցէ:
Այգուոնակ վըտարեալն յաքսոր 'ի հարցըն հողոյ՝
Մեկնի չև արշալուսոյն դեռ ընդ երկինըս ծագեալ:

Մընալով արթնութեանն 'ի քնոյ որդւոյն Սոփրոնեայ,
Բարեկամք ամենք թաղծեալք ընդ կամարօքն յածէին.
Կին նորին 'ի վերայ ծընգաց զորդեակըն բարձեալ,
Ըզմանկիկըն մատաղ, որ ձեռն ընդ աղխաըն խաղայր,
Եւ տեսեալ ըզխըստասիրտ բանտապանացն յամրութիւն,
Ըզճակատն հարկանէր ընդ պղինձ դըրացըն ժանտից:
Ամբոխն անմըտադիր ողորմագուշ բարբառոյն՝
Ցանցանելըն հարցանէր զողբոց նորին ըզպատճառս,
Եւ անդէն դարձեալ յառաջ ըզճանապարհ խոր վարեալ,
Եւ յերկայն անդաստակսն 'ի խումբըս խումբըս սփռեալ
Ժողովէր ըզսին զըրոյցըն հըռչակեալս 'ի ռամկին,
Պատմելով զըադնաց քանդումն և զառ աստուածսն հայ-
(հոյանս,

Ընոր խմըն կըրօնս ապականիչ մանկըտւոյն,
Զանանուն ումն աստուած՝ օտարոտի առ Հելլենս:
Շամբշեալ ասէին զայրն և զարշելի ճիւաղ ժանտ.
Նոր ումն Որեստէս հարեալ 'ի դից կուրութեամբ,
Զոր պատժէր 'ի փոխճանի արդարութիւնն անագան,
Եւ զոր պարտ էր երկրի զոհել երկնից 'ի նըւէր:
Դու, Սոկրատ, դու ինքն էիր, որ 'ի շըղթայս երկաթիս
Վասն արդար ճըշմարտութեան մեռանէիր պարտաւոր:

Հուսկ ապա չառաչմամբ ճըռնչեալ ծըղխնեաց զըռնանին,
Բարեկամքն 'ի ներքս հեղան հանդարտաքայլ, վայրակ-
(նեալք.

Իսկ Սոկրատ յալիս ծովուն ակնարկելով միանգամ
Եւ զառագաստն հուպ 'ի Դելոս ցուցեալ մատամբն առ-
(նոսա.



« Տեսէք 'ի ծովուն ըզծաղկազարդ զայդ ըզխելս.
Ի նաւըն նուիրական, Թէովրեայն բարեբաստ.
Ո՛ն, ասէ, ողջունեսցուք ըզմահագոյժդ առագաստ.
Անդէն 'ի հանգիստ մըտցէ հոգիս ընդ նըմա:
Բայց արդ խօսեցարուք. և ըզհուսկ օրս այս վերջին
Քաղցրախօս զուարթութեամբք հանգոյն այլոցն ան-
(ցուսցուք.

Մի հողմոց ըզնըշխար խըրախճանացըս տացուք.
Ի նուիրական պարգեւըս դից վայելեսցուք ցըվախճան:
Երբ նաւըն բարեբախտ 'ի կէտ ուղւոյն ժամանէ,
Ի տեսիլ եղերացն ոչ դադարէ յընթացից.
Այլ ծաղկամբք պըսակեալ, հողմոց պարգեալ զառա-
(գաստ,

Մտանէ երգովք 'ի նաւակայս, որ ըսպասեալ կան նըմա:

« Ըստ զըրուցաց քերդողաց, նախ քան ըզժամ խոր վերջին
Գողտրիկ գեղգեղմամբ քաղցրիկ կարապն աշխարէ:
Մի հաւատայք ինչ, բարեկամք. քաղցրաբարբառն այն
(թըռչուն

Առաւել վեհագոյն ազդումն 'ի դից ընկալեալ.
Ի մեկնելն 'ի զուարթագեղ Եւրոտասայն գարափանց,
Ի չըքնաղ մարմնոյ անտի հոգին 'ի կէս փախըստեայ,
Ժամանեալ քայլ առ քայլ 'ի հրաշալեացըն գաւառ,
Տեսանէ զանմահութեան ըզպայծառ տիւըն ծագեալ,
Եւ 'ի քաղցըր զարմացումն ըսքանչելեացն ընկըղմեալ,
Ցերկեր ըզխընդութիւնն 'ի վախճանելն անդ զեղու:
Ո՛վ որ զայքդ առ գերեզմանն իմ մօտ՝ 'ի լուր բարբա-
(ռոյս,

Կարապ եմ և ես. հուպ 'ի վախճանս երգեցից »:

Առ այս բան, ընդ կամարօքն հեկեկանաց հընչեաց ձայն.
Բարեկամքըն մօտագոյնըս պատեցան ըզնովաւ.
« Եւ քանզի մահ ըզախրելիդ վաղ յոյժ քեցէ առ 'ի մէնջ,
Խօսեաց մեզ ըզյուսոյ և ըզկենացն անմահից:
— Զայդ և ես կամիմ, ասէ. բայց մի կացցեն աստ կանայք՝
Գուցէ զոգիս մեր մեղկեսցեն հեղձամըղձուկ հեծու-
(թեամբք.
Զարհուրօք գերեզմանի արդ քամահել արժան է,
Եւ 'ի նոր իմն այլ աշխարհ վըստահ քայլիւք մըտանել:

«Գիտէք դուք, բարեկամք, զի ցանդ յառաջ իմ տիոց
Զօրութիւն անծանօթ զիմաստութիւն ազդեաց ինձ,
Եւ յայտնեաց ինձ զօրէնս հանդերձելոյ աշխարհին:
Յաստուածոց ոք էր արդէօք՝ 'ի ձայն ուրուք թարգուցեալ.
Կամ թէ գաղտ մտերմութեամբ կապեալ ոգի ինչ ընդ
(իս.

Արձագանգ տապանեաց և կամ մուսայն քերդողաց,
Ոչ գիտեմ. բայց որ խօսէրն առ իս մեղմիկ բարբառով,
Յորմէհետէ 'ի կատարածն իմ մեծաքայլ մերձենամ,
Բարձրագոչ խօսելով մատուցանէ մխիթար:
Վաղ ևս ճանաչեմ զաստուածեղէն իւր բարբառ,
Թերևս այնու՝ զի սիրտ զերծեալ 'ի զգայութեան ամ-
(բոխմանց՝

Մեծագոյն լռութեամբ ըզնորա բանսն լսէ.
Կամ թէ հաւանհրամանելով աներևոյթ զօրութիւնն
Առաւել սրբատառուչ ընդ երեկ կոյս գեղգեղէ.
Կամ մանաւանդ 'ի մտացօնս արկեալ զաւուրբս վախճան,
Յեզերս հանդ'րձելոց հոգիս 'ի կախ մէտ 'ի մէտ՝
Լաւ ևս ըղձայնրն ճանաչէ զեկեալն յայլմէ աշխարհէ.
Զերդ նաւազն յերեկորին թափառական ընդ ալիս,
Յորչափ թիավարեալ յեզերսըն կոյս մերձենայ,
Ըղձայնան հնչեալս 'ի նաւակայս ճըչգըրտագոյնըս լսէ:
Բարեկամն աներևոյթ երբեք զիս ոչ լքանէ.
Յարաժամ 'ի բարբառոյ նորին ականջք իմ թընդեն.
Եւ ձայն իւր 'ի սերկեանս իմով ձայնիւըս խօսի.
Ունկն արդ դիք, բարեկամք. ինքն խօսի ահա, և ոչ ես..»:

Ճակատն համդարտ և զուարթագին, ականողքն յուսով
(վառ,

Սոկրատ բարեկամացն արար նըշան բազմելոյ.
Անձայն ակնարկութեանն անդէն նոցին անսացեալ,
Առ եզերբք անկողնոյն նըստան լռիկ անբարբառ.
Սիմմիաս 'ի վայր զաչօքն ըզվերարկուն իւր ածէր.
Կեբես ըզթախծալից ճակատն յերկիր խոնարհէր.
Ի ծիծաղ հեգնական Անաքսագոր ժըպտելով
Թուէր նախանձաբեկ լինել ընդ բաստ իմաստնոյն,
Ըզբախտըն ծաղրել և ունչս առնել օրհասին:
Ի դուռնըն պըղընձի յեցեալ թիկամբն անդանօր,
Եւ ածեալ ձեռն ըզձեռամբ Մետասանիցն բաղասեակ,



Ընդ երկրայս և ընդ գութ վարանելով զայթ 'ի զայթ,
Մըրմընջէր 'ի ծածուկ. «Յի՞նչ ուղղութիւն իւր օգ-
(տեաց»:
Իսկ Փեդոն քան յիմաստունն՝ 'ի բարեկամն անձկայ-
(րեաց,

Ըզդէմսըն գեղանիս ծալ ծալ հերօքն ըքօղեալ,
Մօտագոյն մահճաց մահուն բազմեալ առ ոտս ուսուցչին,
Որդեակէս խոնարհէր ըզկըքըելովքըն ծընդովք,
Ըզքօղարկեալըն ամբառնայր աչս 'ի պաշտելին բարեկամ,
Շիկնէր ընդ արտասուսն, և արտասուէր տակաւին:

Այլ սակայն երկրաւոր տագնապ ցաւոց իմաստնոյն
Ոչ զօրէր այլայլել ըզկերպարանն և ըզդոյն.
Աչքն 'ի վեր ընթեռնուլ թուէին հեռի ինչ 'ի մէնջ.
Բերանն, ուր հանգչէր վայելչագեղ իւր ժըպիտ,
Ի բան պատրաստական՝ կայր փեռեկեալ կիսաբաց.
Ականջք նորա կային 'ի լուր աներևոյթ մըտերմին.
Վարսք հերացըն ծածանեալք 'ի շունչ հողմոյ աշնային,
Ըզգըլխովն յօրինէին պըսակ սըմոյն գունատեալ,
Եւ 'ի սիւգ առաւօտին տարուբերեալ մերթ ընդ մերթ,
Նըշոյլս արծաթափայլս 'ի ճակատուն սըփռէին.
Բայց սակայն ընդ ճակատն այն, յորում դրոշմեալ կայ
(հոգին,

Լուսազարդ երևէին խորհուրդք սըրտին վեհիմացք.
Որդունակ ընդ թափանցիկ պըղինձ, ընդ կուռ բաղխատ՝
Կանթեղն ըզսեղանոյն հեղեալ ըզլոյս իւր նըշաղ,
Եւ աղօտ ճաճանչիւքն առկայծելով տակաւին,
Լուսավառ ցոլմունս հատեալ գունագեղէ ըզնոսին:
Զերդ ընդ ծով ըզհետ գնացից առագաստին յածին աչք,
Նոյն բևեռեալ ըզհայեցուածս 'ի վախճանն այն ճա-
(կատ,

Անթարթ զաչսըն դիտելով և հազիւ հաղ կըլեալ շունչ,
Բարեկամքըն մըտադիրք կային հառեալ ըզհազագ.
Աչք իւրեանց հայէին 'ի նա վերջին հուսկ նըշաղ.
Ոչ ևս այլ լսելոց էին ըղձայն բարբառոյն:
Զերդ ալիք փեռեկին 'ի թափառ շունչ Եւրեայ,
Սիրտք նոցին անհամբերք խօսից իւրոց մընային:
Հուսկ ուրեմն աչքն յերկնից խոնարհեցան 'ի նոսա.
Եւ ինքըն ժըմտելով, որպէս յառաջն, ըսկըսաւ.

« Իսկ զի՞նչ. լա՞յք, բարեկամք, լա՞յք դուք այժմիկ՝ մինչ
(Հոգիս

Հանգունակ մաքուր խընկոյն, զոր բորբոքէ քրմուհին,
Թօթափեալ մինչ խոյառ զանարգ ըզքեղըն մարմնոյն,
Թռանիցի առ աստուածս հուպ, և սըրբանուէր ըզմայլ–
(մամբ

Ողջունեալ ըզլոյսըն ջինջ, զոր նըշմարեաց իսկ Թերևս,
Եւ խընդրեալ զճըշմարտութիւն, ծանիցէ զայն և տեսցէ:
Ի՞ր ուրեմըն կեայցեմք, ո՞չ ապաքէն առ 'ի մահ.
Հիմ առ սէր արդարութեան ըղձեղութիւն սիրեցի.
Աւ ի՞նչ 'ի մահուդ յայդմիկ, զոր կեանս անուանեմք,
Ոգորեալ ընդ վատթար կրից, Թէպէտ՝ գերի այնոցիկ,
Հոգիս ըզգայութեամբքս խմովք հանդերձ կըռուեցաւ:
Լաւութիւն առանց մահու զի՞նչ լինիցի, բարեկամք...
Մըրցանակ է այն մարտին և կամ պըսակ երկնաւոր,
Զոր 'ի ծագս ասպարիզըն սուրբ դատաւորըն բաշխէ.
Ի ձայն Արամազդայ՝ որ զմեզ 'ի կեանըս կոչէ.
Օրհնեցուք ըզձայնդ, ով քաջք, զոր յայսմ աւուր լը–
(սեմ ես:

Մարթ էր ինձ, զիմոց կենաց ըզմընացորդս ինչ կորզեալ,
Տալ երկիցս առ իս կըրկնել զաստուածեղէնն ըզպա–
(տուէր:

Մի Թողցեն ինձ աստուածք այլ ես ըզկեանս յերկարել:
Զերդ ծառայ պատրաստական 'ի ձայն կոչմանն ընԹա–
(նամ:

Եւ դուք, Թէ զիս սիրէք, որպէս յաւուրս անդ տօնից
Զխունկ անուշս ըզգըլխով ձերով հեղէք, բարեկամք.
Զորմոց զընդանիս կախեցէք ձօն նըւիրաց.
Եւ 'ի ճակատըս բոլորեալ դալարագեղ փունջս ոստոց,
Իբր ըզփեսայ նորահասակ, զոր խուռն ամբոխ որերոյ
Ցանկողինն հարսանեկան ածէ ըզհետ բաղանեաց,
Ի սեամս առագաստին զանբիծ ծաղկունըս սըփռեալ,
Նոյն և դուք առեալ զաջոյս՝ 'ի գիրկ մահուն տարայք
(զիս...:

« Զի՞նչ ուրեմն իցէ մահ. քակտումն անարգ հանգուցին,
Անմաքուր զուգութեան կապից երկրի ընդ հոգւոյն,
Եւ 'ի նուաստ բեռանէ ազատութիւն 'ի չիրմին:
Մահն, ով քաջք, է փոփոխումն և ոչ Թէ մահ իսկապէս:



Ցորչափ կեայ մարդն 'ի կաշկանդող մարմնոյն կապանըս
(ճըռչեալ,

Առ բարին ճըշմարիտ բերի ընդ քարշ դանդաղկոտ.
Եւ յընԹացից ճանապարհին յումպէտ կարեացըն կա–
(սեալ,

Կորուսանէ զճըշմարտութիւն, կամ գընայ զհետ գայթ
('ի գայթ:

Բայց այն, որ հասեալ 'ի բաղձալին իւր 'ի կէտ,
Զաւուրն յաւիտենից տեսանէ զայգըն պայծառ,
Զերդ ճաճանչ երեկորին վերճեմելով ընդ երկին,
Վըտարեալ անդուստ 'ի բաց՝ դառնայ 'ի գիրկս աստուա–
(ծոց.

Եւ 'ի ծորանան ըզմայլականս առատապէս վայելեալ,
Ցորէ օրհասին առնէ ըսկիզբըն կենաց:

« — Սակայն մահ ածէ ըզցաւս. և ցաւք՝ չարիք համարին:
— Եւ զի՞նչ, ով քաջք, գիտիցեմք մեք: Թէ և վայրկեանն
(այն դըժնեայ,

Արեամբ նուիրագործեալ իբրև ըզմեծ պատարագ,
Մարմնոյս զըհելոյ լիցի վայրկեան տանջանաց,
Ո՞չ 'ի միոյ արդեօք չարեաց ծընան բարիք ամենայն:
Գայ ամառն ըզհետ ձմեռան, տիւ յաջորդէ ըզգիշեր.
Ըզշըղթայդ յաւերժական ինքնին Աստուած յօրինեաց:
Ոչ առանց նեղութեան երկանց 'ի կեանըս ծընաք.
Եւ այն մահ երանաւէտ, յորմէ տըկարք զանգիտեն,
Զէ ինչ այլ՝ բայց ծընունդ յանմահական անդ 'ի կեանս:

« Սակայն ո՞վ զանդունդ մահուն հետազօտել կարիցէ:
Ըզմտաւոնս եղին աստուածք 'ի վեհ չըրԹունըս նորին:
Ո՞ գիտէ Թէ 'ի նորա ձեռըն պատրաստս յըմբըռնել՝
Հաճութեամբ եԹէ ցաւօք անկցի հոգին անըստոյգ:
Իսկ ես որ կամ դեռ կենդանի, ոչ ինչ գիտեմ. բայց խոր–
(հիմ

Թէ յայդըմ լըռութեան կայցէ խորհուրդ ինչ Թաքուն.
Եւ ներող աստուածոցն անաչառ կամք բարութեան
Ի մահուն իսկ անգամ իցէ ծածկեալ ըզվայելս.
Որպէս Սէր՝ աստուածեղէն զինուքն ըզախտ մեր խոցեալ,
Ցաճախ ըզհեշտութիւն Թաքուցանէ յարտասուս»:

Կեբես թերահաւատ ծիծաղեցաւ ընդ այս բան :
— Ընդ հուպ գիտասջիք զայն , ասաց Սոկրատ , և յաւել .

« Այո , մահացուին առ լոյս ողջոյնն առաջին ,
Երբ նըշոյլն ոսկեփայլ զարթեանունն համբուրէ .
Բարբառ սիրելւոյ խառնեալ ընդ ձայն քընարի .
Բուրումըն ծըխաշունչ 'ի բաժակէն ծաւալեալ .
Համբուրից անուշութիւն , յորժամ շըրթամըքն յածե–
(լովք
Տարփաւորն ըզտարփելւոյն շըրթունս ըզցայգըն խընդրէ ,
Չեն այնպէս քաղցր ըզգայութեանց՝ որպէս նախկինն այն
(հըրճուանք
Առն առաքինւոյ յազատանալն անդ մահուամբ :
Եւ մինչ տատանոր յերկրի աճիւնն ամփոփի ,
Ինքն յընթացիցն յափըշտակեալ 'ի խուսափելըն ըզտա–
(պաւ
Մոռանայ տալ աշխարհի զանդարձականն իւր ողջոյն :
Առաջի Աստուծոյ ցընդեալ աշխարհս ըսպառի :

« — Իսկ գիտե՞րդ · բաւական ուրեմն է մահ յերկրորդ
(կեանս :
— Ոչ · այլ պարտ է հոգւոյս յըզգայութեանց թօթափել ,
Մահաբեր յօժարութեանցն յաղթել փութով պընդու–
(թեան ,
Եւ կենացըս լինել երկարատև խոկըն մահ :
Մարտ պատերազմի են կեանք , և մահն՝ յաղթանակ .
Իսկ երկիր վասըն մեր մեղաքաւիչ է սեղան ,
Յորում մարդ 'ի սեղանն անդէն յըզգայութեանց մերկա–
(ցեալ ,
Պարտի զապականեալ ըզգեստն 'ի հուր արկանել ,
Եւ երթեալ մատուցանել 'ի սեղան անդր հաշտարար
Առ Աստուածըն մաքրութեան զիւրոց կենաց մաքուր զոհ :

« Առ ժամայն 'ի շիրմէն վերասլացեալք ընդ երկինս ,
Յանմահ կայանսն ընդ դիւցազանց և աստուածոց խառ–
(նեսցին
Այնպիսիկ , որոց յաղթեալ ըզգայութեանցն 'ի սուղ
(կեանս ,
Եւ ըղձիւքն 'ի ներքոյ մըտաց հնազանդ կացուցեալ ,



Գընացին ընդ կարգաց և օրինացըն լըծով ,
Ըզներքին դատաւորին լուան ըզձայն պատգամաց ,
Յանկախն 'ի մարդկանէ չոգան յուղիղ պողոտայս ,
Պաշտեցին հայցմամբ զաստուածս , ուստի յորդեն լաւու–
(թիւնք .
Ձըգնեալ առ փոյթ արդարութեան , զճըշմարտութիւն
Եւ զօրդւոցն երկնաւորաց զազատութիւնն ըստացան :

« Իսկ նոքա , որք ըզմարմին սիրեալ հոգւոյն հաւասար ,
Պընդեցին ըզյօդակապ ըզգայութեանց և մըտաց ,
Եւ զհոգին մատնեցին յանարգ հաճոյըս մարմնոյն ,
Հանգոյն Լեդայ զառածելոյ յամօթալից քարուականս ,
Այնպիսիկ , եթէ Աստուած ոք ոչ փրկէ ըզնոսա ,
Յետ մահուն իսկ իւրեանց ոչ դադարեն 'ի կենաց .
Եւ 'ի կապիցըն մեղսայնոց , զորս յօդեցին կամակար ,
Ոչ ազատք լինիցին թերակատար այն ոգիք :
Իբր Արաքնէ կացեալ 'ի կախ ըզգարշ թելոց ոստայնին ,
Հոգին ընդ մարմնոյն միաւորեալ և խառնեալ ,
Զուր ջանայ ըզչարաչար զանձին կապանըս խըզել .
Տակաւին յըզգայութիւնսն անշէջ կայ սէրն առ նոսին ,
Որք բաղկօք ցամաքեալովք ածեալ դեռ գիրկս ըզնովաւ ,
Յուշ բառեալ արկանեն ըզգարշելին զայն շաղկապ .
Եւ իբր օդ թանձրատարած մածեալ յերեսըս ճահճաց ,
Ունին զինքըն անարգ բեռամբըն խապառ հեռի յաստուածոց:
Յածեալք 'ի խաւարի լալահառաչ այն ոգիք ,
Ընդ հաւուն գիշերայնոյ աղխուր կանչիւնս հարկանեն .
Շուրջ ըզշիրմօք , ըզտափօրովք և զարձանօք դամբանաց
Ընդ քարշ ածեալ ըզտաղտկալի մարմնոյն պատառըն
(դըժնեայս ,
Ընդ կեանսն ամօթալիցս , փափըքատականք 'ի լուսոյ ,
Յորժամ անմեղութիւն զարտեանունս իւր փակէ ,
Ի մըթին քարանձաւաց իւրեանց անձայն խուսափեալք ,
Հանգոյն չարագործաց տիրապետեն գիշերոյ ,
Պատկերեն ըզծագումն արշալուսոյն ընդ ալիս ,
Ընդ լերինս յածեն հապճեպ ըզմառայլ օդոց երեւոյթ .
Պաշարեն ըզմիտըս մեր պակուցանօղ երազովք .
Ի նուիրական անտառաց խորս արկանեն ձայն սոսկալի ,
Կամ յեզըր դամբանի միոյ նըստեալք թախծալիցք ,

Եւ արփենոտ մատամբք իւրեանց ղօղեալ զճակատ կորա-
(կոր,
Ըղչարիս անձանց ողբան, յըստպանդ իւրեանց նախան-
(ձեալք.
Բայց սակայն ոգիք լաւաց ոչ են այսրէն առնեն դարձ»:

Լռեաց նա. և կերպս միայն եհատ ըղլռութիւն.
«Մի՛ տացեն ինձ աստուածք թըշնամանել ինչ ըղՅոյս,
Զէակն աստուածեղէն, որ նմանակերպ իբր ըղՄեր
Ըղպատանս արկեալ զաչօք, յիսկական լոյսն ածէ զմեզ:
Այլ քանզի յափանց աստի հանգոյն նըմին սրանաս դու,
Աւաղ, և քոյ բանքդ առ մեզ վերջինք լինիցին.
Ի խրատ ինձ, ով մարգիչդ իմ, և ոչ սըրտիդ 'ի թախիծ՝
Թոյլ տուր ինձ հարցաքանել ըղքեզ և տալ պատաս-
(խան»:
Ձերեաս իւր Սոկրատ խոնարհեցոյց քաղցրութեամբ,
Եւ կերպս զիմաստունն եհարց բանիւքս այսոքիւք.

«Անդր, ասեա, քան ըղչիրիմ հոգին կացցէ կենդանի.
Այլ եթէ վասըն մեր հոգին է լոյս ինչ ջահի,
Յորժամ հուր բոցոյն ըղնիւթ ըզգայութեանց ըսպառէ,
Յորժամ ջահըն շիջանի, զի՞նչ յայնժամ լոյսն անդ լինի.
Ջահն և փայլ պայծառութեանն համանգամայն եղծանին,
Եւ անդրէն ամենայնն 'ի նոյն գիշեր սուզանի:
Կամ թէ այնպէս զգայութիւնքն են առ հոգին. որպէս
(քնարն
Առ նըւագ քաղցրայարմար, զոր նուլաւ ձեռքս հարկանեն.
Յորժամ ժամանակ կամ որդն ըղփայտ իւր մաշէ,
Յորժամ ընդ մատամբք մերովք ճայթեն թելք բեկեալք,
Եւ աղիք խորտակեալք նըւագելոյ քընարին
Կոխան ընդ ոտիւք դընին աղջկան մոլելոյ,
Զի՞նչ լինին աստուածային նուագաց երգոցն այն հընչ-
(մունք.
Վախճանին ընդ քընարին. նոյն և հոգին ընդ մարմնոյն»..:
Իմաստունքն առ այս բան, 'ի քնին խորոց խորհըրդոյն,
Ըղմիմեանց ճակատն հակեալ և պըշուցեալք ընդ երկիր,
Խընդրէին պատասխանի և չկարէին գըտանել.
Այր ցընկեր բարբառելով մըրմընջէին մեղմաձայն.



«Ցեղծանել քընարին՝ յո՞ գընան ձայնք քաղցրութեան»..:
Եւ Սոկրատ ըսպասել թըւէր ոգւոյն գալստեան,

Ըզմին 'ի ձեռաց իւրոց եդեալ 'ի ծնօտի,
Միւսն յածեալ դեգերէր 'ի ճակատուն փեդոնի:
Եւ զուլամբըն փղոսկրեիւ ատանդական թափառեալ
Անցանէր և փայփայէր ըղխարտեաշ հերսըն վարսից.
Եւ ապա քեցեալ մատամբ ըղմի յերկայն իւր ծամից,
Որք վէտ վէտ ծածանեալ ծաւալէին մինչ յերկիր,
Ի վերայ ծընգաց իւրոց ըղգիրդ գանգուրսըն ծըփէր,
Կամ զխոպոպիս խարտիշագեղս հոլովեալ ցիր 'ի մատունս,
Խօսէր խաղալով իբրև ըզծեր հրաշազարդ՝
Որ խառնէ զիմաստութիւն 'ի խընճոյիցն անապակ.

«Հոգին, բարեկամք, ոչ է նըշոյլն այն տարտամ,
Որով ջահն ըզգայութեանց լուսաւորէ զմեզ աստէն.
Է նա ակն անմահական, որ տեսանէ զաղօտ տիւ
Ծագեալ, աճեալ և խոնարհեալ, և նոր ծագեալ վերըս-
(տին:
Իմանայ զի արտաքոյ ինքեան՝ կենաց լուսոյն ջահ
Նըւաղեալ մըթագնի, ինքն անաղօտ մընալով.
Ձերդ ակըն մահացուին՝ որ 'ի մըռայլ խաւարի
Կորուսանէ զպայծառութիւն, այլ ոչ զաչաց տեսութիւն:

«Ոչ այնպէս զգայութիւնքն են առ հոգին, որպէս քնարն
Առ նուագ քաղցրայարմար, զոր նուլաւ ձեռքս հարկանեն.
Հոգին է մատն աստուածեղէն՝ որ բաբախել տայ այնմիկ,
Եւ կամ ունկն, որ հեծութեանց ու երգոց նորին կայ 'ի
(լուր.
Ունկընդիր ուշակալու, աներևոյթ իմն ոգի,
Որ կայ դատաւոր նուագայարդար, կարգադիր,
Ի խառնակ բարբառոյ ըզգայութեանց բոլորից
Կազմեալ նըւագս ըսքանչելիս, ախորժականս աստուա-
(ծոց.
Վայրապար նուաղի քընարն, և ձայնք հընչմանցն ըսպա-
(ռին.
Բևեռքն անբարբառք յականջս հընչեն տակաւին:

Շատացո՛ր արդեօք, կեբիս։ — Այո՛ ողջոյնքդ ինձ վըկայ,
Անմահ ոմն է Սոկրատ։ — Արդ խօսեսցուք զաստուա-
(ծոց»։

Եւ ահա արեգակն հատանէր հուպ 'ի լերինս,
Եւ բերեալ ծառագայթիւքն իւրով ըզդաշտս և զալիս,
Զողջոյնն հրաշական թըւէր պաշտել աշխարհի,
Եւ երթալ վերկենցաղել 'ի պայծառ գիրկս Աստուծոյ։
Ի ծայրից Տայիգետեայ իջանէին խաշնարօտք,
Եւ զկողիւք Իմետոյ նըմնջէր ըստուերն հեղաշարժ.
Ի կոհակս ոսկիափայլ ծովու լուղայր Կիւթերոն.
Զըկնորմն առաւօտին թափառական դեռ յալիս,
Զընդհատեալ ընթացիցն արշաւ մեղմեալ առ ափին,
Ժողովէր երգ 'ի բերան ըզհողմուոյցն առագաստ.
Սըրինգն ընդ անտառս, և երգք յերեսս մըկանանց
Ընդ օդոյն հեծութիւնս հատանէին մինչ առ մեզ,
Եւ եկեալ խառնէին 'ի մեր տըխուր հեծեծանս,
Զերդ ծառագայթն երեկորին՝ ըստորասոյզ ընդ խաւար։

«Փութասցուք, սիրելիք. աւադիկ ժամ լըւացման.
Ո՛ն ըստրուկք, արկէք ջուր 'ի պըղնձաձոյլն աւազան.
Կամիմ նըւիրել դից սըրբամաքուր պատարագ»։
Ասաց, և 'ի սափորըն կարկաջուն մըխըրճեալ,
Զորէն զոհագործին առ սեղանով պաշտաման՝
Ըզծորանսըն փըրկարարս եառ անդէն 'ի ձեռս իւր,
Եւ երիցս 'ի ճակատն հեղեալ ըզշիթն ողողման,
Երիցս ըզլանջօք իւրովք թափեաց փոակահոս.
Եւ ապա ծիրանի քօղով ըզջուրսըն սըրբեալ,
Ած ըզհերսն, և անդրէն բարբառեցաւ զայսոսիկ.
«Ի մոռաց արկեալ զԱստուած, ըզնորա հետսըն պաշ-
(տեմք.

Մի՛ ընաւ ինձ Ապոլոն տացէ ըզՇնորհս հայհոյել.
Ոչ զՆէրէ կենսացընցուղ յերկնակառոյցն օթեան,
Ոչ ըզկապարճըս Սիրոյ, ոչ ըզկամարն Իռիսի.
Եւ ոչ մանաւանդ զպայծառ գօտին Աստղկան,
Որ 'ի հանդոյց սիրատենչակ ըզհամագոյս կաշկանդէ.
Ոչ ըզկոռնոս յաւերժական և կամ ըզմեծն Արամազդ.
Ոչ զերկնից կամ զերկրի, զօդոց աստուածս համօրէն.



Նակքս համայն բնակեալք յՈլիմպ և կամ 'ի կայս Եղի-
(սեայ,
Աստուծոյ են պատկեր, ստուածարեալ առ 'ի մէնջ.
Կամ անուան իւրոյ տուք՝ 'ի համօրոյս քանդակեալք.
Կամ ըստուեր 'ի վերայ օդոյս արկեալ յԱստուծոյ։
Ցայս զըրոշմ աստուածեղէն ըզնոսա միտք իմ պաշտեն.
Որպէս զայգն ողջունելով արեգական տամք ողջոյն.
Եւ թերևս ամենայն հնարեալ աստուածքս այսոքիկ,
Տարտարոսն և երկին երգարանեալք 'ի կիթառ,
Զիցեն սոսկ անըրջական ցընորք մըտաց հանճարոյ,
Այլ պայծառ աստիճանք անծայրափակն այն սանդղոյ,
Որ յէից սըփռելոց ընդ լայնատիեզերս
Որոշեալ հասանէ զամենազան բոլոր ստեղծ։
Գուցէ արդարև յանբաւութեան անդ տարած
Ծաւալեալ կայ հոգի 'ի բնաւս համայն որ շարժին.
Եւ ստեղծք լուսապայծառք ըզմեր զըլխովքըս սըփ-
(ռեալք՝
Կենդանի արեգակունք իցեն և բոցք կենսակիրք.
Կամ բաժնեալ Ովկիան ըզսաստանեալ իւր ափունս,
Մաղնչող ալեօքըն թաւալէ ըզզայրագին իմն հոգի.
Եւ կամ սիւքն անուշաբոյր օդոց թռուցեալ յերկնից ջինջ,
Է շունչ գեղածըփեալ 'ի թևս հողմոց զեփիւռին.
Կամ թէ ափն՝ է իբրև զակն ամենափիւռ լուսարձակ.
Իսկ գիշեր, գեղ պաշտելի, զարտեանամբք ածեալ քօղ.
Եւ յերկինս, 'ի յերկրի և յընդհանուրս համօրէն
Մըտաւոր կամ կենսակիր և կամ աստուած է համայն։

«Այլ ձայնիս նըւաղելոյ հաւատացէք, սիրելիք.
Անդրագոյն քան զաստուածս, յոր զօրէն աչքս հատանել,
Գըտանի 'ի համօրոյս և 'ի ներքին խորս երկնից
Իմն ինչ այնպիսի խորհըրդաւոր և մըթին,
Զոր հարկն և զոր միտք միանգամայն պահանջեն,
Եւ զոր տեսանեն միայն հաւատք, ակն հոգւոյս.
Յաւէժակից ժամանակաց և ամենայն յաւիտեանց.
Մեծ՝ հանգոյն անբաւութեան, միայն՝ հանգէտ միու-
(թեան։
Զանկանի ընդ անուամբ և զգայութեանցս 'ի ներքոյ.
Գոյութեանն անբաւութիւն՝ առաջին ձիրք են նորա։

Թէ 'ի վայրս, 'ի ժամանակս, երէկ, վաղն և այսօր
Իջանեմք և վերելերիմք, միշտ առ նա ինքն հասանեմք:
Ամենայն զոր տեսանէք՝ կարողութիւնն է անրաւ.
Զոր խորհիմքս՝ ըմբռնելի իւր էութիւնն է համայն.
Զօրութիւն, սէր, ճշմարտութիւն, հաստիչ բոլոր բա-
(րութեանց,
Է նա իմ և միայնն աստուած ձերոցդ աստուածոց »..:

« — Իսկ ըղձալին, ասէ Կեբիս, ո՞վ որ բաւեղծ: — Զարու-
(թիւն.
Մարդկան յանցաւորաց արժանահաս պատուհաս,
Զարիք և օրհաս յապականեալ յայս երկիր
Ի նիւթն աւուր ծընան. Տէր ոչ գիտէ ըզնոսա:
Հրապոյրք աղխաբեր, կամ մեղսասէր տենչից հուր
Առ նիւթն ըզհոգին ձըգեալ երբեմն հակամէտ,
Եւ կամ մանաւանդ կեանքն հըզօրագոյն հանգուցիւք
Ասեէն պարաւանդեալ զըզգայութիւնս ընդ մըտաց,
Եւ զանսուրբ ազդեալ սէր միանգամայն յերկոսեան,
Մեծ գաղտնիք խորհրդոյ շաղկապեցին ըզնոսա:
Ցոսկալի այն զուգութիւնն՝ է չարն ինքնին, զոր մահն
(իսկ,
Դարմանն և պատուհաս, հազիւ կարող է քակտել:
Այլ 'ի հուսկ 'ի պահուն, յոր ըսպառի շաղկապդ այդ,
Ի վերայ անարգ նիւթոյն անդրէն հոգին տիրացեալ,
Սաւառնի ճառագայթիւք անմահութեան նըշուլից
Յաշխարհն երանութեան և խոկալեա ճըշմարտին »:

« — Գիտիցեմ ըզճանապարհ աներևոյթ աշխարհին,
Ասէ Կեբիս. դիւրամատոյց ուրեմն աչաց քոց լիցէ:
— Սիրելք, մերձենամ յայն. և 'ի տեսիլ այնորիկ....
— Զի՞նչ են պէտք, ասէ Փեդոն: — Անարատ կեանք և
(վախճան:

« Ցանմատոյցն 'ի մարդկանէ տարածութեան ուրեք կայս,
Ընդ երկինս, և թերևս ուրանօր կամքս 'ի տեղիս՝
Գոյ միւս իմն այլ աշխարհ, Եղիսեան վայրք կամ երկին,
Ընդ որ ոչ ընթանան երկայն առուք մեղսահոսք,
Ուր անձինք բարեգործաց՝ միայն յԱստուած ծարաւիք.



Ոչ երբեք խոտախանան անապական յաւերժիւ.
Այլ բաւուերք սրբագումարք և դասք ոգւոցն անմահից
Ըզնուիրեալ մարմնոց իւրեանց երթան ըզվարձս ընդու-
(նել:
Ոչ Տեմպէ ալխարանսին և ոչ Մենալ զուարթադեղ,
Ի շընչոյ առաւօտին անոյշ բուրմամբք զուարճալից.
Ոչ հովիտք Հեմոսի, ոչ ուռճազարդ դարևանդք,
Ըզմայլեալք 'ի վըտակացն Եւրոտասայ մըրմընջից.
Նա և ոչ ցանկալին այն քերդողաց իսկ երկիր,
Ուր ուղևորն ոչ ևս յիշէ ըզբնիկ աշխարհն հայրենի,
Դեռ չունին հաւասարել երանաւէտ կայանին,
Ուր ակն Աստուծոյ լինի հոգւոց լուսատու,
Եւ ոչ լոյսն աստուածեղէն երբեք ցընդի ընդ խաւար.
Ուր շընչոյ տուրևառ՝ կենդանութիւնն է և սէր.
Ուր մարմինք անմահականք, կամ նորածնեալք անդա-
(դար,
Ընձեռեն զայլ ըզգայութիւնս՝ այլոց հեշտից 'ի վայելս:
— Զի՞նչ. մարմի՞նք 'ի յերկինս. 'ի միասի՞ն մահ և կեանք՝
— Այո, մարմինք փոխակերպեալք, հոգւոյն իւրեանց
(փառազարդք:
Հոգին՝ 'ի համդերձանս աստուածահրաշ ըզգեստուն,
Հաւաքէ ընդ տիեզերս ըզտարերացըն ծաղկունս.
Ամենայն որ սըրբագոյն 'ի նիւթն, 'ի կեանս ինչ կայցէ,
Լուսոյն քաղցրայնոյ թափանցական ճառագայթք,
Ցօղմունք երփնազարդեալք գունապաճոյճ երանգօք,
Բուրմունք, զոր 'ի ծոցոյ ծաղկանց բառնայ երեկոյ.
Մըրմունջք քաղցրաբարբառք, զոր տարփաենչըն Զե-
(փիւռ.
Ի խոր գիշերի քաղէ յալեացն հեծութեանց.
Զուր բոցոյն 'ի ծալ ծաւալ կապուտագոյն ոսկեփունջ.
Առաւօտք բիւրեղեայք վտակախաղացք յերկին ջինջ.
Ծիրանին, յոր ներկանել սիրէ զիւր քօղն արշալոյս,
Եւ գողդոջ աստեղաց խաղաղաւէտ ճառագայթք,
Ցօրինեալ համանգամայն յարմարութիւն միաձայն՝
Գան խառնին ընդ մատամբքն և ըզմարմինն յարդարեն:
Իսկ հոգին, որ յերկրի զոլով երբեմըն գերի,
Ապըստամբ ըզգայութեանցն այնուհետև յաղթական,
Յաշխարհն ըզգայութեանց թագաւորէ արդ փառօք,
Զորս յաւէտ բազմապատկեալ առ 'ի վայելս անվախճան,

Ըզվայրս , ըզժամանակս և զկեանս առնէ խաղալիկ :
« Մերթ 'ի գնալ ամբարձաթռիչ յոր հրաւիրեն իղձք ըղնա ,
Ախորժէ ըզզեփիւռին թեւովք սփռել ըզբուրմունս ,
Ի շող ծիածանի սողոսկ 'ներկեալ ըզնոսին .
Եւ յերկնից 'ի տարտարոսն , յարեւելից մինչ 'ի մուտս
Իբր ըզմեղու թափառական յամենայն վայրս ընթանայ՝
Ի գիւտ և 'ի համբոյր գործոց ձեռացն Աստուծոյ .
Եւ մերթ յընձեռեալն յարշալուսոյն 'ի պերճ կառս
Լըծանէ զերիվար եռանդնալից փոթորկեալ ,
Եւ 'ի վառեալն անդաստական բոցովք չըքնաղ անդ ամայս
Ի խընդիր վեհիցն ազգաց , երբեմն ինքեան սիրելեաց ,
Յարեգակն յարեգակնէ , յարփեաց յարփիս համօրէն
Ընդ հոգւոյն տարփելւոյ սաւառնելով լեալ անհետ ,
Եւ անցեալ ընդ լայնարձակ շըրջանս անբաւ միջոցին ,
Ի գիրկս Աստուծոյ գըտանէ զինքն յարաժամ :

« Հոգին զերկնակենցաղ բնութիւնն անեղծ միշտ պահէ ,
Առանց առնելոյ զանբիծ սընունդն 'ի մարմնոյ .
Ոչ ծարեալն 'ի բաժակէն Նեկտայ անոյշ ըմպելին ,
Ոչ քաղցրախորժակ ծաղկանց բուրումն հողմավար ,
Եւ ոչ 'ի պտուղ 'նորին հեղեալն անապակ
Սնուցանել կարեն զհոգին , որոյ խորհուրդք են կեանք իւր ,
Եւ ըղձից կատարումն և սէր և յոյզք սըրտալիրք ,
Անմահ էութեանն անմահական կերակուրք :
Զըքնաղ պըտղովքս համապազոր բազմացելովք 'ի յերկինս՝
Ըզկեանսն յաւիտեան յարակայեալ անվըրթար ,
Կարօղ է մըշտընջեան անանց սիրոյն զօրութեամբ
Յաւելուլ զէութիւնն և ստեղծագործ իսկ լինել :

« Քանզի միտքն են բեղնաւոր ոչ ինչ ընդհատ 'ի մարմնոյ :
Շատ է իղձ մի միայն 'ի լնուլ զաշխարհ մի ողջոյն .
Եւ որպէս ձայնի հընչումն յարձագանգաց զանչելով
Անդադար բազմապատկեալ յանբաւ միջոցն ընթանայ .
Կամ որպէս վաղանցուկ կայծակն հըրոյն ծաւալեալ ,
Ի սեղանն արծարծանէ զանծախականն անշէջ բոց .



Այսպունակ հոգիքն անբիծք յարաձըգեալք առ իրեարս
Եւ սերտիւ տոգորեալք արարչականըն սիրով ,
Խընդրեն զիրեարս , և ընդ միմեանս յանբաւութեան անդ խառնեալք ,
Յաւերժ շաղկապմամբ բեղնաւորին սիրաբար .
Եւ լըցեալ ըզսահմանս անմարդաձայն աստեղաց ,
Ըզսերունդս ազգաց իւրեանց յերկարաձգեն 'ի յերկինս :
Ո՛վ սէր երկնահրաշ , եռանդըն սուրբ , անբիծ բոց .
Համբոյրք , յոր հոգին անդարձ խառնի ընդ հոգւոյն .
Յոր տարփումն անանցական , և սիրուն զեղ անսպառ՝
Արձակեն զուգախառնեալք զանոյշ մըրմունջ քաղցրութեան :
Թէ իշխեցեմ . . » : Այլ աւանիկ ընդ կամարաւն հընչեաց ձայն .
Իմաստունն ըզխօսսն հատեալ՝ մատուցանէ ունկն հանդարտ .
Եւ մեր ամենեցուն 'ի մուտըս կոյս դառնան աչք .
Աւաղ , 'ի յերկնից փախըստական երթայր սիւ :

Կայր զաչըն դարձուցեալ Մեսսանիցն բազասեակ ,
Եւ պըղնձի բաժակաւն ըզգեղն առ նա կարկառէր :
Զոր Սոկրատ ընկալաւ անայլայլակ իւր դիմօք ,
Եւ զերդ ձօն 'նուիրական վերացուցեալ 'ի ձեռս իւր ,
Ոչ ըզբանն ընկըսեալս հատանելով ինչ բընաւ ,
Մինչ չև դատարկեալ զայն՝ լռացոյց զիմաստ իւր ողջոյն :

Ի կոչս անդ բոլորչիս լայնատարած բաժակին ,
Յորոյ 'ի ծոցոյն օրհաս միայն կայլակէր ,
Զուլեալ էր ճարտարին 'ի շունչ բոցոյ կայծականց՝
Ըզգիպուած կենաց փոխքեայ , որ 'նըշանակն է հոգւոյ .
Եւ յերս քաղցրագոյն յանմահութեան 'ի խորհուրդ ,
Դըրոշմ քանդակագործ փըռակրեայ թիթեռըն թեթև
Ընկըղմեալ ըզծարաւի շուրթն 'ի ծորանսըն մահու ,
Թեւովքըն պարզելովք կազմէր զունկունս անօթոյն :
Փոխքէ , 'ի ծնողաց իւրոց Սիրոյն 'նուիրեալ ,
Յառաջ քան զարշալոյս թողեալ ըզպերճն օթեւան ,
Եւ պատեալ շուրջանակի յուղարկաւոր բազմաւք ,
Երթայր փորձել որպէս ըզմահ զաստուածեղէնն հարսանիս .

Ապա նըստեալ, ճակատն 'ի ծունկս, արտասուալից, մե-
(նաւոր,

Ցաւուր ամայութեան սպասեալ մընայր ամուսնոյն.
Այլ յողդողդըն Զեփիւռ ընդ վիշտ նորին կարեկից,
Հանգոյն երկնառաք աստուածայնոյ բաղձանաց՝
Հառաչմամբ հեծութեան սըրբեալ զաչացն արտասուս,
Ըզնիրհեալն 'ի ծոցին բարձեալ տանէր 'ի յերկինս:
Ըզճակատըն գեղանի զուսովք նորին խոնարհեալ,
Զերկայն հերսն ընծայէր 'ի քաղցր համբոյրս Եւըլեայ.
Եւ Զեփիւռ ընդ խըռով չըքնաղ բեռամբըն ճընշեալ,
Բազկօքն յօրինէր նըմին որրան սիրային,
Եւ 'ի ծիգ արտեւանունան հըպեալ շընչով բոցակէզ,
Աւանդէր յանկամս առ Սէր, նախանձելով ընդ նըմա:

Ահա Սէր խանդաղակաթ 'ի հայլ վարդից ընկողնեալ
Ունէր գըրկաւլինդ ըզգողգոջունըն՝ փոքրէ,
Որ զայն երկիւղին ոչ կարացեալ հանդուրժել,
Ընդունէր ըզհամբոյրսն և տալ չիշխէր փոխանակ.
Զի վեսայն երկնաճեմ պատրեալ ըզսէր իւր քաղցրիկ,
Ի սուրբ անկողնոցն ընդ տըւընջեան փախչէր միշտ:

Անդուստ առ կարօտ անձկոյն գաղտուկ զարթուցեալ,
Եւ 'ի քօղոյն գիշերայնոյ մերկ հոլանեալ կիսովին,
Ի միում ձեռին կանթեղն և 'ի միւսումըն դաշոյն,
փոքրէ, աւաղ, ակնարկութեամբ լըկով սիրոյն դիմա-
(գրաւ,

Ցամուսնոյն նիրհեցելոյ 'ի լըսելոյն դողալով,
խոնարհեալ յանկողինն և յոտն 'ի մատն առ 'ի կախ,
ԸզՍէր ճանաչէր, և յանկարծոյն բառնայր ձայն,
Եւ կանթեղն 'ի ձեռքին իւրում սարսեալ երերայ:

Այլ սակայն բոցակէզ իւղոյն կաթիլ մի գեղուն՝
Զոր բախտիւ բերեալ արտաքս 'ի վայրահակ կանթեղէն,
Տարփելւոյն, որ կայրն 'ի քուն, կաթէր 'ի լանջս հոլանի.
Յայնժամ Սէրն անհամբեր՝ ըսթափելով կէս 'ի կէս,
Զաչս յառեալ մերթ 'ի դաշոյնն և մերթ 'ի չիթն ակ-
(նարկեր...

Եւ 'ի վեր 'ի կամարս երկնից խուսէր զայրագին:



Նըշանակ ըսպառնական տարապայման բաղձանաց,
Որք զաստուածս անարգեալ, յոյժ մօտ հային 'ի նոսա:

Այնուհետև կոյսն ընդ երկիր թափառական մոլորեալ,
Ըզմանուկ տարփելին և ոչ գաղէտ իւր ողբայր.
Բայց Սէր 'ի վախճանի ընդ արտասուսն ողորմեալ,
Ներէր սըխալանացն, և երջանիկըն փոքրէ
Յերկնաւոր փեսայէն յափըշտակեալ յՈլիմպոս,
Ի շըրթունս աստուածոյն ըմպելով զուղխըս կենաց,
Յառաջեալ ընթանայր երկիւղախառն ընդ երկինս.
Այսպէս հոգին աստուածարեալ առաքինի լաւութեամբ,
Դառնայ զոյգ ընդ աստուածոց թագաւորել յՈլիմպոս:

Իսկ Սոկրատ զըմպանակն ամբառնալով 'ի ձեռքին,
« Բեր նախ մատուսցուք տերանց մարդկան 'ի նըւէր
Զերջանիկ երախայրիս յաւէժ կենացն անմահից ».
Ասաց, և ըզբաժակըն խոնարհեալ ընդ երկիր,
Որպէս այն թէ խնայելով ընդ օշարակ իմն ազնիւ,
Կաթիլս երկակիս միայն եհեղ առ աստուածս.
Եւ 'ի շըրթունսըն ծարաւիս մերձեցուցեալ զըմպելին,
Դատարկեաց զայն տակաւ անայլայլակ երեսօք.
Զերդ այր բազմական, չև 'ի կոչնոցն յարուցեալ,
Ի բաժակն ոսկեղէն հեղու զգինւոյն մընացուած.
Եւ յետս քաղցրութիւն վերջնոյ հիւթոյն ճաշակաց՝
Հակեալ զայն մեղմակի, ըմպէ կաթիլ առ կաթիլ:
Եւ ապա 'ի մահիճ մահուն հանդարտ տարածեալ,
Իսկ և իսկ զըսկըսեալ խօսիցն եհար բուռն անդրէն.

« Յաստուածս յուսացեալ, հաւատասցուք 'ի հոգիս,
Եւ ըզհուր բոցոյ սիրոյն 'ի սիրտըս մեր սընուսցուք:
Զաստուածս և ըզմարդիկ միաւորեալ զօդէ սէր.
Իսկ ցաւ կամ երկիւղ զնոցա սեղանոյն պըղծեն:
Ի զալ անոյշն ազդեցութեան ազատութեանըս մերոյ,
Ասացուք, սիրելիք, ըզթախիծս յուսոյն առ նոսա:
Մի լիցին տըխրական ողջոյնք, կառանչ և լալիւն:
Ծաղկամբք պըսակեն մարդիկ զըսպանդ զոհական.
Ոն սիրով և խընդութեամբ պսակազարդեալ հոգիս մեր,
Ընդ առաջ նոցին գնասցէ իւր հարսանեացն 'ի հանդէս.

Այսպէս են հիւսք ծաղկանց և հեշտ բուրմունք ցանկաւէք,
Բարբառք և աղերսիք և երանակք քաղցրալուրք,
Յորս հոգին հրաւիրեալ 'ի գերագոյն այն կոչումն,
Զի երթեալ առ աստուածն՝ ինքնին պարտի զուարճանալ:

« Ըղձակաթս աչիւ գեղնեալս ուրեմն 'ի վեր ամբարձէք.
Մի ինձ հարցանէք թէ իցէ հարկ թաղել զիս.
Զոր իւղ պարտ իցէ օծանել յոր իմ երբեմն էր մարմին.
Յոր վայր, կամ յո՞ր սափոր զածիւնս արժան է պահել:
Զի՞նչ ձեզ և ինձ իցեն ինչ պէտք եթէ հանդերձս այս գրծուծ

Լինիցի բոցոյ հըրոյն և կամ որդանց կերակուր:
Թող փոշին այն ցըրտին, երբեմն ընդ իս միակից,
Ընդ ալիս կամ 'ի տեղւոջ գըլխապարտաց ցըրուեսցի:
Այս մարմին, անարգ խառնուրդ բազմադիմի տարերաց,
Իբրև զիս եղիցի որպէս ալեակ մի ծովուց,
կամ տերև անտառաց տարուբերեալ հողմավար,
կամ թէ կաւ հողոյ զանգեալ 'ի կերպարանըս մարդոյ,
կամ հուր խարուկաց ընդ օդս 'ի վեր ծաւալեալ,
Եւ կամ չուղաց ձերոց յողդողդ աւազ կոխան ընդ ոտիւք:

« Այլ 'ի մեկնելս յապախտաւոր երկրէ աստի թողում ես
Ըզկենաց Սոկրատայ զազնուագոյն մնացուած.
Ըզմտացս հանճար առցէ Պղատոն. դուք բընաւք՝ զիմ ուղղութիւնս.

Ըզհոգիս՝ գիրն արդարադատք. իսկ Մելիտոս՝ ըզկեանս իմ.
Որպէս չուն պատառօղ, որ առ սեմովքն հաջիցէ,
Ի վախճան խրախճանացն ընդունի զիւրըն ճարակ..»

Զերդ տըխուր հեծութեան մըրմունջ թիւոյն և ալեաց
Ընդ ձայն նաւաստեացն երգոց խառնի 'ի ծովու,
Ի ժամ բարբառելոյ իւրոյ թռանչ թախծալից
Ըզսեմովք բնակարանին լինէր նըմին ձայնակից.
Ի խընդիր ամուսնոյն, աւա՜ղ, եկեալ գայր Միրտով,
Դարձ առ մեզ արարեալ 'ի ժամ վերջնոյ ողջունին:
Ցիմարեալ ապշութեամբ յողդողդ քայլիւք դանդաչէր.
Եւ գծալ 'ի ծալ ըզգեստնաքարշ արկանելեացըն կախեալք



Զոյգ տըղայք բռկանիք գընալով մերձ առ նըմին,
Խուճապող քայլիցն իւրոց հետևէին գայթ 'ի գայթ:
Երկայն հերացըն գիսակք սըրբէր զաչացն արտասուս,
Ոյց խոր հետք էին եղծեալ ըզծնօրհս անձինըն գեղոյ,
Եւ մահ 'ի դալուկն ըզկերպարանսն համակէր.
Որպէս այն թէ ցաւն անզօր ընդ անցանել անդ իւրում,
Սպիկար 'ի հարկանել ըզմեծ ոգին Սոկրատայ,
Ըզկինն անարգեալ էր, պատկառելով 'ի մարդոյն:
Ի նորին տեսլենէն ըմբռնեալ յահ և 'ի սէր,
Խանդակաթ մեծարանօք յարտօսր հառեալ լայր ըզնա:
Այգունակ 'ի տօնըս գից, զոր աշխարհէ Կիւթերէ,
Ըզմարմնովն Ադոնիսի կականաւոր քըրմուհին՝
Ատըզկանն աստուածեղէն ցաւոց եղեալ վըշտակից,
Սըրտակաթ ջեռուցանէ ըզվէմն իւրովք արտասուօք.
Եւ 'ի նա պատկառանօք յարեալ ըզչուրթն անշըշունջ,
Թըւի ըզգեղանին պաշտել զաստուած՝ զոր ողբայ:
Սոկրատ ըզմանկունսն 'ի մէջ բազկացն ընկալեալ,
Համբուրեաց զայտսըն թացեալս, և խօսեցաւ զաշն 'ի ձայն.

Եւ տեսաք զի արտօսր, որ հուսկ վերջինն էր կաթիլ,
Ի խոնարհ յոնիցն իջեալ յարտևանունսըն խաղաց.
Եւ ապա նուաղեալ բազկօք զորդեակսն առ գիսն ուղերձեալ,

« Սոցա հայր եղէ յերկրի, դուք յերկինս հայր էք նոցուն.
Ես մեռանիմ, դուք կենդանիքդ ըզսղայ տխովքն հըսկեցէք.

Ըզդոսա, բարերար դիք, վերին խնամոցդ աւանդեմ..»:

Այլ ահա մահաղեղն ընդ երակունս իւր անցեալ,
Զուխս արեանըն պաղելոյ կապեալ կառէր յընթացից.
Եւ անդէն 'ի սիրտըն կայս իւր ըզվըտակ ցամաքեալ
Կեանքն և ջերմութիւն վերըներէին քայլ առ քայլ.
Իսկ անդամքն ընդարմացեալ, վատակարեկք և տըժգոյնք՝

Ի դալուկն հարկանէին իբրև ըզվէմ Պարոսի.
Զո՞ր փեղոն զախիւք նորին փարեալ խոնարհ գըրկապինդ,

Վառ շընչոմն ըզնոցուն ջեռուցանէր ցըրտութիւն.
Ընդ մատամբք մերովք ճակատն և ոտք և ձեռք պաղէին.

Եւ մնայր մեզ միայն ոգին և ձայն բարբառոյն։
Ջերդ մինչ արձանն աստուածեղէն, ուստ ել 'ի վեր Գա-
(լաթէ,

Առեալ յՈլիմպեայ անմահական իմն ոգի,
Եւ 'ի ձայն տարփաւորին իջեալ 'ի վէմըն կըճեայ,
Բաբախել տայ սըրտին 'ի թունդ ազդմանն առաջնոյ.
Եւ բացեալ զարտեւանունսն առ դեռածին լուսոյն փայլ
Զէ նա վէմ այնուհետև, այլ և ոչ կին տակաւին։

Արդեօք տըխրատեսիլ վայելչութիւն էր մահուն,
Թէ յաւերժ անմահութեանն ընկըզըմնալոյս ճառագայթ.
Այլ սակայն ըսքանչելի գեղով ճակատ իւր փայլեալ
Նըշողէր զերդ արշալոյս 'ի սար բարձանց Գիդիմեայ.
Եւ մեր աչք՝ ողջունիցն իւրոց վերջնոց 'ի խընդիր,
Դարձեալք յետս առ ահի, թուէին զատուած որ դի-
(տել։

Իր երբեք զի ակն յերկինս՝ այնպէս լուսիկ անդաձէր.
Եւ ապա ըզպերճ և սուրբ բանիցն հոսանըս պարզեալ,
Իբրև զայր, որ արբեցեալ 'ի քաղցր հիւթոյ ողկուզաց,
Զանըսպառ խօսիցն ըզթելս հատանիցէ անդադար.
Կամ իբր Որփեւս ստանդական 'ի մըթին կայս խաւարի,
Հատակտուր կիսակատար ձայնիւ խօսէր առ ըստուերս։

«Նոճիքդ պըկադեմեանք, կորացարու՛ք, ասէր նա.
Կորացարու՛ք և ողբս առէք. ոչ ևս ըզնա տեսջիք այլ.
Ալիքն 'ի բախել իւրեանց 'ի վէմ Պիրէայ,
Արկցեն ընդ փըրփրոյն լալահառաչ կոծոյ ձայն։
Կոչեսցին ըզնա աստուածք. մինթէ զայդ ո՞չ գիտիցէք...։
Այլ յո՞ մըտերիմքն իւր թախծալիցք գընայցեն։
Ահա Պղատոն, ահա Կեբէս և ամուսինն և որդեակք.
Աւանիկ և սիրելին Փեդոն, զաւակն հոգեկան.
Որք գընան գաղտագողի քայլիւք 'ի լոյս Փերոսի
Արտասուել 'ի տապան ուրեք յաչաց մեկուսի.
Եւ խոնարհեալք ըզաափորովս, ըսպասէին իմն անդէն
Զի սիրելին առ նոսա ձայնն եւցէ դարձեալ 'ի մոխրոյն։
Այո, խօսեցայց առ սիրելիսդ իբր յայնժամ՝
Երբ զանկողնովըս խոնարհեալք ցանկանայիք բարբա-
(ռոյս։

Այլ ժամն այն հեռացաւ յոյժ. և քանի սուղ ինչ միջոց



Ընդ իս և ընդ նոսա, ով մեծդ աստուածք, արկ խըտրոց։
Դուք, որ այդքան հեռի ըզքայլեցս հետըս խընդրէք,
Բարձէք զաչս և տեսէք... այլ ոչ ըզքանքս իմ լսեն։
Հի՞մ սուգդ այդ, և ընդէ՞ր ողողանիս յարտասուս.
Վարսագեղ դեղձան ծամից քոց խնայեսջիր գէթ, Միր-
(տով,

Եւ սըրբեալ զարտասուս յաչացդ՝ առ իս դարձուսջիր.
Միրտով, Պղատոն, Կեբէս սիրունք... թէ ձեզ հընար էր
(գիտել..։

«Լըռեսցեն պատգամաց ձայնք. անկցին բարբառք ի-
(մաստնոց.
Փախիցեն ընդունայն փայլք իմաստութեանն առաջնոց.
Պատիր պայծառութեամբ գունագեղեալ ամպոց կոյտք՝
Ցերեւաց ճըշմարտութեանն անհետ եղեալ ցընդեսցին։
Անցաւեք... մի և երկու, երեք... և չորս ևս այլ դարս,
Եւ ճառագայթքն աստուածեղէնք յանապատաց ընթա-
(ցեալք՝
Ի փայլ անմահական ըզախեղերըս լըցցեն։
Դուք, ըստուերքդ Աստուծոյ, որ քօղարկէք ըզդէմս իւր,
Ուրուականք ըստապատիլք պաշտեալք նորին փոխա-
(նակ.
Շընչաւոր մահկանացու աստուածք մարմնոյ և արեան.
Մոլութիւնք աստուածարեալք 'ի վերայ պիղծ սեղանոց,
Հերմէս ոսկեփետուր, աստուածուհիդ Կիւթերայ,
Որում գողք և շընացողք պաշտօն տանին անպատիժ.
Մեծ և փոքր համօրէն Արամազդայ զարմին ճեմք,
Որ զեղեալք ապականէք ըզջուր և զօդ և զերկիր,
Դեռ սակաւ մի ժամանակ, և ձեր ամբոխ զերապանծ
ՅՈլիմպեայ խարխալեսցի ընդ ըսութեան կործանեալ,
Տեղի տացէ միոյն Սըրբոյ և բոլորիցն Աստուծոյ.
Նա է Տէր, զոր սոսկ պաշտեմ, և ում ըզնաւ չէք խորան..։

«Որպիսի գաղտնիք պարզեալք. յարմարութիւն ահա-
(գին...
Սակայն ո՞վ ուրեմն էիր, խորհըրդաւոր դու հոգի,
Դու, որ միշտ յաչաց իմոց ըզկերպարանըդ ծածկեալ,
Զայնիւդ առաջնորդեալ ցըդրուէս երկնից ածեր զիս.
Որ առ իս ընկերելով իբրև ըզհաւ սիրասէր,

Քաղցրաշունչ թևոցդ հողմով դեռ ըղձակաթ իմ գր-
(գուես:

Ապրո՞ն որ իցես յաստուածակոխ կայենից,
Թէ յըղեալ 'ի Սիրոյն առ իս Հերմէս գեղադէմ.
Ջաղե՞ղն, ըզքնա՞ր, թէ զքարոզակըն տանիցիս զերջա-
(նիկ,

կամ թէ պարզ իմացուած մըտաց իցես, ո՛ն խօսեաց:
Ո՛հ եկ՝ ով որ և իցես, ոգի, աստուած և կամ մարդ.
Մինչև ընկալեալ զանդարձական իմ ողջոյն,
Թոյլ արա զի յայտնեցից կամ ծանուցեալ գիտացից
Ըզբարեկամն՝ որ զիս սիրեաց դեռ չև եկեալ 'ի ծընունդ:
Գէթ կարիցեմ՝ 'ի կատարած ճանապարհիս ժամանեալ,
Ունել շնորհս առաջնորդիս և լալ ձեռացն 'ի վերայ:
Ե՛լ արտաքս 'ի պերճ քողոյդ, որ զքեզ ծածկէ տակա-
(ւին..

Մերձ մատիր... զի՞նչ տեսանեմ. ով պաշտեցեալդ յի-
(նէն Բան,

Ճառագայթ յաւետակից, զի՞նքդ իսկ ըզքե՞զ տեսանեմ..
Ա՛րկ ըզքողդ, ապա թէ ոչ ըզկըրկին մահ մեռանիմ:...

« Երանի որոց ծընցին 'ի սըրբափայլն անդ աշխարհ,
Զոր ալիք Երիթրեայ պատկառելով համբուրեն.
Որք 'ի ջինջ օլորտս իւրեանց տեսանիցեն առաջինք
Զաստղ իմաստութեան ընդ առաւօտըս ծագեալ:
Զաչըս ձեր ընդ արևելըս դարձուցէք, սիրելիք.
Եկեսցէ ճըշմարտութիւն՝ ուստի մեզ լոյսն հասանէ:
Այլ ո՞վ ածիցէ զայն... դու ինքն, ով Բան թանձրա-
(ցեալ.

Դու, զոր աչք իմ տեսին ժամանակացն 'ի միջոյ.
Դու, որ փայլ պայծառութեան 'ի հանդերձեալըն ցո-
(լեալ,

Գայ զիս լուսաւորել կանխաւ 'ի ծայրըս կենաց:
Դու եկեալ և կեցեալ, զարժանի մահ մեռանիս.
Զի ամենայն ճըշմարտութեան՝ մահն հատուցումն է
(փորձուց:

Այլ քոյին կիսամեռ բարբառդ յաշխարհս հընչեցեալ,
Գոնեա ոչ հանգոյն իմոյս կորըստական եղիցի:
Զայն եկեալ 'ի յերկնից՝ ոչ ևս 'ի նոյն դառնայցէ.
Տիեզերք 'ի թըմբիր՝ քեզ կան 'ի լուր և քայլեն,



Եւ զաղանիք ճակատագրին յայտնեալ պարզին առ եր-
(կիր...

Իսկ զի՞արդ. կասկածեցի՞ ուրեմն ըզմեհ խորհրդոյդ.
Թո՛ւ խորհըրդաւոր. երրորդութիւն խորաքնին.
Երրակի միութեամբ կերպաւորեալ եռանկիւն:
Զեոց կերպարանք, ձայնք և երանգք, թիւք ինքնին,
Ամենայն ծածկեր զԱստուած, բնաւ ինչ դըրոշմն էր նո-
(րին.

Այլ յինէն 'ի վախճանի բարձան համայն պատըրուակք,
Ո՛ն միտ դիք... »: խօսէր նա. իսկ մեք ինչ ոչ լսէաք:

Սակայն շունչ հատկըլեալ հեղձամըղձուկ 'ի ծոցին,
Ապիկար 'ի յայտնութիւն մըտացն 'ի ձայն բարբառոյ,
Ի վերայ կիսաբաց շըրթանցն, աւա՜ղ, մեռանէր.
Եւ ապա զոգցես յանկարծ բաբախելով ընթանայր.
Որպէս մօտ յիջանել հասեալ յափունս հայրենիս՝
Կարապն 'ի գագարել իւրում ըզթևսըն բախէ.
Ի բազուկս անըրջոց թըռչէր 'ի քուն հանգուցեալ:
Փարեալ զմարմնով սիրեցելոյն մերոյ Կերիս քաջասիրտ՝
Ըզհոգին փախըստեայ յաչըս նորին կոչելով,
Ցնցէրս օրհասին հարցափանէր դեռ ըզնա.
Եւ ասէր. «Նընջէ՞ս դու. քո՞ն իմն արդեօք իցէ մահ »:
Իսկ նորա ժողովեալ զոյժն, և « Արթնութիւն է », ասէր:
— Փողարկեալ իցեն աչքդ 'ի մահատիպ ըստուերաց:
— Ո՛չ. տեսանեմ ըզմաքրափայլ նըշոյլ ծագեալ ընդ խա-
(ւար:

— Ո՞չ լսես զաղաղակ և զհեծութիւնս: — Ոչ ըզնա.
Այլ լսեմ զի ոսկեհուռն տաւիղք զանուն մի ձայնեն:
— Զի՞նչ ըզգաս: — Զոր ինչ ըզգայ նորածին որդն 'ի պա-
(տեանս,

Յորժամ աւանդեալ երկրի ըզմորթըն ցամաք,
Եւ զաչկունն ապիկարս 'ի լոյս այգուն փռեկեալ,
Ի շընչոյ առաւօտին պարարեալ ընդ երկինս:
— Ո՞չ ըզմեզ խաբէիր դու, ասէ առա. զի՞նչ հոգին...
— Անմահ էր հոգին. լիցի ժըմիտս այս վկայ...
— Ցելանել յանկատար երկրէս առ իմ բաղդաւս:
— Ըղձասեմ, երբ ըզմահկոյն, հոգիմն շընչոյ 'ի մեկնել:
— Եւ ուստի՞ եկեսցէ այն: — Յերկնից: — Դեռ բան մի
(միայն:

— Ո՛չ․ այլ թո՛ղ զի հոգիս սաւառնեսցի խաղաղիկ »։
Ասաց, և կափոյց զաչս ըզհուսկ վերջին զայն նըւագ,
Եւ այնպէս անբարբառ, անշունչ առ վայր մի եկաց։
Խաբուսիկ ճառագայթ կենաց յածեալ մերթ ընդ մերթ,
Նըւաղ լոյս ծիրանեփեան 'ի ամոյն ճակատն արկանէր։
Ասպատանակ յաշնանային աւուրց 'ի պարզ երեկոյ,
Ի մեկնել արեգականն յարփիական ոլորտից,
Ճառագայթ մի մնացեալ բերի արտաքս յըստուերաց,
Եւ անցեալ ներկանէ զոսկեփայլ կողս ամպոյ։
Հուսկ ուրեմն ապա թըւէր ազատագոյնըս շընչել,
Եւ յերեսն յածեցուցեալ ըզբարեժպիտ իւր ծիծաղ,
« Ա՛ռ աստուած ազատարարս, ասէ, ըզզոհ մատուցէք։
Նորօք եմ ողջ։ — Ցի՞մէ արդեօք, ասէ Կերիս։ — Ի կե-
(նաց…»
Ի շըրթանցն ապա հեղաւ մեղմիկ մըրմունջ հեծութեան,
Նըմանեալ մեղուացն Հիբլայ քաղցրածաւալ ծորանաց։
Զի՞նչ էր այն…։ Ոչ գիտեմ․ այլ մեք լըցեալք սուրբ ազդ-
(մամբ,
Ցանձինս ըզգացաք իբրև զերկրորդ իմն ոգի…։
Զերդ շուշան յերեսըս ջուրց բախմամբ թիոյն վայրան-
(կեալ,
Ըզլանջօքն հեզաբար զըլուխն հակեալ խոնարհէր․
Յօնքն երկայնք յորհասէն կափուցեալք կէս մի միայն,
Զաչօքըն թըմբրեալք անկանելով հանդարտիկ,
Ընդ խոնարհ ըստուերաւ իւրեանց թուէին, զերթ եր-
(բեմն,
Ամփոփել ըզլռութիւն, կամ ըզխորհուրդն ըքօղել։
Բարբառն ապաժամն 'ի հուսկ ճախրանս անդ իւրում,
Ըզկիսաբաց շըրթամբք իւրովք, աւա՜ղ, յածէր տակաւին․
Եւ 'ի դէմսն, ուստի կենաց ազդեցութիւնն էր մերձեալ,
Գոգցես իմն անանցական տըպաւորեալ կայր ժըպիտ։…
Զեռք նորին, պահեալ ըզձև սովորական շարժուածոյն,
Մատամբքըն ձըգեալովք ցուցանէին դեռ զերկինս։
Եւ յորժամ նորածին արշալուսոյն ակն անոյշ
Տակաւ փարատեալ զըստուերս և յերփըն գունեալ,
Զերդ փառս լուսափառ ուրեք 'ի սար բացական,
Յոսկի ներկեաց ըզմահակիր ճակատն այգուն ըստուե-
(րօք,
Թըւէր իմն եթէ Աստղիկ, ածեալ յերկնից սըգաւորս,



Գայր դարձեալ արտասուել ըզսիրելին անկենդան․
Կամ տըժգոյն ճառագայթիւ իւրով Փեբոս թախծալից
Ի ժամ գիշերի գըգուէր ըզծոց Ենդիմեայ․
Կամ իմաստնոյն երանաւէտ հոգին յերկնից 'ի բարձանց
Դարձ այսրէն արարեալ դիտէր զափունս երկրաւորս,
Եւ մարմնոյն մերկացելոյ հեռուստ եղեալ այցելու,
Ըզգեղ վայելչութեան իւրոյ սըփռէր ըզնովաւ․
Որպէս աստղ, որ 'ի խորս անամպ երկնից ընկըղմեալ,
Ըզփայլ ջինջ պատկերին սիրէ յալիս տեսանել։…
Ոչ հառաչք ըզնովաւ, ոչ ողբ լինէր լըսելի։…
Ահա այսպէս մեռաւ նա, թէ մեռանել ինչ էր այն։

# ՑԱՆԿ


Ողջոյնք հրաժեշտի առ վարժարանն Պելէյայ . . 5
Միայնութիւն . . . . . . . . . 6
Մարդն . . . . . . . . . . 8
Յէլվէր . . . . . . . . . . 16
Երեկոյ . . . . . . . . . . 18
Անմահութիւն . . . . . . . . . 20
Հովիտ . . . . . . . . . . 24
Անյուսութիւն . . . . . . . . . 26
Նախախնամութիւն առ մարդն . . . . . . 30
Յիշատակ . . . . . . . . . . 34
Տաղ . . . . . . . . . . . 37
Շուշանն 'ի նեղցին Սանթա Ռեսթիթուդայ, 'ի կղզւոջն Իսքեայ . . . . . . . . . 41
Խանդ ոգւոյ . . . . . . . . . 42
Առանձնութիւն . . . . . . . . . 45
Լիճ . . . . . . . . . . . 47
Փառք . . . . . . . . . . . 49
Գթութիւն . . . . . . . . . . 51
Ի ծնունդ դքսին Պորտոյի . . . . . . 52
Յիշատակ լճին Լեմանայ . . . . . . 56
Աղօթք . . . . . . . . . . 63
Աշերս . . . . . . . . . . 66
Հաւատք . . . . . . . . . . 67
Հանճար . . . . . . . . . . 73
Իմաստասիրութիւն . . . . . . . 77
Ծոց Պայեայ . . . . . . . . . 80
Տաճար . . . . . . . . . . 83
Հովիւ և Ձկնորս . . . . . . . . 83
Քնարերգական նուագք Սաւուղայ . . . . . 87

Ի ծաղիկ թառամեալ 'ի տնարի . . . . . . 91
Նուագ յարփին . . . . . . . . . 92
Ֆերրարա . . . . . . . . . 94
Ողջոյն հրաժեշտի . . . . . . . . 95
Աւագ շաբաթ 'ի Ռոշ Կիյեոն . . . . . . 97
Քրիստոնեայն մերձ 'ի մահ . . . . . . 99
Աստուած . . . . . . . . . 100
Աշուն . . . . . . . . . 105
Ցորեկորդ ոմն, դուստր քերդողի . . . . . 106
Սրբազան քերդութիւն . . . . . . . 107
Ծաղկունք . . . . . . . . . 115
Թռչունք . . . . . . . . . 116
Խաշխաշք . . . . . . . . . 117
Խեցին առ ծովեզեր . . . . . . . 118
Մահ Սոկրատայ . . . . . . . . 119



9621-9624

2013

Г-41